

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 4 (42)

2008 թ.

Գլխավոր խմբագիր՝  
Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրական խորհուրդ

*Խմբագրության հասցեն՝*  
ՀՀ, 0025 Երևան,  
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ  
իրավաբանական ֆակուլտետ:  
Հեռ. 55-77-92

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

*Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համաձայն  
չլինելով հեղինակների  
տեսակետներին:  
10 համակարգչային էջից ավելի  
չպատվիրված նյութերը չեն  
ընդունվում:*

Դասիչ՝ 77771  
Տպագրական 6 մամուլ  
Գրանցման թիվը՝ 798  
Տպաքանակը՝ 500  
Գինը՝ պայմանագրային  
Հանձնված է շարվածքի  
15.12.2008  
Հանձնված է տպագրության  
15.01.2009

СОЮЗ ЮРИСТОВ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО  
И  
ПРАВО**

Номер 4 (42)  
2008 г.

---

---

Главный редактор:  
Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА

**Редакционный совет**

Самвел Дилбандян -  
зам. главного редактора  
Давид Мелконян -  
ответственный секретарь  
Геворг Даниелян  
Гагик Амбарцумян  
Артур Вагаршян  
Сергей Аракелян  
Виген Кочарян

**Адрес редакции:**  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 55-77-92

6 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 15.12.2008  
Подписано к печати 15.01.2009

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

**Արթուր Վաղարշյան**

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՏԻԱՐԱՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՈՒԽՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ..... 4

**Варг Енгибарян**

ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ СОВЕРШЕНИЯ МАССОВЫХ БЕСПОРЯДКОВ..... 8

**Դավիթ Մելքոնյան**

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ..... 14

**Արթուր Ղամբարյան, Նորա Կարապետյան**

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ և ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....20

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

**Միսակ Մարկոսյան**

ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ .....26

**Տիգրան Երանոսյան**

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ .....32

**Ծովինար Ավետիսյան**

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՋԵՆԵՐԱՆ ԱՆՁԵՌՆՄԵԼԻՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ .....42

**Մարինե Օհանյան**

ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....47

**Արմինե Գառգալոյան**

ԱՐԴՅՈ՞Ք ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԶԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՀԱԲԵԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՆԵՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ .....56

**Վարդան Ավագյան**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ .....62

**Գոռ Ենգիբարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ .....69

**ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ**

**Վարդուհի Սեմերջյան**

ՖՐԱՆԶԱՅՉԻՆԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ.....76

**Նանե Ղազարյան**

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ..82

**ԳՐԱԽՈՍԱԿԱՆ**

**Տաթևիկ Դավթյան**

ՆՈՐ ԳԻՐՔ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....90

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

**ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՀԱՄԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Արթուր ՎԱՂԱՐՇՅԱՆ**

*ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. թեկն., դոցենտ*

Վերջին տարիներին կրթության ոլորտի նպատակներին հասնելու, առկա հիմնախնդիրները լուծելու համար կրթության կառավարման լիազորված մարմինները իրականացրել են բավականին աշխատանք ոլորտի իրավական ամրագրման ուղղությամբ: Դրանցից հատկապես կարևոր են «Հանրակրթության պետական կրթակարգ» և «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը»: Կարծում ենք՝ անվիճելի է այն հանգամանքը, որ այդ փաստաթղթերի մշակումը և կենսագործումը ոլորտի բարեփոխման, կայունացման, զարգացման խթաններից են: Սակայն գիտաներթոգաբանական մոտեցման պարագայում ակնհայտ աքսիոմա է ևս մեկ հանգամանք. ամեն մի համապարփակ, ամբողջական, ավարտուն կոչվելու հավակնություն ունեցող հայեցակարգ (կրթակարգ) պետք է ելնի ոչ միայն տվյալ կենկրետ ոլորտի բնույթից, առանձնահատկություններից, վիճակից, այլ նաև համամիասնական, համահասարակական իրողություններից ու հիմնախնդիրներից: Այս աքսիոմատիկ ճշմարտությունը հաշվի չառնող ցանկացած բարեփոխում դատապարտված է անհաջողության, կիսամիջոցի վերածվելու վտանգի: Կրթակարգի հեղինակները փորձել են հաշվի առնել այդ աքսիոման: Բայց մանրազնին հետազոտությունը ցույց է տալիս, որ կրթակարգի հեղինակները, տուրք տալով ավանդական մոտեցումներին, ամբողջապես չեն կարողացել փաստաթղթում արտացոլել ինչպես քա-

ղաքացիական հասարակության գլխավոր ինտեգրատիվ գործոնը, այնպես էլ արդի հայաստանյան հասարակության սոցիալական հիմնախնդիրների մեխը:

Հանրակրթությունը պետք է հենվի քաղաքացիական հասարակության հիմնական արժեքների վրա և նպաստի դրանց զարգացմանը: Ո՞րն է արդի՝ քաղաքացիական հասարակության համամիասնական, համաներթափանցող, միավորող գործոնը: Կրոնը՞: Ո՞չ: Պատմությունը՞ և գեղագիտությունը՞: Նորից ոչ: Պետականությունը և իրավունքը: Անշուշտ այո: Այս պարագան ուղղակիորեն չի արտացոլված կրթակարգում և չափորոշիչներում: Անուղակիորեն կրթակարգն ընդունում է այդ հանգամանքը<sup>1</sup>: Փաստաթղթում շեշտված է այն միտքը, որ քաղաքացիական հասարակության ձևավորման խնդիր-նպատակը պահանջում է հանրակրթության էական բարեփոխում: Այսինքն՝ կրթական բարեփոխումները նպատակամղված են Հայաստանում քաղաքացիական հասարակության և այն կազմող ազատ անհատների կայացմանը: Խնդիրն, ուրեմն, այս ընդհանուր ռազմավարական մոտեցումը մանրամասնություններին փոխանցելն էր, տեղայնացնելը:

Քաղաքացիական հասարակությունն ունի բազմաթիվ կառուցվածքային բաղադրատարրեր՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային, տեղեկատվական և այլն: Ո՞րն է ի վերջո այդ բոլոր բաղադրատարրերը միավորող, ինտեգրացնող գործոնը: Սկսած Չեզելից, Կանտից մինչև մեր օրերի մտածողները օրինակ՝ ակադեմիկոս Վ. Ներսիսյանցը՝ այդպիսի գործոն են համարում իրավունքը: Քաղաքացիական հասարակությունն իրավական, ազատական-ժողովրդավարա-

կան, ինքնակառավարվող պլյուրալիստական բաց հասարակություն է՝ կազմված ազատ անհատներից, որոնք իրականացնում են իրենց շահերը բոլորի համար հավասար և ընդհանուր իրավունքի (օրենքի) շրջանակներում: Քաղաքացիական հասարակության բջիջը ազատ անհատն է, որի համար առաջնային են ոչ թե մաթեմատիկական, աշխարհագրական գիտելիքները կամ սեռական դաստիարակությունը<sup>2</sup>, այլ իրավականությունը: Բոլոր անհատներին՝ մաթեմատիկոս, պատմաբան, քիմիկոս, կրոնավոր..., էլ չգիտեմ ինչ, միավորող համամիասնական գործոնն իրավունքն է: Չետևաբար ամեն մի մարդ պարտադիր պետք է ունենա և կրի իրավական մշակույթ, որպես սոցիալական էակ՝ լինի, նախ, իրավական կամ օժտված լինի իրավականությամբ, հետո՝ միայն որևէ ոլորտի մասնագետ: Այսինքն, նախ՝ որպես հայաստանյան քաղաքացիական հասարակության անդամ՝ քաղաքացի, հետո նոր գիտության ոլորտների մասին իմացություն ունեցող անձ: Ուրեմն կրթակարգը պետք է հաշվի առնի իրավունքի նման տոտալ ներթափանցող, ինտեգրատիվ, համամիասնական դերը և այն արտացոլի իրենում: **Եզրակացություն առաջին.** *Քանի որ քաղաքացիական հասարակության ինտեգրատիվ գործոնն իրավունքն է, նաև պետականությունը, իսկ այդ հասարակության ազատ անդամն իրավական էակ է, ապա հանրակրթության պետական կրթակարգն ուղղակիորեն պետք է խարսխվի այդ աքսիոմայի վրա և իրավական կրթությունն ու դաստիարակությունը դարձնի իր նպատակներից մեկը:*

Ո՞րն է արդի հայաստանյան հասարակության հասարակական հիմնախնդիրների հիմնախնդիրը կամ ամենատարբեր հիմնախնդիրը: Ինչքան էլ մեծ լինի նյութական-տնտեսական գործոնների դերը բարեփոխումների, անցման շրջանների, հասարակական զարգացման համար, այնուհանդերձ, անցյալ դարի և նոր հազարամյակի շեմի փորձը ցույց է տալիս մարդու իրավահոգևոր որակների կարևորությունը՝ որպես իրավակարգի և օրինականության

հիմք, հենասյուն: Անցյալ դարի վերջի հեղափոխական ռոմանտիզմը, որ հասարակական զարգացման գլխավոր երաշխիք էր համարում շուկայական տնտեսությունը և կառուցվածքային (սահմանադրական) փոփոխությունները, չարդարացրեց իրեն: Անհաջողությունների գլխավոր պատճառը «օրինականության ճգնաժամն» է, որի կախարդական շրջապատույտից չի կարողանում դուրս պոկվել մեր հասարակությունը: Օրինականության ճգնաժամը՝ որպես մեր «հիմնախնդիրների հիմնախնդիր», ի չիք է դարձնում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում իրականացվող բարեփոխումները, նսեմացնում է հաջողություններն ու հաղթանակները: Սոցիալական առկա վիճակը նպաստում է զանգվածային իրավական նիհիլիզմի դրսևորմանը, դրա վերարտադրությանը և բազմապատկմանը: Այդպիսի պայմաններում կառավարում են ոչ թե օրենքները, այլ մարդիկ: Օրենքները դիտարկվում են սարդոստայն, որ պետք է շրջանցել: Պարարտ հող է բացվում եսասիրական շահերի, անփութության, կամայականության, ինքնիրավչության, իշխանության ճգնաժամի համար: Իրավական նորմերի անտեսումը կարծես թե հասել է այն վերջնակետին, որից այն կողմ սկսվում է քաոսը, տարերայնությունը: Ուրեմն երկրի հաջողության և զարգացման գրավականների մեջ, կրթականի, տնտեսականի և այլնի կողքին, գլխավոր տեղն զբաղեցնում է իրավականը, իրավական կայունացումը, այսինքն՝ օրինականության ճգնաժամի հաղթահարումը: Միայն այդ ուղղությամբ գործելով կարելի է հասնել հաջողությունների քաղաքացիական հասարակության մնացած ոլորտներում: Իսկ ինչո՞վ է պայմանավորված օրինականության հասարակական ճգնաժամը: Պատասխանն աներկբա է և միանշանակ՝ իրավագիտակցության պակասով կամ դրա ցածր մակարդակով<sup>3</sup>:

Օրինականության ճգնաժամի արմատները ոչ թե ընդհանրապես կրթության կամ գիտության պակասն են, ասենք, օրինակ՝ պատմության կամ լեզվի չիմացությունը կամ վատ իմացությունը, այլ իրավական

### **ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ**

մշակույթի բացակայությունը: Իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող երկրներում սովորաբար օրինականության համատարած ճգնաժամեր չեն լինում: Ինչու՞: Որովհետև իրավագիտակցությունը կատարում է ճանաչողական, գնահատողական և կարգավորիչ գործառույթներ: Այն ձեռք չի բերվում բնականից, այլ կոփվում և դաստիարակվում է: Եվրոպական քաղաքակրթության հաջողությունները մեծապես պայմանավորված են բնակչության ավելի օրինակապատկությանը, կարգապահությանը և իրավական բարձր մշակույթով: Կարելի է լինել հանճարեղ գիտնական, բայց վատ քաղաքացի: Խնդիրն այն է, որ կրթական համակարգը դաստիարակի մախ քաղաքացի, իրավական էակ, հետո նոր միայն իմացող: Իրավունքի իմացությունը մարդու մեջ արմատավորում է որոշակի արժեքային վերաբերմունք, իսկ վերջինս շարժիչի դեր է կատարում պրակտիկ գործունեության մեջ: Իմացության, արժեքային նստվածքի և կամքի գումարման արդյունքում առաջ է գալիս նոր հոգեմտակերպային, ինտելեկտուալ-զգայական-կամային կազմավորում՝ իրավական դիրքորոշում: Իրավական դիրքորոշումն անհատի նախատրամադրվածությունն է՝ որոշակի կերպով ընկալելու և գնահատելու իրավական տեղեկությունները, գործընթացները, և պատրաստակամությունը՝ գործել արժեքային համակարգին համապատասխան: Իրավական դիրքորոշումը պետք է հասնի համոզմունքի աստիճանի, վերածվի մարդու ներքին պլանի, գործունեության ծրագրի: ***Եզրակացություն երկրորդ. արդի հայաստանյան հասարակական կյանքի ամենասուր հիմնախնդիրը օրինականության և իրավակարգի ճգնաժամն է: Այդ ճգնաժամի խորքային արմատը բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակն է, իրավական մշակույթի պակասը: Այս անվիճելի իրողության հետ պետք է հաշվի նստի ցանկացած բարեփոխման հայեցակարգ, այդ թվում և հատկապես՝ հանրային կրթակար-***

*գը:*

Իրավական նիհիլիզմը՝ որպես հասարակական քաղաքական մտածողության մակարդակ, մերժում է իրավունքի սոցիալական և անհատական արժեքները: Որպես անհատական խմբային, հասարակական գիտակցության հատկություն՝ այն դրսևորվում է տարբեր ձևերով. իրավունքի դերի և նշանակության նկատմամբ անտարբեր, անհոգ վերաբերմունք. հոռետեսական հայացքները իրավունքի հնարավորությունների մասին. լրիվ անվստահությունն իրավունքի նկատմամբ և վերջապես՝ բացասական վերաբերմունքը դրա հանդեպ: Հայաստանում կայուն իրավական նիհիլիզմի հիմնական պատճառներն են.

1. Պատմական արմատները, պետականություն չունենալը և օտարի լծի տակ գտնվելը՝ հատկապես մուսուլմանական գերիշխանության դարերում, երբ Հայաստանում թագավորել են օտարի իրավունքը, կամայականությունը և ապօրինությունները, բնակչության մեջ արմատավորվել է նեգատիվ վերաբերմունք դեպի իրավունքն ու իրավակարգը, պետականությունը: Դրան նպաստեցին նաև խորհրդային պետության ու իրավունքի տեսությունը և դրանց իրական պրակտիկան, որոնք մերժում էին համաշխարհային իրավական մշակույթի նվաճումները:

2. Անցման շրջանի դժվարությունները, անընդհատ և երկարատև բարեփոխումները, պետական իշխանության լեգիտիմացման հիմնախնդիրները և այլն:

3. Իրավական համուսուցման, կրթության և դաստիարակության ամբողջական համակարգի բացակայությունը:

Իսկ որո՞նք են հային պատմականորեն բնորոշ իրավական նիհիլիզմի հաղթահարման, իրավական բարձր մշակույթի ձևավորման ուղիները: Բազմաթիվ գործոնների ու ջանքերի կողքին առաջին տեղում կանգնած է հայեցի բարոյաիրավական դաստիարակությունը՝ պետության, նրա մարմինների, կրթական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ կորպորացիաների նպատակամղված համակարգված գործունեություն:

նը՝ ուղղված իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորմանը, ամրակայմանը, մակարդակի բարձրացմանը<sup>4</sup>: Իրավական ընդհանուր դաստիարակությունը ենթադրում է իրավական համաուսուցում, որը պետք է սկսվի հենց հանրակրթական դպրոցից և շարունակվի կրթության հետագա մակարդակներում: **Եզրակացություն էրրորդ.** Հայաստանի բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակն ունի պատմական և սոցիալական խոր ակունքներ ու պատճառներ: Բայց և այնպես, այն պետք է հաղթահարվի իրավական դաստիարակության պետական ընդհանուր համակարգի ներդրմամբ՝ կրթական բոլոր մակարդակներում և ծրագրերում<sup>5</sup>:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ քաղաքացիական հասարակության ինտեգրատիվ գործոնը իրավունքն է, իսկ այդ հասարակության ազատ անդամն իրավական էակ է, որից հետո՝ փիլիսոփա, գեղագետ, պատմաբան, մաթեմատիկոս և այլն: Վերջիններս համամիասնական որակներ չեն, զուրկ են համաներթափանցող հատկությունից, մասնավոր են և հատուկ, բայց ոչ համընդհանուր: Արդի հայաստանյան հասարակական կյանքի հիմնախնդրների հիմնախնդիրն օրինակաւորության և իրավակարգի ճգնաժամն է: Վերջինիս խորքային արմատը բնակչությանը

հատուկ իրավագիտակցության ցածր մակարդակն է և իրավական մշակույթի պակասը: Բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակի և իրավական նիհիլիզմի հաղթահարման հիմնական միջոցն իրավական համաուսուցման և համադաստիարակության պետականորեն ընդունված և նպատակամղորեն գործող համակարգի ներդրումն է: Ինչպես հանրակրթության պետական կրթակարգը, այնպես էլ մասնագիտական և բուհական կրթության համակարգը անխուսափելիորեն պետք է հաշվի նստեն նշյալ երեք արքիոմատիկ դրույթների հետ ու բարոյական-իրավական հայաստանցի մարդու ձևավորումն ու դաստիարակությունը դարձնեն կրթության գլխավոր նպատակներից մեկը: Այդ նպատակը նվաճելու միջոցն է իրավական ուսուցումը դարձնել ուսումնական առանձին բնագավառ, բովանդակային բաղադրիչ, սովորողների պատրաստվածությանը ներկայացվող առանձին ընդհանրական պահանջ: Արդյունքում իրավական դասընթացները պետք է ներառվեն կրթության պետական բոլոր տեսակի չափորոշիչներում, հենքային ուսումնական պլաններում: Սա ազգային անվտանգության կարևորագույն հիմնախնդիր է, որը պահանջում է շուտափույթ լուծում, իսկ դրա համար պետք չեն մեծ նյութական միջոցներ, այլ ընդամենը կամք և ցանկություն:

<sup>1</sup> Տե՛ս Հանրակրթության պետական կրթակարգ. Եր., «Անտարես», 2004, էջ 7:  
<sup>2</sup> Հանրակրթության պետական կրթակարգի նախագծերից մեկը սեռական դաստիարակությունը որպես հիմնահարց ներառել էր հասարակագիտություն կրթական բազավառի շրջանակներում:  
<sup>3</sup> ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, կարևորելով մշակութային, հոգևոր-բարոյական կանոնների պաշտպանությունը, որպես ազգային անվտանգության նպատակ՝ «բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը» ճանաչում է ազգային անվտանգության ներքին սպառնալիք (տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն,

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Երևան, 2007, էջ 21-22): Մնում է ներքին անվտանգության ռազմավարության նպատակների մեջ հստակ առանձնացնել այս ոլորտում գործողությունների ծրագիրը, ինչն արդեն կրթության համակարգի խնդիրներից է:  
<sup>4</sup> Հին հռոմում քաղաքացու կոչման կամ չափահատության իրավասուբյեկտության հավակնող անձինք պետք է Հռոմի իրապարակում որպես «անհրաժեշտ երգ» անգիր արտասանեցին 12 աղյուսների օրենքը:  
<sup>5</sup> Այս անհրաժեշտությունը վերջին տարիներից ամտեսվեց նաև բուհական կրթության համակարգում իրավունքի հիմունքներ ընդհանուր դասընթացը կամընտրականի վերածելով:

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ****ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ СОВЕРШЕНИЯ  
МАССОВЫХ БЕСПОРЯДКОВ****Варе ЕНГИБАРЯН**

*Кандидат юридических наук, доцент  
кафедры Уголовного-процесса и  
криминалистики ЕГУ*

**О**бщая картина совершения массовых беспорядков довольно сложной и смешанной. На практике массовые беспорядки совершаются разнообразно и нарушая общественный порядок создают последствия крупного размера.

Так, например во время массовых беспорядков совершившихся с 1-2-го марта 2008 году в центре города Ереван, было уничтожено погибли более десятков человек. В результате массовых беспорядков 1-го марта городу было нанесено ущерба на 69 миллионов армянских драмов. Было сожжено 36 транспортных средств, непосредственно задержано более ста человек и арестовано более пятидесяти людей и др.<sup>1</sup>

Со стороны уголовного законодательства Республики Армения, предусматривающего ответственность за массовые беспорядки, проявляется в форме преступной деятельности, а именно:

1. В организации массовых беспорядков (ч.1 ст.225 УК РА);
2. В непосредственном участии в массовых беспорядках (ч.2 ст.225 УК РА);
3. В призывах к активному неподчинению законным требованиям представителей власти, массовым беспорядкам, насилию над гражданами (ч.4 ст.225 УК РА);

Характерно учитывать тот факт, что статья 225 действующего уголовного кодекса РА, в отличие от статьи 74 предыдущего уголовного кодекса РА и статьи 212 УК РФ, в ч. 3 предусматривает качественный вид этого преступления, когда действия, предусмотренные ч. 1 и 2 этой статьи, сопровождаются убийством.

Из приведенного перечня противоправных действий видно, что массовые беспорядки представляют собой сложный состав преступления, так как в него входят несколько самостоятельных составов преступления.

Анализ показал, что в ходе массовых беспорядков совершается более 20 видов преступлений, которые квалифицируются по совокупности со статьей, предусматривающей ответственность за массовые беспорядки, либо самостоятельно, по соответствующей статье уголовного кодекса (сопротивление представителям власти, хулиганство и др.).

С целью выделения повышенной общественной опасности законодатель включил в диспозицию нормы "организацию массовых беспорядков", как своеобразную самостоятельную деятельность. В законе этот термин не раскрывается.

Специфическим признаком преступления, предусмотренного ст. 225 УК РА, является наличие большого числа людей, т.е. толпы, своими действиями нарушающей общественный порядок, а также различным способом одобряющей действия тех участников толпы, ко-



торые совершают погромы, разрушения, поджоги и т.п. действия или оказывают вооруженное сопротивление власти. Д. О. Хан-Магомедов определяет толпу как “беспорядочное скопление большого числа лиц”<sup>2</sup>. По мнению М. А. Шейдера, толпа представляет собой беспорядочную и неоформившуюся массу людей<sup>3</sup>. По мнению других исследователей, толпой является стихийно собравшаяся значительная группа лиц<sup>4</sup>.

Толпа, будучи коллективным участником массовых беспорядков, представляет собой, как правило, скопление большого числа людей, у которых нет предварительного сговора и заранее разработанного плана преступных действий.

Обязательным признаком массовых беспорядков является совершение частью толпы или несколькими ее участниками погромов, или разрушений, или поджогов и других подобных действий или вооруженного сопротивления власти. Без этого признака массовые беспорядки исключаются. Поэтому массовое невооруженное сопротивление власти (при отсутствии других признаков ст.225 УК РФ) не образует состава преступления “массовые беспорядки”. Эти действия должны квалифицироваться в соответствии с действующим законодательством.

Во время беспорядков 1-го марта 2008 года было ранено 180 правоохранительных органов и силовых структур, 2/3 части из которых получило ранения разной тяжести<sup>5</sup>.

Так, массовые беспорядки, являясь преступлением, совершаемым в группе (толпой), всегда предполагают совместность, общность действий соучастников.

По мнению Дьякова С. В., “организация массовых беспорядков” выражается в действиях организатора с целью объединить толпу либо руководить ею для со-

вершения погромов, разрушений, поджогов и других подобных действий, а также действия по руководству уже собравшейся толпой на совершение указанных действий<sup>6</sup>.

В юридической литературе отмечается также, что организация массовых беспорядков самая опасная форма рассматриваемого преступления, суть которой заключается в действиях по возбуждению агрессивных настроений у массы людей, в направлении толпы на совершение насильственных действий, погромов, противодействия властям и органам правопорядка<sup>7</sup>.

Существует также иное определение организации массовых беспорядков?? . “Деятельность нескольких лиц, выражающаяся в планировании и подготовке массовых беспорядков или руководстве действиями толпы по совершению деяний, перечисленных в диспозиции соответствующей статьи”<sup>8</sup>.

Способы осуществления организационных действий могут быть самыми разнообразными: обращение к толпе, подача тревожных сигналов, оглашение различных “петиций”, листовок, воззваний, содержащих призывы к осуществлению массовых беспорядков или ультимативные требования к руководителям государственных органов власти и управления.

Под организацией массовых беспорядков понимают также всякого рода организационную деятельность: созыв граждан в толпу тем или иным путем, подстрекательство толпы к погромам, разрушениям и другим подобным действиям путем распространения среди толпы провокационных, клеветнических измышлений: подготовку массовых беспорядков путем сговора с другими лицами о таком выступлении: разработку плана преступных действий участников массовых беспорядков, а также руководство

### **ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ**

участниками возникших массовых беспорядков<sup>9</sup>.

В юридической литературе обоснованно отмечается<sup>10</sup>, что в состав массовых беспорядков входят и действия, заключающиеся в их подготовке: изготовление и распространение листовок и иных печатных изданий, публичные выступления, призывы, направленные на то, чтобы собрать толпу и склонить ее к совершению погромов, разрушений, поджогов и иных подобных действий.

Представляется, что деятельность организатора массовых беспорядков может проявляться:

1) В предварительной деятельности, когда действия виновного непосредственно направлены на подготовку массовых беспорядков,

2) В непосредственном руководстве толпой при совершении массовых беспорядков.

Судебная и следственная практика выработала определенную позицию и относит к организации массовых беспорядков подготовку и распространение различными способами призывов к совершению действий, указанных в диспозиции ст. 225 УК РА, собрание различными способами толпы, осуществление непосредственного руководства толпой, подстрекательство толпы к совершению погромов и других подобных действий, разработку плана совершения беспорядков, определение времени и места совершения беспорядков, определение объекта посягательства, распределение функций среди участников и т.п. Так, например во время мартовских событий, под влиянием призывов и психологическом давлении организаторов митинга мирные демонстрации превратились в массовых беспорядков в центре города

Еревана<sup>11</sup>.

Наличие любого из перечисленных действий является достаточным для признания лица организатором массовых беспорядков.

Таким образом, речь идет о проявлении инициативы в зарождении массовых беспорядков и осуществлении руководства действиями толпы.

Первые преступления, совершенные в ходе массовых беспорядков, спланивают толпу и провоцируют ее на участие в уголовных правонарушениях - в том числе лиц, не проявлявших до этого криминогенной активности.

Среди участников массовых беспорядков имеет место слабо выраженная специализация ролевой деятельности: организаторы порой являются одновременно исполнителями преступных акций. Цели и пути их достижения у организаторов и исполнителей могут не совпасть. Однако, если на начальном этапе массовых беспорядков эти различия проявляются не столь резко, то в последующем указанные несовпадения способствуют выходу исполнителей из-под контроля организаторов и малопредсказуемому развитию ситуации<sup>12</sup>.

При расследовании уголовных дел, возбужденных по массовым беспорядкам, установлено, что перед правоприменительными органами, в частности, следственными подразделениями, расследующими дела данной категории, возникает сложность установления и определения действий организатора и их уголовно-правовой квалификации. В результате следователи для "большой верности" привлекали к уголовной ответственности участников массовых беспорядков за организацию массовых беспорядков и непосредственное совершение действий, указанных в диспозиции ст. 225 УК РА.

Организаторская деятельность, как

правило, осуществляется до совершения массовых беспорядков, и часто ей придается видимость легитимных требований, высказываемых в адрес властей, выражения интересов нации, возмущения незаконными действиями властей, а также проведения несанкционированных митингов на "горячую" тему с привлечением большого числа граждан, действий, якобы непосредственно не направленных на выработку характера поведения толпы, тогда как в действительности ведется подготовка предметов и орудий преступления, планов дислокации групп. Естественно, что часто такие действия носят скрытый характер. Межнациональная напряженность усиливается острыми социальными проблемами. Нищета, социальная напряженность - хорошая почва для взращивания "образа врага" в лице представителя другой национальности.

Митинги, демонстрации, как правило, имеющие под собой нелегитимную основу, призванные решать "социальные проблемы", тем самым имеют цель концентрации экстремистских сил для совершения беспорядков. Конечно, не любой митинг или демонстрация ведут к беспорядкам. Поэтому необходимо отличать митинги, на которых звучат резкие высказывания, но они носят при всем этом исключительно мирный характер, от таких, где организаторы в качестве средства усиления действенности своих высказываний предлагают насильственные действия, погромы и др., что и может спровоцировать беспорядки.

Как показывает анализ практики, организатор массовых беспорядков чаще всего выступает в роли подстрекателя. Проявляя инициативу в возникновении массовых беспорядков и направляя их, организатор, безотносительно к своей физической роли в самих совершаемых действиях, становится главным дейст-

вующим лицом в осуществлении преступления. Данное обстоятельство, характеризующее степень участия лица в преступлении, необходимо учитывать при решении вопроса о признании того или иного лица организатором массовых беспорядков. Данное обстоятельство может быть положено в основу и при установлении степени ответственности организатора.

Это связано с повышенной степенью общественной опасности преступной деятельности организатора, которая очевидна при совершении и соучастии в любом преступлении. Но наиболее ярко повышенная общественная опасность деятельности организатора проявляется при совершении массовых беспорядков.

Как правило, организатора массовых беспорядков знает весьма ограниченный круг лиц, которые, возможно, и не попадают в поле зрения правоохранительных органов, и активных участников.

Далее сценарий развивается таким образом, что люди в толпе становятся "взаимоподогреваемыми" и появляется организатор непосредственных преступных действий. То есть, получается как бы разветвленная сеть организаторов, которые, в свою очередь, являются и активными участниками. А организаторы, в собственном смысле этого слова, "выходят" из поля зрения и становятся сторонними наблюдателями, в связи с чем доказать их причастность к событиям становится весьма затруднительно, ибо они не выполняют каких-либо действий, характеризующих объективную сторону преступления.

В случае выполнения таких действий их инициаторы укрываются активными участниками массовых беспорядков, поскольку среди организаторов немало авторитетов либо в преступном мире, либо в жизни того микрообщества, где эти события разворачиваются. Не иск-

### **ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ**

лючен вариант наличия среди организаторов “национальных героев”.

Таким образом, как следует из изложенного выше, “организация” массовых беспорядков может состоять из двух действий конкретного субъекта:

1. Совершение определенной совокупности организационно-подготовительных действий;

2. “Организация”, как конкретная деятельность лица, находящегося в толпе и взявшего на себя руководство ею.

При изучении роли организатора массовых беспорядков возникает проблема отграничения деятельности организатора от других форм соучастия, таких как подстрекательство и пособничество. Это обусловлено тем, что действия организатора беспорядков часто объективно содержат в себе признаки и активного участия и подстрекательства, и пособничества в совершении погромов и других действий.

По этому поводу М. И. Ковалев отметил, что “организатор преступления может быть объективно и в роли подстрекателя, и в роли исполнителя, и в роли пособника, или одновременно в двух и даже трех указанных выше”ролях”<sup>13</sup>. Сложность квалификации организаторской деятельности заключается и в том, что в отдельных случаях она может состоять как из призывов к совершению массовых беспорядков, так и из действий, направленных на предоставление участникам беспорядков всякого рода орудий и средств, облегчающих их совершение.

Только в результате точного установления признаков организации, пособничества и подстрекательства и их разграничения возможна правильная правовая оценка действий виновных и в соот-

ветствии с содеянным назначение наказания.

Деятельность лиц, призывающих толпу к совершению противоправных действий (если в их действиях нет признаков организаторской деятельности), должна быть квалифицирована, как соучастие в массовых беспорядках в форме подстрекательства.

Те лица, которые непосредственно не участвовали в совершении погромов, разрушений, поджогов и других действий, но своими действиями способствовали их совершению (к примеру: предоставлением транспортных средств, укрытием предметов и орудий преступления, сообщением сведений об объектах посягательства и т. п. ), либо склоняли отдельных граждан к участию в массовых беспорядках, должны признаваться пособниками либо подстрекателями массовых беспорядков. При этом эти лица должны осознавать связь своих действий с массовыми беспорядками<sup>14</sup>.

Представляется важным определение момента окончания преступления, заключающегося в организации массовых беспорядков. По нашему мнению, моментом окончания данного преступления является учинение толпой действий, указанных в диспозиции статьи, т.е. погромов, поджогов, разрушений и других подобных действий, а равно оказание вооруженного сопротивления представителям власти.

Преступная деятельность лиц, направленная на организацию массовых беспорядков, но не реализованная по обстоятельствам, не зависящим от их воли, должна рассматриваться в зависимости от конкретных обстоятельств как покушение либо как приготовление.

Подтверждением этого является то обстоятельство, которое отмечено Г.Ф. Поленовым и заключается в том, что в данном случае необходимо иметь ввиду

не организацию группировок, а самих массовых беспорядков, участие не в группировке, а в массовых беспорядках, сопровождающихся погромами, разрушениями, поджогами и другими подобными действиями, а равно оказанием вооруженного сопротивления власти<sup>15</sup>.

Таким образом, тяжкие последствия

в результате совершения массовых беспорядков образуются при совершении участниками толпой преступные действия под непосредственной организации этих действий. Данная картина является формулой организации процесса докзывания и расследования в целом.

<sup>1</sup> Более подробнее см. газета "Голос Армении" N22 (19672) от 4 март 2008г; N28 (19678) от 18 март 2008г; электронная газета: <http://www.panorama.am/am/law/2008/03/07>; <http://www.genproc.am/print/am/50/3437/04/03/08>.

<sup>2</sup> Государственные преступления. М., 1961, с.148.

<sup>3</sup> Шнейдер М. А. Уголовное право. Часть Особенная. М., 1966, с. 91.

<sup>4</sup> Меньшагин В. Д. Иные государственные преступления. Курс советского уголовного права. Т.4. М., 1970, с.182.

<sup>5</sup> Эл. Газета "Panorama" <http://www.panorama.am/am/law/2008/03/12/police>, 12/03/08

<sup>6</sup> Другие авторы под этим понимают "активные умышленные действия определенного лица или группы лиц, направленные именно на подготовку и провокацию толпы к совершению погромов, разрушений и других насильственных действий, создание благоприятных условий для реализации преступного замысла". Забарин С. Н. Квалификация преступлений участников массовых беспорядков, совершенных на почве межнациональных конфликтов. //Материалы Всесоюзной конференции. М., Академия МВД СССР, 1991, с. 312.

<sup>7</sup> Комментарий к УК РФ. Верховный суд РФ, 3-е издание. Под ред. В. М. Лебедьева, М., 2005, "НОРМЫ", с. 526.

<sup>8</sup> Комментарий к УК РФ. / Под ред. А. В.

Наумова, М., 1996, изд. Юристъ, с. 509.

<sup>9</sup> Государственные преступления: Учебное пособие. /Под ред. М. И. Якубович, В. А. Владимирова. -М.,/Высшая школа, 1961, с. 149.

<sup>10</sup> Курс советского уголовного права (часть особенная).Т.3/Отв.ред. Н. А. Беляев, М. Д. Шаргородский. Л., 1973, с. 256.

<sup>11</sup> Электронная газета: <http://www.panorama.am/am/law/2008/03/12/proc1/>.

<sup>12</sup> Пономарев В.П. Предупреждение массовых беспорядков. Автореф. дисс... канд. юрид. наук. Киев, 1992, с. 15.

<sup>13</sup> Ковалев М.И. Соучастие в преступлении. Часть II. - Свердловск, 1961. Т. 5, с. 72.

<sup>14</sup> Однако в литературе существует мнение, что подстрекательство, пособничество, укрывательство в массовых беспорядках не может квалифицироваться по ст. (79) 212 УК РСФСР Подстрекатели, пособники, укрыватели при погромах и других преступлениях должны нести ответственность по соответствующим статьям за посягательство на личность, имущество. См.: Дьяков С. В., Игнатъев А. А., Карпушин М. П. Ответственность за государственные преступления. М., 1988, с. 115.

<sup>15</sup> См.: Поленов Г.Ф. Организация или активное участие в групповых действиях, нарушающих общественный порядок.- Алма-Ата. /Юр.науки. Вып. 1. Изд-во Каз.ГУ, 1971. с. 52.

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ****ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ****Դավիթ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

*ԵՊՀ քրեական դատավարության և  
կրիմինալիստիկայի ամբիոնի սահպրենդ,  
իրավաբանական գիտությունների քեկնածու*

Ապացույցների թույլատրելիության ինստիտուտի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար առավել քան կարևոր է Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը: Սա պայմանավորված է Եվրոպական դատարանի վճիռների պարտադիր իրավաբանական ուժով, քանի որ Կոնվենցիայի անդամ պետությունները պարտավոր են կատարել դատարանի վերջնական վճիռներն այն գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են հանդիսանում (Կոնվենցիայի հոդված 46): Ավելին և՛ ՀՀ Դատական օրենսգրքում (հոդված 15) և՛ ՀՀ քր. դատ. օր-ում (հոդված 8) ուղղակիորեն սահմանվեց ներպետական դատարանների համար Եվրոպական դատարանի վճիռների պարտադիր իրավաբանական նշանակությունը: Մասնավորապես, որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Սարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Պետք է նշել, որ թեև Սարդու իրավունք-

ների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան ապացույցների թույլատրելիության վերաբերյալ որևէ կոնկրետ դրույթ չի նախատեսում, սակայն Եվրոպական դատարանը այս հարցի կապակցությամբ ձևավորել է որոշակի նախադեպ, որն ամեն դեպքում պետք է հաշվի առնվի ներպետական դատարանների կողմից՝ այս կամ այն ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս<sup>1</sup>: Եվրոպական դատարանը ապացույցների թույլատրելիության խնդրին անդրադարձել է Կոնվենցիայի հոդված 6-ի (Արդարացի դատաքննության իրավունք) շրջանակներում: Միաժամանակ դատարանը բազմիցս նշել է, որ իր խնդիրը ոչ թե վկաների ցուցմունքների գնահատումն է, այլ պարզելը՝ արդյոք դատաքննությունը եղել է արդարացի՝ ներառելով նաև ապացույցների թույլատրելիության հարցը: Մասնավորապես, Հոդված 6-ի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքննության՝ խելամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից»: Ինչպես նշվում է Եվրոպական դատարանի՝ Մոնելն ու Մորիսն ընդդեմ Միացյալ թագավորության գործով կայացրած վճռում, «արդար դատաքննության պահանջը տարածվում է ոչ միայն կողմերի մասնակցությամբ դատաքննության, այլ ամբողջ դատավարության վրա»<sup>2</sup>: Հետևաբար, արդարացի դատաքննության պահանջն իրագործելու համար դատարանը պետք է անդրադառնա նաև մինչդատա-

կան վարույթում ստացված ապացույցների թույլատրելիության խնդիրն և կողմերի պահանջով անթույլատրելի ճանաչի օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները: Ավելին, հոդված 6-ի 2-րդ մասը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, մինչև նրա մեղավորությունը չապացուցվի օրենքին համապատասխան»: «Օրենքին համապատասխան» դրույթը ենթադրում է, որ մեղադրական դատավճռի հիմքում պետք է դրվեն միայն այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով: Այս դրույթը կողմերին իրավունք է տալիս դատարանից պահանջել իր վճիռները կայացնել բացառապես օրենքի պահանջների պահպանմամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա: Սա համապատասխանում է նաև ՀՀ քր. դատ. օր-ի 104 հոդվածի պահանջին, ըստ որի քրեական դատավարության ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ:

Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով կայացրած վճռում դատարանը նշում է. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքնության իրավունքը, բայց չի սահմանում ապացույցների՝ որպես այդպիսին թույլատրելիության որևէ կանոն. դա ներպետական իրավունքի խնդիրն է: Դատարանն, այսպիսով, չի կարող սկզբունքորեն և *in abstracto* բացառել ապօրինաբար ձեռք բերված նույնաբնույթ ապացույցների ընդունելիությունը: Նա պետք է գնահատի միայն, թե արդյոք պրն. Շենկի գործով դատաքնությունն ամբողջությամբ արդարացի է եղել»<sup>3</sup>:

Կհանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով<sup>4</sup> դիմողը Միացյալ Թագավորություն էր ժամանել իր զարմիկի հետ, որի մոտ թմրանյութ է հայտնաբերվում: Խուզարկության արդյունքում դիմողի մոտ թմրանյութ չի հայտնաբերվում: Հինգ ամիս

անց դիմողն այցելում է թմրանյութի առուվաճառքով զբաղվող ընկերոջը, որի բնակարանում առանց վերջինիս ինստիտուցիոնալ լսող սարք էր տեղադրվել: Արդյունքում ոստիկանությունը ստանում է դիմողի և նրա ընկերոջ զրույցի ձայնագրությունը, որտեղ դիմողը խոստովանում է, որ ներգրավված է եղել թմրանյութի մաքսանենգության մեջ: Արդյունքում նա ձերբակալվում է և մեղադրվում թմրանյութերի հետ կապված հանցագործությունների համար:

Եվրոպական դատարանում դիմողը պնդում էր, որ իշխանությունները խախտել են Կոնվենցիայի 8-րդ (Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) և 6-րդ հոդվածները: Դատարանը գտավ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ բացակայում է գաղտնի լսողական սարքերի կիրառումը թույլատրող օրենք: Թեև հսկողությունը կատարվել է Ներքին գործերի նախարարության ուղեցույցին համապատասխան, Դատարանը գտել է, որ այն հասարակության համար բավարար չափով մատչելի չէ: Այսպիսով չի պահպանվել 8-րդ հոդվածում ամրագրված «նախատեսված է օրենքով» պահանջը, որն անհրաժեշտ է միջամտության արդարացման համար: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ Դատարանը նշել է, որ դիմողն ունեցել է ձայնագրության նույնականությունն ու օգտագործման փաստը վիճարկելու լայն հնարավորություն: Այն հանգամանքը, որ նա հաջողության չի հասել, Դատարանի գնահատականներում փոփոխություն չի մտցնում: Այնուամենայնիվ Դատարանը գտել է, որ **8-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված նյութի օգտագործումը չի հակասում 6-րդ հոդվածով նախատեսված արդարացիության պահանջներին:**

Այսինքն, 6-րդ հոդվածի շրջանակներում ապացույցների թույլատրելիությանը անդրադառնալիս դատարանը չի հիմնվել այն հանգամանքների վրա արդյոք ապացույցը ձեռք է բերվել ներպետական օրենսդրության պահպանմամբ, թե ոչ: Դա-

### **ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ**

տարանը գնահատել է ամբողջ դատավարության արդարացիությունը:

Սակայն, պետք է նշել, որ որոշ վճիռներում դատարանը դրսևորվել է ավելի մեղմ, վերը նշվածից որոշակիորեն տարբերվող մոտեցում, որն իր արտացոլումն է ստացել Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդեռլանդների գործով դատարանի վճռում: Դատարանը, մասնավորապես, նշել է. «Դատարանը կրկնում է, որ ապացույցների թույլատրելիությունը հարց է, որը *հիմնականում* (ընդգծումն իմն է) կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ, և, որպես կանոն, հենց ներպետական դատարաններն են կոչված գնահատելու ներկայացված ապացույցները: Ըստ կոնվենցիայի՝ դատարանի խնդիրն է ոչ թե գնահատել վկաների ցուցմունքները, այլ համոզվել, որ դատաքննությունն արդարացի է եղել, ներառյալ և այն, *թե ինչպես են ստացվել ապացույցները* (իմնականում իմն է)»<sup>6</sup>: Մեկ այլ վճռով դատարանը նշել է, որ. «Ինչ վերաբերում է ներպետական իրավական նորմերի «որակին» Կոնվենցիայի լուսի ներքո, ապա հիշյալ որակը կախված է այն ճշգրտությունից, որով օրենսդրությունը և դատական պրակտիկան սահմանում են իշխանական լիազորությունների իրականացման ծավալն ու պայմանները՝ բացառելով կամայականության վտանգը»<sup>7</sup>: Դեռևս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով չորս դատավորներ (Պետիտի, Շպիլման, Դե Մեյերի, և Կարիլո Սասլեդո) հատուկ կարծիք հայտնեցին թույլատրելիության հարցի կապակցությամբ՝ նշելով, որ. «Ոչ մի դատարան չի կարող, առանց վնաս պատճառելու արդարադատության պատշաճ իրականացմանը, հենվել մի ապացույցի վրա, որը ստացվել է ոչ միայն անազնիվ, այլև, նախ և առաջ, ապօրինի ճանապարհով: Եթե դատարանն այդպես է վարվում, ապա այն չի կարող Կոնվենցիայի իմաստով արդարացի համարվել»<sup>8</sup>: Վերջին

տարիներին կայացրած վճիռներում նույնպես, Դատարանը նշել է, որ արդար դատական քննության իրավունքի ապահովման շրջանակներում կարևորում է նաև ապացույցի ձեռքբերման եղանակի ստուգումը: Այսպես, «Բորիսովան ընդդեմ Բուլղարիայի» գործով վճռում (21 դեկտեմբերի 2006թ.) Դատարանը նշել է, որ իր խնդիրը ոչ թե որոշելն է, թե արդյոք վկաների ցուցմունքները պատշաճ կարգով են ապացույց ճանաչվել, այլ պարզելը, թե արդյոք վարույթը՝ ընդհանուր առմամբ, *այդ թվում՝ ցուցմունքների ձեռքբերման եղանակը*, արդարացի՞ է եղել, թե՞ ոչ<sup>9</sup>:

Սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ այն դեպքերում, երբ ներպետական դատարանները դատավճռի հիմքում դնում են օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ, Եվրոպական դատարանն այս փաստը հիմք չի համարում հողված 6-ի խախտում արձանագրելու համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ ապացույցը համարվել է անթույլատրելի, այն հակասել է ոչ թե արդարացի դատաքննության իրավունքին, այլ Կոնվենցիայի այլ հողվածներին: Մասնավորապես, Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 3-րդ հողվածի (ոչ թե 6-րդ - Դ. Մ.) խախտում է համարել վկաների «խորացված հարցաքննությունը», քանի որ կիրառված մեթոդները թեև մարմնական վնասվածքներ չեն առաջացրել, սակայն լուրջ ֆիզիկական և հոգեկան տառապանք են պատճառել, հարցաքննվողներին նվաստացնելու, վարկաբեկելու, նրանց ֆիզիկական և բարոյական դիմադրությունը կոտրելու նպատակով վախի և անլիարժեքության զգացում են տարածել»<sup>10</sup>:

Այսինքն, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումն ինքնին Կոնվենցիայի 6-րդ հողվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում չի համարվում: Անթույլատրելի ապացույցների օգտագործումը կհամարվի 6-րդ հողվածի խախ-



տում, եթե դատարանի վճիռը հիմնվի բացառապես այդ ապացույցների վրա: Փաստորեն այն, թե նման ապացույցների օգտագործումն արդար դատաքննության իրավունքի խախտո՞ւմ է, թե՞ ոչ, կախված է կոնկրետ գործի հանգամանքներից:

Հիմնականում եվրոպական դատարանն իր վճիռներում անդրադարձել է ոչ թե ընդհանուր առմամբ ապացույցների թուլատրելիությանը որպես արդար դատական քննության իրավունքի բաղադրատարրի, այլ թուլատրելիության խնդրին անդրադարձել է Կոնվենցիայի առանձին դրույթների խախտումների գնահատման լույսի ներքո: Օրինակ, Սաունդերսն ընդեն Միացյալ թագավորության գործով<sup>10</sup> Դատարանն անդրադարձել է քրեական դատավարությունից դուրս օրենքի խախտմամբ ձեռք բերված տվյալների՝ դատարանում օգտագործելու թուլատրելիությանը: Այս գործով, մասնավորապես, դիմողը գանգատվում էր այն հանգամանքից, որ Առևտրի և արդյունաբերության նախարարության կողմից նշանակված տեսուչների հարկադրանքի ազդեցության տակ իր տված ցուցմունքները իր գործով քրեական դատավարության ժամանակ չէին կարող ծանաչվել որպես թուլատրելի մեղադրական ապացույցներ: Այս գործով Դատարանը նշել է, որ «Չի կարելի հիմնվել հասարակական շահի վրա՝ ի արդարացումն արտադատական քննության ընթացքում հարկադրաբար ձեռք բերված պատասխանների օգտագործման, որը նպատակ ունի մերկացնելու մեղադրյալին դատաքննության ընթացքում: Այս կապակցությամբ հատկանշական է, որ համապատասխան օրենսդրության համաձայն՝ այն լիազորությունների ուժով հարկադրաբար ստացված վկայությունները, որոնցով օժտված է կորպորատիվ իրավախախտումների դեմ պայքարի վարչությունը, որպես կանոն չեն կարող հետագայում օգտագործվել դատավարության ժամանակ և ոչ այն պատճառով, որ այդ ցուցմունքները տրվել են դիմողի կողմից մինչև իր դեմ մե-

ղադրանքի առաջադրումը (կետ 74)»:

Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդեռլանդների գործով<sup>11</sup> դատարանն անդրադարձել է «անանուն վկաների» ցուցմունքների օգտագործման թուլատրելիությանը: Նշված գործով մեղադրանքները հիմնված էին *inter alia* ոստիկանների զեկույցների վրա, որոնք ընդգրկում էին ոստիկանության սպաների ցուցմունքները: Նրանք վկայություն էին տվել ըստ համարների, սակայն չէին բացահայտել իրենց ինքնությունը: Նրանք պնդում էին, որ եթե իրենց անունները բացահայտվեն, ապա նրանք այլևս չեն կարողանա պատշաճ կերպով կատարել իրենց պարտականությունները: Այս գործով մեղադրանքները, սակայն, հիմնված էին նաև այլ վկաների՝ ինչպես ոստիկանների, այնպես էլ տեղի բնակիչների վկայությունների վրա: Դիմողները գանգատվում էին, որ դատավճիռը կայացվել է հիմնականում ոստիկանության սպաների ցուցմունքների հիման վրա, որոնց անձը մնացել է անանուն, և որոնց չեն լսել հրապարակայնորեն՝ իրենց ներկայությամբ: Դատարանը, հիմնվելով Դորսոնի գործով վճռի վրա, նշել է. «6-րդ հոդվածը հատուկ չի պահանջում հաշվի առնել վկաների շահերը: Սակայն, երբ դրված է կյանքի, մարդու ազատության կամ անվտանգության հարցը, ապա, որպես ընդհանուր կանոն, հարցն ընկնում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի գործողության ներքո: Վկաների կամ զոհերի նման շահերը պաշտպանվում են Կոնվենցիայի այն հոդվածներով, որոնց համաձայն պայմանավորվող պետությունները պետք է քրեական գործերով դատավարությունը կազմակերպեն այնպես, որպեսզի այդ շահերը չվտանգվեն: Նման դեպքերում արդարացի դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որ պաշտպանության շահերը համաչափ լինեն դատարանում վկայություն տվող վկաների կամ զոհերի շահերին: Այսպիսով, դատարանը, թուլատրելի համարելով անա-

### **ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

նուն վկաների ցուցմունքների օգտագործումը, այնուամենայնիվ պահանջում է ապահովել հակադիր շահերի համաչափությունը և նման ընթացակարգի կիրառմամբ պաշտպանության կողմի համար առաջացող դժվարությունները հավասարակշռել դատական ընթացակարգով: Ավելին, Կոստովսկին ընդդեմ Նիդեռլանդների գործով<sup>2</sup>, որտեղ նույնպես վիճարկվում էր անանուն վկաների տված ցուցմունքների թույլատրելիության հարցը, Դատարանը նշել է, որ մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների օգտագործումն ինքնին համապատասխանում է 6-րդ հոդվածի պահանջներին այնքան ժամանակ, քանի դեռ հարգվել է պաշտպանության իրավունքը: Այս իրավունքը ենթադրում է նույն պայմաններով վկային հարցաքննելու՝ մեղադրյալի հնարավորությունը: Առկա գործում այդ հնարավորությունը չի ապահովվել և դատարանը 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել»: Սակայն այս հարցում ևս Դատարանը, գործի հանգամանքներից ելնելով, տարբերակված մոտեցում է դրսևորել: Մասնավորապես, Դատարանն առանձնահատուկ վերաբերմունք է դրսևորել անունուն ոստիկանների հարցաքննության թույլատրելիությանը: Այսպես, Վան Մեխելենն ընդդեմ Նիդեռլանդների գործով դատարանը նշել է. «Ոստիկանները կրում են գործադիր իշխանություններին ենթարկվելու պարտականություն, և նրանք կապված են դատախազության հետ. այս պատճառներից յուրաքանչյուրը բավական է, որպեսզի նրանք՝ որպես անանուն վկաներ, օգտագործվեն միայն բացառիկ հանգամանքներում: Բացի այդ, նրանց ծառայողական պարտականությունների բնույթը, մասնավորապես՝ ձերբակալելու նրանց իրավասությունը, պահանջում է վկայություն տալ

դռնբաց դատական միստում (կետ 56)»:

«Տեյքսերիո դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի», «Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի». «Վանյանն ընդդեմ Ռուսաստանի» գործերով դատարանն անդրադարձել է գաղտնի գործակալների օգտագործման թույլատրելիությանը: Ընդհանուր առմամբ թույլատրելի համարելով գաղտնի գործակալների օգտագործման հնարավորությունը՝ Դատարանը սահմանեց դրա թույլատրելիությունն ապահովող որոշակի չափանիշներ: Եվրոպական դատարանի վճիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ Դատարանը գաղտնի գործակալների մասնակցությունը թույլատրելի է համարում միայն այն դեպքում, երբ դրանք սադրիչ բնույթ չեն կրել, այսինքն, երբ ուղղակիորեն անձին չեն դրդել հանցագործության կատարմանը: Մասնավորապես «Տեյքսերիո դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի» գործով դատարանը նշել է, որ. «ոստիկանության երկու աշխատակիցների գործողությունները անցել էին թույլատրելի գործողությունների շրջանակները, քանի որ նրանք հրահրեցին հանցանքը, և չկա ոչինչ, ինչը ցույց կտա, որ առանց միջամտության հանցանքն այնուամենայնիվ կկատարվեր: Վիճահարույց դատավարությունում նման միջամտությունը նշանակում է, որ սկզբից եվեթ դիմումատուն որոշակիորեն զրկված է եղել արդարացի դատաքննության իրավունքից: Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում»: Ավելին, «Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի» գործով Դատարանը նշել է, որ. «չնայած հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտությանը՝ գաղտնի գործակալների օգտագործումը պետք է լինի խիստ սահմանափակ: Տվյալ գործում հանցագործությունը չէր կատարվի առանց ոստիկանության աշխատակիցների միջամտության»:

<sup>1</sup> ՄԻԵԴ-ը ապացույցների թույլատրելիության հարցին անդրադարձել է հիմնականում դատական քննությանը վկաների ներկայության, դատավարության ընթացքում «զենքերի հավասարության», անանուն վկաների հարցաքննության հարցերի լույսի ներքո (Nuala Mole and Catharina Harby The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights, 2<sup>nd</sup> edition, August 2006, page 52):

<sup>2</sup> Տե՛ս Monnell and Morris v. United Kingdom., Judgement of 2 Marth 1987, Series A., No.115. p.25, para. 55-70.

<sup>3</sup> Տե՛ս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանի 1988թ. հուլիսի 12-ի վճիռը (քաղվածք), Սարդու իրավունքների եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 527:

<sup>4</sup> Khan v. the United Kingdom, 12 May 2000.

<sup>5</sup> Տե՛ս Վան Մելսելենը և այլք ընդդեմ Նիդեռլանդների գործով Դատարանի 1997թ. ապրիլի 23-ի վճիռը (քաղվածք), Սարդու իրավունքների եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 278:

<sup>6</sup> Տե՛ս Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով Դատարանի 1993թ. փետրվարի 25-ի վճիռը (քաղվածք), Սարդու իրավունքների եվրոպա-

կան դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 469:

<sup>7</sup> Տե՛ս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանի 1988թ. հուլիսի 12-ի վճիռը (քաղվածք), Սարդու իրավունքների եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 530:

<sup>8</sup> Տե՛ս Սարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ժողովածու, գիք հինգերորդ, Երևան, Անտարես, 2008, էջ26:

<sup>9</sup> Ireland v. United Kingdom, Judgement of 18 Jan. 1978, Series A., No 25.,para.167 Цит. по: Дженис М., Кэй Р., Брэдли Э. Европейское право в области прав человека. Практика и комментарии. М., 1997, էջ 140.

<sup>10</sup> Տե՛ս Սարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1979-2000թթ.): Երևան, 2002, էջեր 336-351:

<sup>11</sup> Տե՛ս Սարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1979-2000թթ.): Երևան, 2002, էջեր 275-289:

<sup>12</sup> Տե՛ս Kostovski v. Netherlands, 20 November 1989. Nuala Mole and Catharina Harby The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights, 2<sup>nd</sup> edition, August 2006, page 52):

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

**ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ և ԱՊԱՅՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ**

*ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ*

**Նորա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

*ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական փորձաքննությունների վարչության պետ*

Ապացուցման պարտականության բաշխման կանոնները շատ դեպքերում որոշվում են կանխավարկածների միջոցով, օրինակ՝ անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի պահանջներից է, որ մեղադրողը պետք է ապացուցի անձի մեղավորությունը: Մինևույն ժամանակ դատավարական իրավունքի զարգացման ներկա պայմաններում ապացուցման պարտականության բաշխման խնդիրը ընկալվում է փոքր-ինչ այլ կերպ: Իսկախ քննարկվում է օրենքով նախատեսված դեպքերում առանձին վարկածների ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելու թույլատրելիության հարցը:

Սույն հոդվածում խնդիր ունենք պարզաբանելու այն հարցը, թե արդյոք դատավարական իրավունքի զարգացման ժամանակակից միտումների և անմեղության կանխավարկածի համատեքստում թույլատրելի է առանձին վարկածների ապացուցման պարտականությունը դնել մեղադրյալի վրա: Այդ նպատակով փորձենք ապացուցման պարտականության բաշխման խնդիրը քննարկել արտասահմանյան երկրների, միջազգային իրավունքի և եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում:

Նախ նշենք, որ մինչև հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանի հայտնի իրավաբան Լ. Վլադիմիրովը գտնում էր, որ ապացուցման բեռը կարող է դրվել մեղադրյալի վրա այն դեպքերում, երբ՝

1. որոշակի գործողություն կատարելու կամ ինչ-որ իրի տիրապետման համար պահանջվում է օրինական թույլտվություն, լիազորություն կամ էլ ընդհանրապես պետք է ներկայացվի արդարացնող պատճառ,

2. մեղադրանքի օգտին մեղադրական ապացույցներ ներկայացնելու հետևանքով ծագում է հիմնավորված ենթադրություն:

Քրեական դատավարությունում կանխավարկածի միջոցով ապացուցման բեռի բաշխման կանոնները ապահովում են տարբեր շահեր, որոնց մեջ առաջնայինը կողմերի մրցակցային հավասարությունն է: Այն կողմը, որը օբյեկտիվորեն մյուս կողմի համեմատ գտնվում է առավել թույլ, այսինքն՝ անհավասար վիճակում, կարող է պաշտպանվել կանխավարկածով: Վերջինս թույլ կողմին ազատում է իր համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցման անհրաժեշտությունից: Տեսության մեջ նշվում է, որ ապացուցման բեռը կողմի վրա դրվում հետևյալ դեպքում.

1. իր նյութական և կազմակերպական հնարավորություններով այդ կողմը փաստացի ավելի ուժեղ է, քան հակառակ կողմը,

2. ապացուցման ենթակա հանգամանքը օբյեկտիվորեն հասանելի է տվյալ կողմի համար:

Այսպես, անմեղության կանխավարկածը պաշտպանում է կասկածյալին և մեղադրյալին՝ մեղավորության ապացուցման պարտականությունը դնելով մեղադրողի վրա, քանի որ պաշտպանության կողմը, որպես կանոն, իր հնարավորություններով փաստացի թույլ է, քան հանրային քրեական հետապնդման կողմը, որը կարող է օգտագործել պետության կազմակերպական և նյութական միջոցները: Սակայն իրավիճակը արմատապես փոխվում է հատուկ դեպքերում, երբ պաշտպանության կողմը օբյեկտիվորեն գտնվում է անհամեմատ առավել բարենպաստ վիճակում, քան մեղադրանքի կողմը: Սովորաբար դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ մեղադրողը ստիպված է հերքելու այսպես կոչված բացասական փաստերը /ինչ-որ մի փաստի բացակայությունը/, որոնց վրա հենվում է պաշտպանության կողմը, հատկապես եթե բացասական փաստերը միաժամանակ համարվում են գործով գլխավոր փաստերը: Բացասական փաստերը կարելի է ապացուցել այն դեպքում, երբ այն հաստատվում է այլ դրական փաստերով, օրինակ՝ ապօրինի զենք կրելու կամ պահելու գործերով նշված փաստը կարող է հաստատվել այլ անձից այդ զենքը ապօրինի կարգով ձեռք բերելու փաստով<sup>2</sup>:

Ապացուցման պարտականության բաշխման հարցում հետաքրքիր է բրիտանական փորձը: Այսպես, անգլիական ստատուտներով և դատական նախադեպերով սահմանվում են մի շարք դեպքեր, երբ մեղադրյալի վրա է դրվում առանձին փաստերի ապացուցման պարտականությունը: Այսպես, դրամանենգության մասին 1936թ. օրենքի համաձայն՝ անգլիական քրեական դատավարությունում դրամի կեղծման և դրամահատման համար նախատեսված սարքավորումների տիրապետման օրինականության ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա: Անմեղականության ապացուցման պարտականությունը կրում է պաշտպանության կողմը: Այս

դրույթը առաջին անգամ ձևակերպվել է Նոուտենի գործով (1843թ.) և հաստատվել Ուոլմինգտոնի գործով (1935թ.): Ուոլմինգտոնի գործով լորդ կանցլերը Լորդերի պալատին է ներկայացրել մի ամբողջ հետազոտություն, որտեղ եզրակացնում է. «Անգլիական իրավունքում կարմիր թելի պես անցնում է այն կանոնը, որ մեղադրյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրողի վրա, եթե խոսքը չի վերաբերում հոգեկան հիվանդությանը կամ էլ օրենքով նախատեսված այլ բացառություններին»<sup>3</sup>:

Ֆրանսիայի Մաքսային օրենսգրքի 392.1 հոդվածի համապատասխան անձը, ով տիրապետում է մաքսանենգ ապրանքներ, պատասխանատու է իրավախախտման համար:

Ներկայումս էկոլոգիական իրավախախտումների կանխման ուղղված քաղաքականության գործիքներից է իրավախախտման օբյեկտիվ կողմի առկայությունը կամ բացակայությունը հաստատող առանձին փաստերի ապացուցման պարտականության բաշխման փոփոխությունը: Օրինակ, ապացուցման պարտականության բաշխման փոփոխությունը կիրառվում է կոնկրետ պետության բացառիկ տնտեսական գոտում այլ պետության նավի՝ ապօրինի ձկնորսության գործերի քննության ընթացքում: Տեսության մեջ նշվում է, որ այս դեպքում ավանդական անմեղության կանխավարկածի կիրառությունը սահմանափակվում է, քանի որ մեղադրյալը պարտավոր է ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնց ձեռքբերումը առավել դյուրին է պաշտպանության կողմի, քան մեղադրողի համար: Օրինակ՝ Սեյշելյան թերակղզիների՝ օտարերկրյա ձկնորսական նավերի վերահսկման մասին 1979թ.-ի դեկտեմբերի 15 (1) պարագրաֆում սահմանվում է, որ բացառիկ տնտեսական գոտում գտնվող նավում հայտնաբերված ողջ ձուկը համարվում է այդ տնտեսական գոտում որսված ձուկ: Թեև նավում ձկան առկայությունը ինքնին իրավախախտում չէ, սա-

### **ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

կայն այս փաստի կանխավարկածի հերքման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա\*:

Ավելին, առանձին պետությունների սահմանադրություններում անմեղության կանխավարկածը ամրագրվում է ոչ ավանդական ընկալմամբ: Այսպես, Պապուա Նոր Գվինեայի Սահմանադրության 37 (4) հոդվածի համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվող անձը պետք է համարվի անմեղ, եթե իրավունքի համաձայն՝ այլ բան սահմանված չէ: Իրավունքով մեղադրյալի վրա կարող են դրվել կոնկրետ փաստերի ապացուցման պարտականությունը, որոնք գտնվում են կամ ողջամիտ զգուշության դեպքում պետք է գտնվեն բացառապես իր իրազեկության սահմաններում:

Առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելու վերաբերյալ դրույթներ պարունակում են նաև մի շարք միջազգային կոնվենցիաներ: ՄԱԿ-ի Անդրազգային հանցավորության դեմ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները կարող են քննարկել այն մասին պահանջը պարզելու հնարավորությունը, որ անձը, որը հանցագործություն է կատարել, ապացուցի հանցագործությունից ստացված ենթադրյալ եկամուտների կամ բռնագրավման ենթակա այլ գույքի օրինական ծագումը՝ այն չափով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության սկզբունքներին և դատական կամ այլ քննության բնույթին:

Կոռուպցիայի դեմ 2003թ. ՄԱԿ-ի Կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն, իր սահմանադրության և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով, քննության է առնում այնպիսի օրենսդրական և այլ այնպիսի միջոցներ, ինչպիսիք որ պահանջվեն միջոց-

ներ ձեռք առնելու հնարավորությունը՝ այն հաշվով, որպեսզի իբրև քրեորեն պատժելի արարք ճանաչվի անօրինական հարստացումը, այսինքն՝ հանրային պաշտոնատար անձի ակտիվների՝ նրա օրինական եկամուտները գերազանցող նշանակալի մեծացումը, որը նա չի կարող ողջամտորեն հիմնավորել:

Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի Կոնվենցիայի վերոհիշյալ նորմի կապակցությամբ Մ. Խաչատրյանը նշում է, որ Կոնվենցիայի 20-րդ հոդվածով սահմանված դրույթն այն մասին, որ պաշտոնատար անձը «ողջամտորեն չի հիմնավորում» դրույթը պետք է հասկանալ ոչ թե որպես նրա պարտականություն, այլ իրավունք: Այսինքն՝ կոռուպցիոն գործերով նույնպես մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, սակայն իրավունք ունի մասնակցել ապացուցմանը և ներկայացնել ապացույցներ իր անմեղության վերաբերյալ\*:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը /այսուհետ՝ ԵԴ/ «Բարբարան և այլք ընդդեմ Իսպանիայի» գործով ամրագրել է, որ անձի մեղավորության ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը: Ուստի անհրաժեշտ է քննարկել այն հարցադրումը, թե արդյոք առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի հակասում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի և ԵԴ-ի նախադեպային իրավունքին:

Այսպես՝ «Ֆան Հոանգ (Pham Hoang) ընդդեմ Ֆրանսիայի» գործով մեղադրյալը ձերբակալվել էր սահմանագծին Ֆրանսիա

*հերոհին ներկրելիս: Ֆրանսիական օրենսդրությունը նախատեսում է, որ արգելված ապրանքների ներկրումը, այդ թվում հերոհին, ենթադրվում է ապօրինի, եթե այդ ապրանքը ներկրող անձը հակառակը չի ապացուցել, օրինակ՝ այն դեպքում, երբ ներկայացվում են բավարար արդարացնող փաստաթղթեր, կամ երբ ապացուցվում է, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում կամ այնպիսի սխալի հետևանք է, որից հնարավոր չէ խուսափել: Ներկայացվող գործում պաշտպանության կողմը ոչ մի նման արդարացնող ապացույց չէր ներկայացրել, իսկ մեղադրյալը հրաժարվել էր որևէ բացատրություն տալուց: ԵԴ-ն, քննելով գործը, գտավ, որ որևէ անթույլատրելի բան չկա, որ այն մարդը, որ իր տիրապետության տակ ունի այնպիսի գույք, որը արգելված է, պետք է բավարար ձևով բացատրի այդ փաստը, հակառակ դեպքում անձը մեղավոր կհամարվի:*

Դրական փաստերը, որոնք ենթադրաբար կարող էին հերքել մեղադրյալի մոտ թմրամիջոցների պատահական կամ օրինական լինելու հանգամանքը հերքելու կամ հաստատելու հնարավորությունը գործնականում ֆրանսիական իշխանության համար անհասանելի էր: *Մեղադրյալի բացատրությունների բացակայության պայմաններում դրանք պետք է փնտրվեին արտասահմանյան երկրների տարածքներում և անորոշ ժամանակահատվածում: Դրան հակառակ՝ դրական փաստերի բացահայտումը թույլ է տալիս մեղադրանքի կողմում ապահովել ապացուցման հիմնական պարտականությունը:*

ԵԴ-ն գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սկզբունքորեն չի բացառում ազգային օրենսդրությունում իրավական կամ փաստական կանխավարկածների գոյությունը, որոնց ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա: Այնինչ ցանկացած դրույթ, որը սահմանում է անմեղության ապացուցման պարտականության փոխանցում կամ հնարավոր է հա-

մարում մեղադրյալի դեմ գործող կանխավարկածի կիրառումը, պետք է սահմանափակված լինի «բանական սահմաններով՝ հաշվի առնելով այն ամենի կարևորությունը, ինչը մեղադրյալի համար դրված է խաղասեղանին, և ինչը ապահովում է նրա պաշտպանությունը»: (Salabiaku v. France, 7 հոկտեմբերի 1988, p28):

«Դ-ն ընդդեմ Սիացյալ Թագավորության» գործով Կոմիսիան ընդունելի է համարել այն կանխավարկածը, որ Դիմումատուն, որն ապրում էր մարմնավաճառությամբ զբաղվող կնոջ հետ, և հնարավոր է եղել էր նրա կավատը, զոյատևում էր ոչ բարոյական ծագման եկամուտներով (x v United Kingdom):

«Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի» գործով դիմումատուի նկատմամբ, որն իրականացրել էր թմրամիջոցներով լցված ճամպրուկի փոխադրում, առաջ էր քաշվել մեղավորության կանխավարկածը: Դատարանը, սակայն, հանգեց այն եզրակացության, որ քանի որ ազգային դատարանը ազատ է եղել իրավիճակի գնահատման հարցում և հաշվի է առել գործի հանգամանքները՝ բեկանելով նախկինում կայացված դատավճիռներից մեկը, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում առկա չի եղել:

Ուշագրավ է, որ փաստական կանխավարկածներին, որոնք տեղ են գտել առանձին պետությունների օրենսդրություններում, ԵԴ-ն շատ զգույշ է մոտենում և յուրաքանչյուր գործով կարևորում է, թե արդյոք մեղադրյալին հնարավորություն տրվել է արդյունավետ պաշտպանվելու, այսինքն՝ հերքելու մեղքը հաստատող կանխավարկած-փաստերը (որոնք համարվում են գոյություն ունեցող, քանի դեռ հակառակը չի ապացուցվել): Կանխավարկած կա, որ կավատը ապրում է ոչ բարոյական ծագման եկամուտներով, կանխավարկած կա, որ մեղավոր է թմրամիջոցների առևտրի մեջ, երբ փորձում է փոխադրել թմրամիջոցներով ճամպրուկ: Այս պարագայում անմեղության ապացուցման պարտականություն

### **ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆՔ**

ընկած է մեղադրյալի վրա: Դատարանը այս դեպքերում հատուկ ուշադրություն է դարձնում որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալուն:

Ապացուցման պարտականության հետ սերտորեն կապված է նաև այսպես կոչված «լռության իրավունքը», երբ անձի կողմից իր անմեղության վերաբերյալ ապացույցներ չներկայացնելը չի դիտարկվում նրա մեղավորության ապացույց: Ընդհանուր առմամբ, քանի որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր մեղավորությունը, վերջինիս կողմից լռություն պահպանելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

Այս տեսանկյունից քննարկման է արժանի «Ձոն Մարեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործը, որտեղ ԵԴ-ն անդրադարձել է մեղադրյալի կողմից լռության պահպանման իրավունքին: Այս գործում Եվրոպական դատարանը սահմանում է, որ «լռության իրավունքը» բացարձակ չէ: Նույնիսկ չնայած նրա անհամատեղելիությանը բացարձակապես կամ հիմնականում մեղադրյալի լռության կամ նրա՝ հարցերին պատասխանելուց հրաժարվելու հիման վրա մեղադրանքի ապացուցման փորձի հետ, միանգամայն ակնհայտ է, որ նշված առավելությունը չի կարող կանխել այն, որ մեղադրյալի լռության փաստը հաշվի կառնվի այն իրավիճակներում, որոնք բացատրության կարիք են զգում: Դատարանը գտավ, որ այս գործով կիրառվող օրենքը չի խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Դիմումատուն չի ենթարկվել ուղղակի ճնշման, նրա նկատմամբ տույժ չի կիրառվել և նրան ազատագրված չեն սպառնացել: Հետագայում Դատարանը հայտարարեց, որ տրամաբանական եզրակացությունների կիրառումը առողջ բանականության դրսևորում է համարվում այն պայմաններում, երբ Դիմումատուն հրաժարվել է իր գործողություններին հիմնավորված բացատրություններ տալուց: Դատարանի

կողմից «արդարության» սկզբունքի պահպանման բավարար երաշխիքներ եղել են և ընդհանուր պարտականությունը, որը վերաբերում էր ապացույցներին, ընկած էր մեղադրանքի կողմի վրա, որը պարտավորված էր գործ բացել մինչև Դիմումատուի լռությունից որևէ հետևություններ անելը:

Վերը նշված բոլոր օրինակները, ինչպես նաև այն դեպքերում, երբ գործում են որոշակի կանխավարկածներ, ըստ մեզ, չեն նշանակում մեղավորության կանխավարկած, այսինքն՝ ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի նշանակում, որ վերջինս համարվում է մեղավոր, քանի դեռ հակառակը չի ապացուցել:

Սկզբնական ապացուցման պարտականությունը միշտ էլ քրեական հետապնդման մարմինների վրա է դրվում: Տարբեր են ապացույցների տեսակը և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները: Խնդիրն այն է, որ նշված դեպքերում քրեական հետապնդման մարմինների կողմից հավաքված ապացույցները անուղղակի ապացույցներ են: Մեղադրանքը, ճիշտ է, հիմնված է միայն անուղղակի ապացույցների վրա, սակայն դրանց համակցությունն այնքան ծանրակշիռ է, որ հանգեցնում է մեղադրյալի մեղավորության վերաբերյալ եզրակացության: Այս պարագայում նման ապացույցների հերքման պարտականությունը արդեն մնում է մեղադրյալի վրա:

Վերը հիշատակված կոնվենցիաների համատեքստում մեղադրյալը սկսում է ապացուցել, որ, օրինակ, իր՝ որպես հանրային պաշտոնատար անձի, ակտիվների՝ նշանակալի մեծացումը անօրինական չեն միայն այն բանից հետո, երբ իրավապահ մարմինները ցույց են տալիս, որ նրա հարստացման չափը էականորեն գերազանցում է նրա օրինական եկամուտները, ապացուցում է բոլոր հնարավոր օրինական եղանակներով դրանց ստացված չլինելը, ինչն առանձին երկրներում բավականին հեշտանում է քաղաքացիների և հատ-



կապես պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրման պարտադիր համակարգի ներդրված լինելու շնորհիվ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նոր քրեական դատավարության օրենսդրությամբ աննեղության կանխավարկածի վերաբերյալ հողվածում ավելացնել դրույթ

հետևյալ բովանդակությամբ՝ Օրենքով նախատեսված դեպքերում մեղադրյալի վրա կարող են դրվել բացառապես իր իրազեկության սահմաններում գտնվող առանձին փաստերի ապացուցման պարտականությունը (իրավական կանխավարկած):

---

<sup>1</sup> Տե՛ս Владимиров Л.Е. Учение об уголовных доказательствах. Тула, 2000, էջ 159:

<sup>2</sup> Տե՛ս Калиновский К.Б., Смирнов А.В. Презумпции в уголовном процессе. Российское правосудие. 2008. N 4, էջ 68-74:

<sup>3</sup> Տե՛ս Вульф В. Я. О бремени доказывания в английском уголовном процессе. Советское государство и право. - 1962, N 7, էջ 127-131:

<sup>4</sup> Տե՛ս Януш М. Тенденции в установлении бремени доказывания по делам о правонарушении против окружающей среды.

Юстиция Беларуси, N3 2001:

<sup>5</sup> Տե՛ս Խաչատրյան Մ. Ապացուցման պարտականությունն ըստ Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ 2003թ. Կոնվենցիայի 20-րդ հողվածի: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկան, 2006թ, թիվ 2, էջ 64:

<sup>6</sup> Տե՛ս Калиновский К.Б., Смирнов А.В. Презумпции в уголовном процессе. // Российское правосудие, 2008, N 4, էջ 68-74:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

**ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ**

**Միսակ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

*ՀՀ ոստիկանության ակադեմիայի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի ուսումնական սահայրենիք, ոստիկանության ավագ լեյտենանտ*

Հանցավորության դեմ պայքարի ոլորտում իրականացվող պետական միասնական քաղաքականությունը կոչվում է քրեական քաղաքականություն: Որպես քրեական քաղաքականության ուղղություններ՝ մասնագետներն առանձնացնում են դրա քրեաիրավական, քրեադատավարական, քրեակատարողական, քրեաբանական, վարչաիրավական, օպերատիվ-հետախուզական տարատեսակները<sup>1</sup>: Քրեաիրավական քաղաքականությունն իրենից ներկայացնում է քրեական օրենսդրության հիմնավորման, ձևակերպման և իրացման փուլերում պետական իշխանության մարմինների կողմից իրականացվող գործունեություն, որն ուղղված է հանցավոր ոտնձգություններից հասարակության պաշտպանությանն ու հանցագործությունների կանխմանը<sup>2</sup>: Պետության քրեաիրավական քաղաքականության իրացման կարևոր ձևեր են հանդիսանում քրեականացումը և ապաքրեականացումը, որոնք, արտացոլելով քրեաիրավական կարգավորման ոլորտում առկա հասարակական պահանջումները, իրականացնում են որոշակի գործառնություններ:

Լատիներեն *functio*՝ «գործառնություն», տերմինը բառացի նշանակում է կատարում<sup>3</sup>: Տեսական գրականության մեջ իրավունքի գործառնությունները բնորոշվում են որպես «իրավական ներգործության ուղղություններ, որոնք արտահայտում են հասարակական հարաբերությունների կազմակերպման (կանոնակարգման) գործընթացում իրավունքի դերը»<sup>4</sup>: Սոցիոլոգիական հետազոտություններում «գործառնություն» հասկացությունն ունի մի քանի նշանակություն՝ երկու կամ ավելի ժամանակավոր գործոնների փոխազդեցության պայմաններում դրանց կախվածության արտահայտություն, հետազոտության օբյեկտի ներսում տեղի ունեցող գործընթացների համակցություն, որևէ սոցիալական գործողության, գործընթացի, երևույթի ցանկալի արդյունք, այդ գործողության, գործընթացի, երևույթի բոլոր (ինչպես սպասելի, այնպես էլ կողմնակի) հետևանքների համակցություն<sup>5</sup>:

Քրեականացման և ապաքրեականացման գործառնությունները կարելի է բնորոշել որպես հասարակական կյանքի, մարդկանց գիտակցության ու վարքագծի և պետության իրավական համակարգի վրա այդ գործընթացների ազդեցության ուղղություններ:

Հասարակական անհրաժեշտությամբ պայմանավորված լինելու և մարդկանց վարքագծի նորմատիվ կարգավորման շնորհիվ քրեականացումն ու ապաքրեականացումը հանդես են գալիս որպես սոցիալական վերահսկողության<sup>6</sup> համակարգի տարրեր: Սոցիալական վերահսկողության համակարգում քրեականացման և ապաքրեականացման գործառնությունների պարզումը թույլ է տալիս բացահայտել քրեաիրավական արգելքի սահմանման և վերացման տեղն ու նշանակությունը սոցիալական վերահսկողության գործընթացների ու նեխանիզմների համակարգում, ինչը խիստ կարևոր է, այն առումով, որ օրենսդիրը հակահասարակական վարքագ-

---

ծին արծագանքելու միջոցների զինանոցում ընտրություն կատարելիս չզերագնահատի քրեականացման և ապաքրեականացման կարգավորիչ հնարավորությունները: Այլ խոսքով՝ քրեականացման և ապաքրեականացման գործընթացների դիտարկումը սոցիալական վերահսկողության համակարգում թույլ կտա ի հայտ բերել սոցիալական նորմերը խախտող վարքագծին արծագանքելու՝ քրեաիրավական արգելքի այլընտրանքային տարբերակները և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում լուծել դրանց կիրառման նպատակահարմարության հարցը:

Գրականության մեջ ներկայացված է սոցիալական վերահսկողության իրականացման եղանակների և միջոցների հետևյալ համակարգը. նախ՝ հասարակությունը սահմանում է արժեքներն ու նորմերը, երկրորդ՝ ապահովում է դրանց փոխանցումը օրենքների, ավանդույթների, սովորույթների միջոցով, երրորդ՝ ապահովում է անհատների կողմից այդ նորմերի և արժեքների յուրացումն ու ինտերիորիզացիան դրանց պահպանման համար խրախուսելու կամ խախտման համար պատժելու միջոցով, չորրորդ՝ միջոցներ է ձեռնարկում վարքագծի անցանկալի ձևերը կանխելու ուղղությամբ<sup>7</sup>:

Որպես սոցիալական վերահսկողության համակարգի տարրեր՝ քրեականացման և ապաքրեականացման գործընթացներն իրականացնում են տեղեկատվական և արժեքային գործառույթներ, իսկ քրեականացումը՝ նաև հանցագործությունների կանխման գործառույթ:

Իսկ որպես պետության քրեաիրավական քաղաքականության իրացման ձևեր՝ քրեականացումն ու ապաքրեականացումը կատարում են հանցավորության մակարդակի կարգավորման, պետական իշխանության հեղինակության պահպանման ու ամրապնդման և համակարգային-իրավական գործառույթներ:

Քրեականացման և ապաքրեականացման համակարգային-իրավական գործա-

ռույթի էությունը հանգում է հետևյալին: Ինչպես նշում է Ա.Ն.Իզնատովը, քրեական քաղաքականությունը պետության սոցիալ-իրավական քաղաքականության մասն է<sup>8</sup>: Ըստ այդմ՝ քրեական քաղաքականությունը մի կողմից պետք է համապատասխանի ողջ պետական քաղաքականության նպատակներին ու սկզբունքներին, իսկ մյուս կողմից՝ բնութագրվի ներքին միասնականությամբ և համաձայնեցվածությամբ: Հանցավորության դեմ պայքարի համաձայնեցված քաղաքականության հայեցակարգի մշակման և իրականացման կարևորությունն ընդգծվել է Եվրոպայի Խորհրդի մասնակից պետությունների նախարարների խորհրդի 1996թ. սեպտեմբերի 5-ի «Փոփոխվող Եվրոպայում հանցավորության դեմ պայքարի քաղաքականության մասին» N8 R)96)8 հանձնարարականում: Քրեական քաղաքականության իրավաստեղծ գործունեության արդյունքում ընդունված օրենսդրական և այլ իրավական ակտերը պետք է միասնական համակարգ կազմեն մյուս բոլոր իրավական ակտերի հետ: Իրավունքի տեսության մեջ որպես իրավունքի համակարգին բնորոշ գծեր առանձնացվում են դրա կառուցվածքային տարրերի (ճյուղերի, ինստիտուտների, նորմերի) միասնությունը, փոխգործողությունը, համաձայնեցվածությունը<sup>9</sup>: Ս.Ս. Ալեքսեևը նշում է, որ իրավական դրույթներն իրենց բնույթով այնպիսին են, որ դրանց գոյությունն ու գործառնությունը հնարավոր է միայն համաձայնեցված և միասնականացված լինելու դեպքում<sup>10</sup>: Բացառություն չէ նաև ՀՀ քրեական իրավունքը, որը, լինելով իրավական համակարգի բաղկացուցիչ մասը, մի կողմից միասնական, փոխգործող և համաձայնեցված իրավանորմերի ու ինստիտուտների ամբողջություն է, իսկ մյուս կողմից՝ որոշակի փոխգործակցության և համաձայնեցվածության մեջ է գտնվում իրավունքի այլ ճյուղերի հետ: Այդ հանգամանքից ելնելով՝ գրակա-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

նության մեջ առանձնացվել է քրեական իրավունքի համակարգային-իրավական գործառույթը<sup>11</sup>:

Այդ գործառույթը բնութագրական է նաև քրեականացմանը և ապաքրեականացմանը, քանի որ դրանց արդյունքում ստեղծված քրեաիրավական նորմերն էական նշանակություն ունեն իրավական համակարգի միասնականության և փոխգործակցության ապահովման համար: Ընդ որում, քրեականացման և ապաքրեականացման համակարգային-իրավական գործառույթն իրականացվում է ոչ միայն ներջուղային (քրեաիրավական), այլև միջջուղային մակարդակում:

Այսպես, կոնկրետ արարքների քրեականացումն ու ապաքրեականացումը պայմանավորում են քրեական իրավունքի ընդհանուր մասի որոշ նորմերի իրացումը: Օրինակ, արարքի հանցավորության վերացումը հանգեցնում է քրեական օրենքի հետադարձ ուժը նախատեսող (ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր.օր.) հոդված 13, առաջին մաս) նորմի կիրառմանը, իսկ արարքի հանցավորության սահմանման փաստը քրեական օրենքին հետադարձ ուժ տալու արգելք է (քր.օր.-ի հոդված 13, երկրորդ մաս): Արարքի հանցավորության վերացումը նաև այդ արարքի կատարման համար պատիժ կրած անձի իրավական կարգավիճակի փոփոխման հիմք է: Այսպես, քր.օր.-ի հոդված 84-ի երրորդ մասի համաձայն՝ դատվածություն չունեցող է համարվում այն անձը, ով պատիժ է կրել այնպիսի արարքի համար, որի հանցավորությունը վերացված է օրենքով:

Քրեադատավարական որոշ նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել այն հետևության, որ քրեականացումն ու ապաքրեականացումը համակարգային-իրավական գործառույթ են իրականաց-

նում նաև միջջուղային մակարդակում: Այսպես, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ քր.դատ.օր.) հոդված 52-ի երկրորդ մասի երկրորդ պարբերության՝ «Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, եթե դատապարտյալը եռամսյա ժամկետում չի դիմում դատարան դատական ակտի վերանայման նպատակով, ապա դատախազը եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան»: Տվյալ դեպքում, փաստորեն, արարքի հանցավորության վերացումը հանդես է գալիս որպես իրավաբանական փաստ, որի հիման վրա ծագում է քրեադատավարական իրավահարաբերություն: Քր.դատ.օր.-ի՝ հանցանք կատարած անձանց հանձնումը կարգավորող հոդված 487-ի երկրորդ մասը սահմանում է. «Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի...»: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ «Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի...»<sup>12</sup>: Այս դեպքերում էլ որպես քրեադատավարական իրավանորմերի կիրառման պայման հանդես է գալիս արարքի հանցավորության սահմանված լինելու փաստը:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ գործնական կարևոր նշանակություն ունեցող մի հարցի, որը վերաբերում է միջջուղային մակարդակում ապաքրեականացման համակարգային-իրավական

գործառույթին: Եթե արարքի կատարման պահին այն համարվել է հանցագործություն, սակայն քրեական գործի վարույթի ընթացքում քրեական օրենքով այդ արարքի հանցավորությունը վերացվել է, ապա տվյալ օրենքին հետադարձ ուժ տալու կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում կիրառել համապատասխան քրեադատավարական նորմը: Մինչդեռ քր. դատ. օր.-ի հոդված 35-ում որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք նշված չէ արարքի հանցավորության վերացումը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկայի ուսումնասիրությունը, նման դեպքերում քրեական գործի վարույթը կարճվում է քր. դատ. օր.-ի հոդված 35-ի առաջին մասի երկրորդ կետի հիման վրա (արարքի մեջ հանցակազմ չկա): Գտնում ենք, որ արարքի հանցավորության վերացման դեպքում նշված հիմքով քրեական գործի վարույթը կարճելը ճիշտ չէ: Ասվածը հիմնավորելու համար բերենք հետևյալ փաստարկը: Արարքում հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի վարույթի կարճման դեպքում անձը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ (քր. դատ. օր.-ի հոդված 66-ի առաջին մաս): Ստացվում է, որ քննարկվող դեպքում արդարացված կհամարվի և համապատասխան իրավունքներով կօժտվի նաև այն անձը, ում նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է նրա կողմից կատարված արարքի ապաքրեականացման հիմքով: Համաձայն քր. դատ. օր.-ի հոդված 66-ի երրորդ մասի՝ արդարացվածն իրավունք ունի պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու հետևանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ ներառյալ նաև հնարավոր ստալիք օգուտները: Մինչդեռ, եթե անձի ձերբակալման, կալանավորման կամ որպես մեղադրյալ ներգրավելու պահին նրա կատարած ա-

րարքը համարվել է հանցագործություն, ապա ստացվում է, որ նշված գործողությունների կատարման հիմքեր եղել են: Հետևաբար, նման իրավիճակում քրեական գործի վարույթի կարճումը չպետք է ենթադրի ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցման իրավունք: Բացի այդ, քր. դատ. օր.-ի հոդված 66-ի իններորդ և տասներորդ մասերը նախատեսում են նաև արդարացվածի բարոյական վնասի հատուցման իրավունքը: Սասնավորապես, արդարացվածի պահանջով դատարանը կամ քննություն իրականացնող մարմինները պարտավոր են այդ մասին երկշաբաթյա ժամկետում տեղյակ պահել անձի նախկին և ներկա աշխատանքի, ուսման և բնակության վայր, լրատվության միջոցը, որը հրապարակել է քրեական գործի վարույթով կասկածյալին կամ մեղադրյալին նշավակող տեղեկություններ, պարտավոր է մեկ ամսվա ընթացքում հայտնել գործով կայացված վերջնական որոշման մասին, քրեական հետապնդման մարմինը պարտավոր է գրավոր ներողություն հայցել արդարացվածից: Բարոյական վնասի հատուցումը, փաստորեն, ենթադրում է անձի պատվի, արժանապատվության և բարի համբավի վերականգնում, մինչդեռ քննարկվող իրավիճակում արարքի կատարման պահին անձը գիտակցում է, որ կատարում է իրավաբանորեն և բարոյապես դատապարտելի արարք, ինչով «իր ձեռքով» արատավորում է իր բարի համբավը: Հետևաբար, ապաքրեականացման հիմքով քրեական գործի վարույթի կարճման դեպքում անձին չպետք է վերապահվի բարոյական վնասի հատուցման իրավունք: Իսկապես, անիմաստ կլիներ քրեական հետապնդման մարմնի վրա պարտականություն դնել գրավոր ներողություն հայցել անձից ընդամենը այն բանի համար, որ վերջինիս կատարած արարքը օրենսդրորեն դադա-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

րել է հանցավոր լինելուց: Եվ քանի որ ապաքրեականացման տեղեկատվական գործառույթն իրականացվում է ընդհանուր կարգով և վերաբերում է ապաքրեականացված բոլոր արարքներին, ապա այլևս չի առաջանում ապաքրեականացված կոնկրետ, եզակի արարքի կապակցությամբ քրեական գործի վարույթի կարճման վերաբերյալ անձի աշխատանքի, ուսման և բնակության վայր հայտնելու անհրաժեշտություն: Այսպիսով, արարքի ապաքրեականացման դեպքում քրեական գործի վարույթը չպետք է կարճվի որևէ արդարացնող հիմքով ընդհանրապես և արարքում հանցակազմի բացակայության հիմքով մասնավորապես:

Քր.դատ.օր.-ի հոդված 35-ում նշված՝ քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող, այսպես կոչված, ոչ արդարացնող հիմքերից ապաքրեականացմանը որոշակիորեն վերաբերում է նշված հոդվածի առաջին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքը՝ անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից: Ապաքրեականացման դեպքում որպես քր.օր.-ի Ընդհանուր մասի այդպիսի դրույթ հանդես է գալիս հոդված 13-ում ամրագրված՝ քրեական օրենքի հետադարձ ուժը նախատեսող նորմը: Սակայն պետք է նշել, որ քր.օր.-ի՝ արարքի հանցավորությունը վերացնող քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ դրույթը չի կարող հանդիսանալ քրեական գործի վարույթի կարճման ինքնուրույն նյութական հիմք, քանի որ կոնկրետ արարքի հանցավորության վերացումը կատարվում է քր.օր.-ի ոչ թե Ընդհանուր, այլ Հատուկ մասում:

Ուստի գտնում ենք, որ ապաքրեակա-

նացման համակարգային-իրավական գործառույթի լիարժեք և միատեսակ իրականացումն ապահովելու համար արարքի հանցավորության վերացումն անհրաժեշտ է նախատեսել որպես քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող ինքնուրույն, ոչ արդարացնող դատավարական հիմք: Ընդ որում, այդ հիմքը պետք է տարածվի միայն այն դեպքերի վրա, երբ արարքի հանցավորության վերացումը տեղի է ունեցել այդ արարքը կատարելուց հետո և մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Բանն այն է, որ եթե արարքն ապաքրեականացվել է մինչև դրա կատարումը, ապա արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելը և քրեական գործի վարույթը կարճելն իրավաչափ է, քանի որ անձի արարքում հանցակազմը բացակայում է ի սկզբանե: Իսկ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո արարքի ապաքրեականացումը վերաբերում է ոչ թե քրեադատավարական, այլ քրեակատարողական իրավունքի կարգավորման ոլորտին: Այս առումով պետք է նշել, որ թեև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 112-ի առաջին մասում որպես պատժից ազատելու ինքնուրույն հիմք նշված չէ արարքի ապաքրեականացումը, սակայն այդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է. «Օրենքով կարող են նախատեսվել պատժից ազատելու այլ հիմքեր»: Այսպես, օրինակ, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի (18.04.2003թ.) հոդված 3-ի առաջին մասը սահմանում է. «2003 թվականի օգոստոսի մեկից հիմնական կամ լրացուցիչ պատժից ազատել 1961 թվականի մարտի 7-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն այն արարքների համար դատապարտված անձանց, որոնք, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության

քրեական օրենսգրքի համաձայն, հանցագործություն չեն համարվում»:

Ելնելով վերոշարադրյալից՝ առաջարկում ենք արարքը կատարելուց հետո, բայց նախքան դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը, դրա ապաքրեականացման դեպքում քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու համապատասխան դատավա-

րական հիմք ստեղծելու և այդ հարցում իրավակիրառ պրակտիկայի միասնականությունն ապահովելու նպատակով քր. դատ. օր.-ի հոդված 35-ի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1 կետով՝ «արարքը կատարելուց հետո, սակայն նախքան դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը, արարքի հանցավորությունը վերացվել է»:

<sup>1</sup> Տե՛ս Алексеев А.И., Овчинский В.С., Побегайло Э.Ф. Российская уголовная политика: преодоление кризиса. М., 2006, էջեր 14-15:

<sup>2</sup> Տե՛ս В.В.Мальцев, Уголовно-правовая политика и принципы уголовного права//Современные проблемы уголовной политики, уголовного права, криминологии и уголовно-исполнительного права. Академия управления МВД России. Сборник научных статей. М., 2007, էջեր 15-16:

<sup>3</sup> Տե՛ս Первый толковый БЭС. СПб., 2006, էջ 1937:

<sup>4</sup> Տե՛ս Алексеев С.С. Общая теория права. Том 1, М., 1981, էջ 191:

<sup>5</sup> Տե՛ս Кудрявцев В.Н., Казимирчук В.П. Современная социология права. М., 1995, էջ 65:

<sup>6</sup> Սոցիալական վերահսկողությունը սոցիալական համակարգի ինքնակարգավորման եղանակն է, որը նորմատիվ (այդ թվում՝ իրավական) կարգավորման միջոցով ապահովում է այդ համակարգի բաղկացուցիչ տարրերի ներդաշնակ փոխգործողությունը: Տե՛ս Кудрявцев В.Н., Дагель П.С. и др., Основания уголовно-правового запрета (Криминализация и декриминализация), М., 1982, էջ

121:

<sup>7</sup> Տե՛ս Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период, Ереван, 2007, էջ 184:

<sup>8</sup> Տե՛ս Игнатов А.Н. Уголовное право: понятие, предмет и система // Уголовное право России: в 2 т. Под. ред. А.Н.Игнатова, Ю.А.Красикова, Т.1, Общая часть, М., 1999, էջեր 3-4:

<sup>9</sup> Տե՛ս Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права, М., 1997, էջ 349:

<sup>10</sup> Տե՛ս Алексеев С.С. Նշվ. աշխ., էջ 242:

<sup>11</sup> Տե՛ս Злобин Г.А. О необходимости концептуального подхода к совершенствованию законодательства //Конституция СССР и дальнейшее укрепление законности и правопорядка, М., 1979, էջ 76:

<sup>12</sup> Այս դրույթներն ամրագրված են նաև Քիչնկի «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 2002թ. կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 19.02.2005թ.) հոդված 66-ի («Հանձման պարտավորությունը») երկրորդ և երրորդ մասերում:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ****ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱՆՍԱՐՆ  
ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ****Տիգրան ԵՐԱՆՈՍՅԱՆ***ԵՊՀ սահմանադրական իրավունքի**ամբիոնի հայցորդ,**ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավա-  
բանական վարչության գլխավոր մասնագետ*

Հարկային իրավախախտման ֆինանսաիրավական բնույթը մեծապես պայմանավորված է հարկի բնույթով, դրա գործառույթներով ու հետապնդած նպատակներով: Հարկը այն «արյունատար սնուցող» օղակն է, որը ապահովում է պետության կենսագործունեությունը, հանրության տնտեսական անվտանգությունը: Պետական գանձարանի մուտքերի «առյուծի բաժինը» որպես կանոն կազմում են հարկերը<sup>1</sup>:

Գրեթե բոլոր երկրների հիմնարար իրավական ակտերում տարաբնույթ ձևակերպումներով սահմանվում են յուրաքանչյուր անձի հարկերը վճարելու պարտավորությունը՝ ընդգծելով դրա ֆինանսաիրավական բնույթն ու էությունը: **Իսպանիայի Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.** «Բոլորը հավասար և պրոգրեսիվ հարկման սկզբունքի հիման վրա արդարացի հարկային համակարգի միջոցով իրենց տնտեսական հնարավորություններին համապատասխան մասնակցում են հանրային ծախսերի ֆինանսավորմանը, որը ոչ մի դեպքում չպետք է դիտվի որպես բռնագանձում»: **Իտալիայի Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն.** «Բոլորը պարտավոր են մասնակցել պետական ծախսերին՝ իրենց հնարավորություններին համապատասխան»: **Թուրքիայի Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն.** «Հանրային ծախսերը ծածկելու նպատակով բոլորը պարտավոր են ի-

րենց ֆինանսական հնարավորություններին համապատասխան վճարել հարկեր»<sup>2</sup>:

Իհարկե, սահմանադրական տարատեսակ ձևակերպումներում միանշանակ է հարկի «առաքելությունը», դրա ֆինանսական ֆիսկալային բնույթը:

**ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել այլ պարտադիր վճարումներ:**

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկներից, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցչություններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում»:

Այսօր արդեն ԱԺ-ի քննարկման է ներկայացված ՀՀ հարկային օրենսգրքի ընդհանուր մասի նախագիծը, որի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկը սահմանվում է որպես «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային գործունեության ֆինանսական ապահովման նպատակով ՀՀ պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց վճար, որը վճարվում է ֆիզիկական անձանց և կազմակերպությունների կողմից՝ օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում»:



Չանդրադառնալով հարկի վերոնշյալ սահմանումներում առկա թերություններին և իրավաբանական գրականությունում հարկի վերաբերյալ տարաբնույթ բնորոշումներին՝ ուղղակի նշենք, որ հարկը **պետության գործունեության ֆինանսական ապահովման և հանրային ծախսերի ծածկելու նպատակով օրենքով նախատեսված բոլոր հիմնական տարրերի (հարկվող օբյեկտ, հարկման բազա, հարկի դրույքաչափ, հարկի հաշվարկման կարգ, հարկի վճարման ժամկետ ու կարգ) առկայության պայմաններում հարկատուներից (կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից) պարտադիր, անհատականորեն, անհատույց և անվերադարձելիության սկզբունքներով պետական և տեղական բյուջե կամ արտաբյուջետային հիմնադրամներ գանձվող դրամական վճարն է:**

Ինչպես արդեն հասկանալի է, հարկի հիմնարար նպատակը մասնավոր սեկտորին հարկման միջոցով հանրային ծախսերին մասնակից դարձնելն է՝ նրանց վրա դնելով համապատասխան ֆինանսական կամ ավելի կոնկրետ՝ **դրամական պարտավորություն:** Ինչպես իրավագիտորեն սահմանում են ամերիկյան տեսաբանները, հարկը պետության կամ պետությանը համարժեք գործառույթ իրականացնող մարմինների (օրինակ՝ սեպարատիստական կամ հեղափոխական շարժումների) կողմից անհատների կամ իրավաբանական անձանց վրա դրվող **ֆինանսական պարտավորություն** է<sup>3</sup>: Նույնիսկ շատ երկրների հարկային օրենսգրքերում կամ ակտերում հարկը ուղղակիորեն սահմանվում է որպես պետության կամ մունիցիպալ կառավարման մարմինների կողմից իրենց գործառույթների իրականացման ապահովման նպատակով օրենքով հարկատուների վրա դրվող ֆինանսական<sup>4</sup> կամ ավելի կոնկրետ՝ դրամական պարտականություն<sup>5</sup>:

Բոլոր ժամանակներում հարկի նույնիսկ ամենացածր դրույքաչափի պարագայում մարդիկ միշտ չէ, որ գոհունակությամբ են կատարել իրենց ֆինանսաիրավական

պարտականությունները՝ փորձելով տարբեր եղանակներով, տարատեսակ կանոնների խախտմամբ խուսափել հարկերը վճարելուց, դրանով վնասներ պատճառելով **հանրային ֆինանսական շահերին:**

**Փաստորեն, հարկի ֆինանսաիրավական բնույթով ու նշանակությամբ է պայմանավորված հարկային իրավախախտման վտանգավորության, ինչպես նաև՝ դրա արդյունքում առաջացող իրավական հետևանքների բնույթը:**

Հարկային իրավախախտումը, այդ թվում, հարկային պատասխանատվությունը՝ որպես իրավախախտման և պատասխանատվության ինքնուրույն տեսակ, գոյություն չունեն, այնպես ինչպես հարկային իրավունքը՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, գոյություն չունի<sup>6</sup>:

Իրավաբանական գրականության մեջ հարկային իրավախախտման բնույթի վերաբերյալ մոտեցումները միանշանակ չեն: Հեղինակների մի խումբ այն համարում է վարչական իրավախախտման տեսակ, իսկ մյուս խումբը՝ հակառակը՝ այն դիտում է ֆինանսական իրավախախտման կազմում<sup>7</sup>:

Ֆինանսական, մասնավորապես հարկային օրենսդրության զարգացման ներկայիս միտումները, հարկային վեճերի վերաբերյալ աստիճանաբար ձևավորվող դատական պրակտիկան առավել նկատելի են դարձնում հարկային իրավախախտման բնույթի յուրահատկությունները՝ ըստ այդմ հիմնավորելով դրա ֆինանսական իրավախախտման տեսակի գոյությունը: Նույնիսկ նման մոտեցումը ժխտող որոշ տեսաբաններ փորձեցին հարկերի մասին օրենսդրության բոլոր խախտումները աստիճանաբար տարանջատել երեք հիմնական տեսակների՝ **ֆինանսական իրավախախտման տեսակ հանդիսացող հարկային իրավախախտումներ, վարչական իրավախախտման հատկանիշներ բովանդակող հարկերի և հավաքագրումների մասին օրենսդրության խախտումներ (հարկային զանցանքներ), հանցագործության հատա-**

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

*կանհիշներ բովանդակող հարկերի և հավաքագրումների մասին օրենսդրության խախտումներ (հարկային հանցագործություններ), և դրա հիման վրա համապատասխանաբար առանձնացնելով իրավաբանական պատասխանատվության երեք տեսակներ՝ **ֆինանսական, վարչական և քրեական պատասխանատվություն**<sup>8</sup>:*

Այդ առումով հարկային իրավախախտման բնորոշումը տրվում է ֆինանսական իրավախախտման բնութագրող հատկանիշների համատեքստում՝ իհարկե հաշվի առնելով նաև դրանում առկա ֆինանսական՝ այլ իրավախախտումներից տարբերող որոշ առանձնահատկություններ:

Մասնագիտական գրականությունում միանշանակ չեն նաև ֆինանսական իրավախախտման վերաբերյալ մոտեցումները: Գոյություն ունեն ֆինանսական իրավախախտման որոշ սահմանումներ, որոնցում փորձ է արվում ֆինանսական իրավախախտման յուրահատկությունը, այն բնորոշող հատկանիշները:

Ֆինանսական իրավախախտումը **ֆինանսական իրավունքի նորմերը** խախտող մեղավորությամբ կատարված այն արարքն է, որի համար օրենսդրությամբ նախատեսված է ֆինանսաիրավական պատասխանատվություն<sup>9</sup>: Ավելի կոնկրետ՝ ֆինանսական իրավախախտումը ֆինանսական իրավունքի **կոլեկտիվ կամ անհատական սուբյեկտի՝ պետության և մունիցիպալ կազմավորումների ֆինանսական գործունեության բնագավառում** մեղավորությամբ կատարված հակաիրավական այն արարքն է (գործողություն կամ անգործություն), որի համար օրենսդրությամբ սահմանված է ֆինանսա-իրավական պատասխանատվության միջոցներ<sup>10</sup>:

Որոշ տեսաբաններ, փորձելով առավել բացահայտել ֆինանսական իրավախախտման էությունը, իրավախախտման այլ տեսակներից դրա տարբերիչ հատկա-

նիշները, այն բնութագրում են որպես ֆինանսական օրենսդրության պահանջները խախտող մեղավորությամբ կատարված արարք, որի հետևանքով վնաս է պատճառվում **պետության ֆինանսական համակարգին**, և որի կատարման համար մեղավոր անձի նկատմամբ կիրառվում է ֆինանսական սանկցիա<sup>11</sup>:

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում **Ռովինսկին**, ընդգծելով ֆինանսական իրավախախտման առանձնահատուկ բնույթը, արդարացիորեն նշում է, որ պետական ֆինանսների բնագավառում սահմանված կանոնների խախտման համար պատասխանատվություն է դրվում նաև **պետության հանդեպ ֆինանսական պարտականությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում**<sup>12</sup>: Այս եզրահանգման հիման վրա Վ. Ն. Ռեպեցկին ֆինանսական իրավախախտումը բնորոշում է որպես ֆինանսական իրավահարաբերության սուբյեկտի այնպիսի մեղավոր հակաիրավական գործողությունը կամ անգործությունը, որը դրսևորվում է պետության հանդեպ **ֆինանսական պարտականության չկատարմամբ, և որի նկատմամբ կիրառվում է ֆինանսաիրավական նորմերով սահմանված սանկցիա**<sup>13</sup>:

Պետության **ֆինանսական համակարգին** վնաս պատճառելու կամ առհասարակ **ֆինանսական գործունեության ոլորտում** իրավախախտում կատարելու փաստի մասին շեշտելը բավարար չէ ֆինանսական իրավախախտումը՝ իրավախախտման այլ տեսակներից տարանջատելու համար, առավել ևս եթե ընդունենք, որ ֆինանսական համակարգին կարող են վնաս պատճառել նաև իրավախախտման այլ տեսակներ<sup>14</sup>: Ֆինանսական իրավախախտման յուրահատկությունը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ թե դրա կատարման պատճառով **ի՞նչ տեսակի հարաբերություններ** են խախտվում, **ի՞նչ պիսի հետևանքներ են առաջանում, վնասի բնույթը** և մի շարք այլ հանգամանքներ, որոնք թույլ են տալիս ընդգծել ֆինանսա-

կան իրավախախտման առանձնահատկությունները: Մասնավորապես, կենտրոնացված և ապակենտրոնացված հիմնադրամների կազմավորման, բաշխման և օգտագործման սահմանված կարգի խախտումը, որը դրսևորվում է սահմանված չափի գումարների համապատասխան հիմնադրամներ մուտք չանելով կամ ոչ բավարար չափով վճարելով, կամ այդ հիմնադրամի միջոցների աննպատակային կամ ոչ նպատակային նշանակությամբ ծախսելով, կազմում է **տնտեսական վնասի՝ ֆինանսատնտեսական պատասխանատվության օբյեկտիվ հիմքի բովանդակությունը: Ֆինանսական սանկցիայի կիրառման համար կարևոր է տնտեսական վնասի առաջացման փաստը, տնտեսության կոնկրետ ծյուղի շահերի խախտումը**<sup>6</sup>: Չնայած տնտեսության կառավարման պլանային համակարգի սկզբունքների գոյությանը՝ այդուհանդերձ խորհրդային ժամանակաշրջանում ֆինանսական իրավախախտման բնույթը ևս փորձում էին պարզաբանել վնասի բնույթով՝ ըստ այդմ ընդգծելով դրա՝ որպես իրավախախտման առանձին տեսակի գոյությունը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը վերաբերում է հարկային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության ինստիտուտին, որի 21-րդ հոդ-ի համաձայն՝ «հարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ ՀՀ օրենքներով սահմանված կարգով»: Այս անորոշ սահմանումը, բնականաբար, որևէ կերպ չի արտացոլում հարկային իրավախախտման էությունը ու բնութագրող հատկանիշները: Հարկային օրենսգրքի նախագծի 5-րդ բաժնում, որը նվիրված է «հարկային իրավախախտումներին և դրանց կատարման համար պատասխանատվությանը», փորձելով առավել բացահայտել հարկային իրավախախտման բովանդակությունը և ընդգծել դրա յուրահատկությունը, այն, որոշ «հայեցակարգային» թերություններով հանդերձ, սահմանվում է որպես **հարկ վճա-**

**րողի (կամ հարկային գործակալի) կողմից օրենսգրքի դրույթների խախտում (գործողություն կամ անգործություն), որի համար օրենսգրքով սահմանվում է պատասխանատվություն**: Այս սահմանումը նույնպես չի արտացոլում հարկային իրավախախտման իրավական ամբողջ էությունը, դրա իրավական, սոցիալ-տնտեսական և այլ հետևանքները: Միանշանակ է, որ հարկային իրավախախտմանը բնորոշ են իրավախախտման ընդհանուր հատկանիշները՝ **հակահրավակամությունը, մեղավորությունը, հակահրավական արարքի և առաջացող բացասական հետևանքների միջև պատճառական կապը**, ինչպես նաև՝ այդ **արարքի պատժելիությունը**: Սակայն դրանք բավարար չափանիշ չեն հարկային իրավախախտման՝ որպես ֆինանսական իրավախախտման տեսակի և այլ բնույթի իրավախախտումների միջև տարանջատող սահմանագիծ անցկացնելու համար, քանի որ այս հատկանիշները բնութագրական են նաև իրավախախտման այլ տեսակներին:

Առհասարակ, հարկային իրավախախտումն ընկալվում է երկու առումներով՝ լայն և նեղ:

**Լայն առումով** այն դիտվում է որպես հարկային օրենսդրության խախտման հոմանիշ, իսկ **նեղ առումով**՝ որպես «մաքուր» հարկային իրավախախտում:

Հարկային իրավախախտումը դիտելով **լայն կոնտեքստով**՝ այն սահմանվում է որպես հարկային օրենսդրությամբ սահմանված պետական և տեղական բյուջեների եկամուտների հարկային աղբյուրների համալրման պահանջների չկատարման ուղղված հակահրավական, մեղավորությամբ կատարված ցանկացած արարք: Այն ուղղված է պետական կենտրոնացված և ապակենտրոնացված բյուջետային համակարգի եկամուտների հավաքագրման և կառավարման կարգի դեմ<sup>6</sup>:

Հարկային իրավախախտումը որպես կառավարման կարգի դեմ ուղղված իրավախախտում դիտարկելը պայմանավորված է առհասարակ **պետության ֆինանսա-**

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐԻՈՆ**

**կան գործունեության և ֆինանսների պետական կառավարման** հասկացությունների նույնացման հետ, **ինչը, մեր կարծիքով, այնքան էլ հիմնավոր չէ**: Ֆինանսների պետական կառավարումն արտացոլում է ֆինանսական գործունեության օբյեկտի և սուբյեկտի կապի բնույթը, որի հետ կապված՝ այն «ընկղմվում է» պետության ֆինանսական գործունեության կառուցվածքի մեջ և հանդիսանում է դրա անբաժանելի բնույթը: *Ֆինանսական բնագավառում ֆինանսների (հարկերի) կառավարման կանոնների խախտումը պետք է տարանջատել ֆինանսական (հարկային) իրավախախտումից*<sup>17</sup>:

Հարկման ոլորտում կատարվող բոլոր խախտումները չեն, որ բնորոշվում են հարկային իրավախախտում, և հեղինակները այն **ճեղ առումով** բնութագրում են որպես հարկատուի, հարկային գործակալի կամ նրանց ներկայացուցչի մեղավորությամբ կատարված հակաիրավական (հարկերի և հավաքագրումների մասին օրենսդրության խախտումը) այն արարքը (գործողություն կամ անգործություն), որի համար սույն օրենսգրքով սահմանվում է պատասխանատվություն: Հարկային իրավախախտման նման սահմանում է տրված **ՌԴ ԳՕ-ի 106-րդ և Ղրղզստանի ԳՕ-ի 126-րդ հոդ-ով**: Ի տարբերություն այս սահմանումների՝ **Սուլդովայի** հարկային օրենսգիրքը, փորձելով առավել բացահայտել հարկային խախտման էությունն ու բնույթը, 129-րդ հոդվածում հարկային իրավախախտում հասկացությունը բնորոշում է որպես **հարկային հարաբերության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը խախտող, հարկային օրենսդրության դրույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարմամբ դրսևորվող** գործողություն կամ անգործություն, որոնց համար օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Այս ձևակերպմանը համահունչ՝ որոշ

տեսաբաններ նույնպես հարկային իրավախախտումը սահմանում են որպես մեղավորությամբ կատարված հակաիրավական այն արարքները (գործողություն կամ անգործություն), որոնք **չեն կատարում կամ ոչ պատշաճ ձևով են կատարում հարկային պարտավորությունները՝ խախտելով հարկային հարաբերության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը**, և որոնց համար նախատեսված է իրավաբանական պատասխանատվություն<sup>18</sup>: Ավելի պարզ՝ հարկային իրավախախտում են համարվում միայն այն արարքները, որոնք ուղղված են բյուջեի հանդեպ հարկատուի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանների ստեղծմանը<sup>19</sup>, իսկ նրանք, որոնք անուղղակի ազդեցություն ունեն հարկային հարաբերությունների նկատմամբ, հարկային իրավախախտում չեն համարվում: Օրինակ՝ եթե պաշտոնատար անձը կաշառքի միջոցով հարկատուին տալիս է հարկային արտոնություններ, ապա նա Համարվում է պաշտոնական և ոչ թե տնտեսական հանցագործության սուբյեկտ:

Սակայն միայն հարկային օրենսդրության դրույթների չկատարման փաստի մասին կամ հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին մշելը բավարար չեն հարկային իրավախախտման յուրահատկությունը լիովին «նկատելի» դարձնելու համար: Հարկային իրավախախտման **էությունը** պարզաբանելու համար կարևոր դեր է խաղում **հարկային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով հանրային հիմնադրամների պատճառվող վնասը, դրա բնույթը**: Այսինքն, հարկային իրավախախտում է համարվում ոչ թե այն արարքը, որը ուղղակի **հակասում է** իրավունքի այս կամ այն նորմին, այլ այն, որը **վնաս է պատճառում կամ այդպիսի վնաս պատճառելու սպառնալիք է պարունակում**: **Կոզիրևի** պնդմամբ արարքը պետք է համարվի հարկային իրավախախտում միայն այն դեպքում, երբ այն վնաս է

պատճառել հարկերի և հավաքագրումների մասին օրենսդրությամբ պաշտպանվող հասարակական հարաբերություններին<sup>20</sup>: Այսինքն՝ նաև հանրային վտանգավորության կամ վնասակարության բնույթի հատկանիշով է պայմանավորված հարկային իրավախախտման՝ իրավախախտման մյուս տեսակներից, մասնավորապես վարչական իրավախախտումից տարբերությունը:

Շատ զարգացած երկրներում հարկային իրավախախտում են համարվում այն արարքները, որոնք առաջացրել են հանրորեն վտանգավոր հետևանքներ: Օրինակ՝ **Մեծ Բրիտանիայի «Հարկերի կառավարման մասին» 1970 թ.** օրենքի համաձայն՝ հարկային ծառայություն կեղծ տեղեկություններ կամ փաստաթղթեր ներկայացնելը հարկային իրավախախտում է համարվում այն դեպքում, երբ առաջացել է եկամտահարկի կամ կապիտալի վրա դրվող հարկի (մեր երկրում՝ ԱԱՀ-ի) ոչ ճիշտ վճարման, կամ **Գերմանիայի 1977թ. «Հարկերի և վճարների մասին դրույթների»** համաձայն՝ հաշվապահական փաստաթղթերի ոչ ճիշտ վարելը համարվում է հարկային իրավախախտում, եթե այն ստեղծել է հարկային վճարները թաքցնելու և անօրինական հարկային եկամուտներ ստանալու հնարավորություն: **Լատվիայի «Հարկերի և վճարների մասին» օրենքի** 32-րդ հոդվածի համաձայն, եթե հարկատուն, խախտելով հարկային օրենսդրության պահանջները, **հարկային մարմին ներկայացրած հայտարարում կամ հարկային հաշվարկներում նվազեցնում է հարկման բազան, իսկ հարկվող մեծությունը** որոշվում է դրանից, ապա հարկային մարմինը բյուջեի կորցրած եկամուտները բնագամծում է հարկման բազան նվազեցրած հարկ վճարողներից և նշանակում տուգանք այդ գումարի չափով, եթե տուգանքի այլ չափեր նախատեսված չեն հատուկ հարկային օրենքներով<sup>21</sup>:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 12-րդ գլուխը վերաբերում է առևտրի, ֆինանսների և

տնայնագործական արհեստներով զբաղվելու բնագավառում վարչական իրավախախտումներին, որոնց թվում նախատեսված են այնպիսի վարչական զանցակազմեր, ինչպիսիք են *ապօրինի ձեռնարկատիրությանը զբաղվելը* /հոդ. 169/, *հաշվապահական հաշվառումը խախտումով վարելը* /հոդ. 169.1/ կամ *հաշվապահական հաշվառում չվարելը* /հոդ. 169.9/ և այլն: Նույն անվամբ իրավախախտման կազմեր սահմանված են նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքում (մասնավորապես՝ հաշվապահական հաշվառում չվարել կամ սխալ վարելը /Հոդ. 25/, ապօրինի ձեռնարկատիրությունը /Հոդ. 26/ և այլն): Շատ դեպքերում նույնիսկ առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ միևնույն արարքի համար անձին կարող են զուգահեռ ենթարկել պատասխանատվության, ինչը անընդունելի է կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության իրավական սկզբունքի համաձայն: Իհարկե, այս ամենից զերծ մնալը առաջին հերթին պայմանավորված է հարկային իրավախախտման հասկացության ճիշտ բնորոշմամբ և հարկային կամ ֆինանսական ոլորտում կատարվող վարչական զանցանքներից դրա հստակ տարանջատմամբ, ինչը, ցավոք սրտի, կատարված չէ մեր ներպետական օրենսդրությամբ՝ հանգեցնելով իրավունքի նորմերի տարաբնույթ կոլիզիայի:

Պետք է նկատել, որ հարկային իրավախախտման արդյունքում ուղղակի հարկային ինչ-որ «կառավարման» կանոններ չեն խախտվում, այլ հարկային հարաբերության մասնակիցների կողմից **օրենքով նախատեսված հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում պետության ընդհանրապես հանրության ֆինանսական շահերին ուղղակի կամ անուղղակի պատճառվում կամ վնաս պատճառելու սպառնալիք է առաջանում:**

Այդ առումով գտնում ենք, որ առավել հիմնավոր է հարկային իրավախախտման հասկացության և դրա բնութագրող հատ-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ**

կանգնների մեջ նշել ոչ միայն **հակաիրավակականության**, այսինքն՝ միանշանակ օրենքի նորմի խախտման, **այլ նաև հանրային վտանգավոր կամ հանրային վնասակար լինելու գործոնները**, որոնք պայմանավորված են հանրային հիմնադրամների սահմանված չափի գումարներ չվճարելով, հանրային իշխանությանը պատճառվող վնասով, ինչը հարկային իրավախախտման յուրահատկությունը բնորոշող էական առանձնահատկություններից է:

Ինչպես գիտենք, հարկային օրենսդրությամբ հարկային պարտականությունը պարունակում է ոչ միայն ուղղակի հարկերի և այլ հավաքագրումների բյուջե կամ արտաբյուջետային հիմնադրամներ վճարումը, այլ նաև դրա կատարմանն ուղղված կամ դրանից ածանցվող մնացած պարտականությունները: Մասնավորապես, հարկային պարտականություններ են հանդիսանում նաև հարկային մարմնում հաշվառման կանգնելը, հարկային հաշվետվությունների սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելը, ձեռնարկատիրական գործունեության առարկաները և ծառայությունները սահմանված կարգով գրանցելը, ինչպես նաև նույնիսկ հարկային հսկողություն իրականացնող մարմինների՝ պաշտոնատար անձանց աշխատանքների չխոչընդոտելը և այլն: Ավելին, Ռուսաստանի հարկային օրենսգրքի 16-րդ գլխում նախատեսված հարկային իրավախախտումների շարքում թվարկված են այնպիսի իրավախախտման կազմեր, ինչպիսիք են **հարկային իրավախախտումների վերաբերյալ գործով կանչած վկայի անհարգելի պատճառներով չներկայանալը կամ ներկայանալուց խուսափելը** (ՌԴ ԲԾ-ի 128-րդ հոդ) կամ **թարգմանիչի, մասնագետի, փորձագետի կողմից հարկային ստուգմանը մասնակցելուց հրաժարվելը կամ ակնհայտ կեղծ եզրակացություն կամ ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելը** (ՌԴ ԲԾ-ի 129-րդ հոդ) և այլ նմանատիպ խախտումներ, որոնց **հարկային բնույթի խախտումներ լինելու հանգամանքի հետ դժվար է համաձայնվել:**

«Կասկածելի» հարկային խախտման կազմեր, որոնք ընդհանրապես չեն կրում ֆինանսական իրավախախտման (**հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարությունը փակցնելու պահանջը չպահպանելը**) բնույթ կամ հանդիսանում են բոլորովին այլ ֆինանսաիրավախախտման տեսակներ (**արտարժույթի առքուվաճառքի գործառնությունները ԳԳ կենտրոնական բանկի, նախատեսված են նաև մեր գործող «Չարկերի մասին» ԳԳ օրենքով:**

Բնականաբար, այս կանոնների խախտումը որպես հարկային իրավախախտում համարելը պետք է դիտարկել ֆինանսական պարտավորությունների խախտման արդյունքում հանրության ֆինանսական շահերին պատճառված կամ պատճառելու ենթակա վնասի տեսանկյունից: Այս տեսանկյունից **հարկային վերահսկողության ընթացքում կատարվող** հարկային իրավախախտումները պետք է տարանջատել հարկային իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կամ տարաբնույթ վարչական կանոնների խախտմամբ դրսևորվող վարչական զանցանքներից:

Անդրադառնալով հարկային իրավախախտման՝ ֆինանսական իրավախախտման այլ տեսակներից տարբերելու խնդրին՝ նկատենք, որ հարկային իրավախախտումը դրսևորվում է հանրային հիմնադրամների ոչ թե բաշխման կամ օգտագործման գործընթացում, այլ առաջնային՝ կազմավորման գործընթացում՝ ֆինանսական պարտականությունների չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ: Մինչդեռ, օրինակ, առանց լիցենզիայի կամ ուժը կորցրած լիցենզիայիով կամ առանց պետական գրանցման կամ նմանատիպ այլ կանոնների խախտմամբ գործունեություն իրականացնելը երբեք չի կարելի հարկային իրավախախտում համարել, քանի որ լիցենզավորման կամ պետական ռե-

գիստրում գրանցման կամ նմանաբնույթ այլ կանոնների սահմանումը հետապնդում են բոլորովին **«այլ նպատակներ»<sup>22</sup>**: Մինչդեռ հարկային իրավախախտման դեպքում նպատակը հստակ է՝ տարբեր եղանակներով խուսափել սահմանված չափի դրամական գումար հանրային հիմնադրամներ վճարելուց:

Հարկային իրավախախտման յուրահատկությունը բնութագրող կարևոր փաստարկներից են նաև այն իրավական սանկցիաները, որոնք առաջանում են դրա կատարման արդյունքում: Շատերը նույնիսկ հարկային իրավախախտման՝ որպես ֆինանսական իրավախախտման ինքնությունը բնութագրող հատկանիշ են համարում դրա համար ֆինանսական իրավունքի նորմերով նախատեսված պատասխանատվությունը: Ֆինանսական իրավունքի նորմերով նախատեսված **ֆինանսական պատժամիջոցները** սահմանվում են իրավախախտման հետևանքի զնահատմամբ պայմանավորված: *Հարկային խախտումների համար ֆինանսական տուգանքները որոշվում են՝ ելնելով գործունեության ֆինանսական արդյունքներից, դրա հետևանքով չհաշվարկված և չմուծված հարկի գումարի այս կամ այն տոկոսի հարաբերակցության չափով*: Դրանով է պայմանավորված նաև հարկային իրավախախտման յուրահատկությունը և առհասարակ ֆինանսական պատասխանատվության որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակի գոյությունը: Օրինակ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ «Հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ) չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ

կազմելու համար հարկ վճարողներից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով բյուջե չմուծված կամ պակաս մուծված հարկերի գումարի տասը տոկոսի չափով»: Այսինքն՝ այս հոդվածից ակնհայտ է, որ տվյալ իրավախախտման հանրային վտանգավորությունը պայմանավորված է ոչ թե հաշվապահական հաշվառման այս կամ այն կանոնի խախտմամբ, այլ դրա արդյունքում առաջացող այն հետևանքներով, որոնք կարող են կրել հանրային հիմնադրամները՝ համապատասխան չափի դրամական գումարներ մուտք չափելով:

**Այդ է պատճառը, որ ֆինանսական պատասխանատվության՝ ֆինանսական տուգանքի առաջնային նպատակը հանրությանը, պետության պատճառված նյութական վնասների վերականգնումն է՝ իհարկե «չմուռանալով» նրա պատժիչ բնույթի մասին**: Ի՞նչու է, որ շատ երկրների հարկային օրենսդրությամբ նախատեսված է դրույթ, որի համաձայն, եթե հարկատուն ներկայացրել է իր եկամուտների մասին ոչ ճիշտ կամ ոչ հստակ տվյալներ կամ հարկային հաշվետվությունները սահմանված կարգի խախտմամբ է վարել, սակայն մինչև հարկային ստուգման անցկացումը հայտնում է դրա մասին կամ ինքնուրույն ուղղում այդ տվյալները և վճարում է ամբողջ հարկերը, ապա նրա նկատմամբ չի կիրառվում ֆինանսական սանկցիա, նույնիսկ զարգացած որոշ երկրներում ազատվում է դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվությունից<sup>23</sup>: Նման դրույթ կա նաև մեր հարկային օրենսդրության մեջ, մասնավորապես **«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածում** հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար նախատեսված տուգանքները չեն կիրառվում այն հարկատուների նկատմամբ, որոնք մինչև հարկային տեսչության մարմինների ստուգումների սկսվելն ինքնուրույն հայտնաբերել են իրենց կողմից նախորդ տարիների շահութահարկի պակաս հաշվարկումը, հաշվապահական հաշ-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

վառման մեջ տվել են համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղյակ են պահել իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին:

Այսպիսով, ընդգծելով հարկային իրավախախտման՝ որպես ֆինանսական իրավախախտման առանձին տեսակի գոյությունը և հարկային բնագավառում կատարվող իրավախախտման այլ տեսակներից դրա առանձնահատկությունները, **հարկային իրավախախտում են համարվում հարկ վճարողների (ֆիզիկական անձանց կամ**

**կազմակերպություններ) կողմից հանրության ֆինանսական շահերին վնաս պատճառող մեղավորությամբ կատարված հանրորեն վտանգավոր այն արարքները, որոնք դրսևորվում են հանրային հիմնադրամների (կենտրոնացված կամ ապակենտրոնացված բյուջետային կամ արտաբյուջետային հիմնադրամներ) նկատմամբ դրամական պարտականությունների և դրա հետ անմիջականորեն կապված այլ պարտականությունների (ֆինանսական վերահսկողության բնագավառում կատարվող իրավախախտումներ) չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ, և որոնց համար օրենքով սահմանված է ֆինանսական պատասխանատվություն:**

<sup>1</sup> Օրինակ, ԱՄՆ-ում բյուջեի հարկային մուտքերը կազմում են 90% , Գերմանիայում՝ 80%, ճապոնիայում՝ 75%: Տե՛ս Евстигнеев Е. Н. Основы налогообложения и налогового права. Уч. пособие. М., 2000, ст. 8.

<sup>2</sup> Spanish Constitution, the Constitution of the Italian Republic, the Constitution of the Republic of Turkey,

<http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/legis.php>:

<sup>3</sup> Տե՛ս Black's Law Dictionary, p. 1307 (5th ed. 1979):

<sup>4</sup> Տե՛ս ESTONIA TAXATION ACT "Passed 16 December 1993" Article 2 (Definitions):

<sup>5</sup> Տե՛ս LAW ON TAX ADMINISTRATION OF THE REPUBLIC OF LITHUANIA. Article 2.(Basic Concepts). "28 June 1995" No. I-974:

<sup>6</sup> Հարկային իրավունքը չունի ինքնուրույն կարգավորման առարկա և մեթոդ: **Այն համարվում է ֆինանսական իրավունքի ենթաճյուղ:** Հարկային իրավունքի նորմերը կարգավորում են հանրային ֆինանսական գործունեության, այսինքն՝ հանրային բյուջետային կամ արտաբյուջետային դրամական հիմնադրամների կազմավորմանը, բաշխմանը և օգտագործմանն ուղղված ընթացակարգի սկզբնական մասը՝ դրամական հիմնադրամների կազմավորման հատվածը: Հարկային իրավունքի նորմերով են կարգավորվում հարկերի հաշվարկման և գանձման, ինչպես նաև դրանց

կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողության գործընթացներում առաջացող ֆինանսական իրավահարաբերությունները:

<sup>7</sup> Տե՛ս Юрмашев Р. С. Понятие налогового правонарушения по российскому финансовому праву. М., 2006, ст. 25:

<sup>8</sup> Տե՛ս Кучеров И. И., Шереметьев И. И. Административная ответственность за нарушения законодательства о налогах и сборах. М., 2006, ст. 6.

<sup>9</sup> Տե՛ս Карасева М.В. Финансовое право. Общая часть: Учебник. М., 2000, ст. 184:

<sup>10</sup> Տե՛ս Сердюкова Н. В. Финансово-правовая ответственность по Российскому законодательству: Становление и развитие. дис... к.ю.н. Томск 2003, ст. 83:

<sup>11</sup> Տե՛ս Емелянов А. С.; Черногор Н. Н. Финансово-правовая ответственность. М., 2004, ст. 149.

<sup>12</sup> Տե՛ս Ровинский Е. А. Основные вопросы теории советского финансового права М., 1960, ст. 126.

<sup>13</sup> Տե՛ս Репецкий В. Н. К вопросу об ответственности по советскому финансовому праву //Вопросы совершенствования правового регулирования,- Львов 1982, ст. 39.



- <sup>14</sup> Օրինակ՝ Ի.Վ. Խամենուշկոն ֆինանսական գործունեության բնագավառում առանձնացնում է նաև գույքային իրավախախտումներ և դրա համաձայն առաջանում է ֆինանսական գործունեություն իրականացնող անձի անօրինական գործունեությամբ պատճառված վնասի վերականգնման խնդիր, ինչպես նաև կարող են լինել կարգապահական պատասխանատվություն առաջացնող այլ իրավախախտումներ /տե՛ս Խамеиушко И. В. О правовой природе финансовых санкций //Юридический мир, 1997 N 1, ст. 46-47.
- <sup>15</sup> Տե՛ս Венедиктов Ю. А.; Черепяхин А. М.; Финансовые санкции в системе управления. М., 1985, ст. 20.
- <sup>16</sup> Տե՛ս Ա. Օսիկյան Հարկային իրավախախտման հասկացությունը և առանձնահատկությունները // Օրենք և իրականություն, միջազգային գիտական հանդես, 2008թ. N 3. էջ 1-3:
- <sup>17</sup> Տե՛ս Карасева М.В. Финансовое правоотношение. М., 2001, ст. 25.
- <sup>18</sup> Տե՛ս Грачева Е. Ю., Кулакова Н. А., Пепеляев С. Г. Финансовое право России: Учебник. М., 1995, ст. 106:
- <sup>19</sup> Տե՛ս Смирных С. Е. Правовые последствия недробросовестности налогоплательщиков.

- // Государство и право, 2007, N 1. ст. 105. Устинова Я. И. Понятие “добросовестности” в налоговых правоотношениях // Бухгалтерский учет. 2005, N 6, ст. 60:
- <sup>20</sup> Տե՛ս Козырев А. А. Некоторые вопросы ответственности за нарушение законодательства о налогах и сборах. //Государство и право. 2004, N 4, ст. 80-81:
- <sup>21</sup> Տե՛ս The Law on Taxes and Fees of Latvia. The Law has been adopted by the Saeima on 2 February 1995. [http://www.fm.gov.lv/image/file/Par\\_nodokliem\\_nodevam\(Engl\).doc](http://www.fm.gov.lv/image/file/Par_nodokliem_nodevam(Engl).doc)
- <sup>22</sup> «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով **ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված .... կամ .... առանց լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս այդ գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկատիրական կամ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելը** (ապօրինի գործունեություն) համարվում է որպես հարկային իրավախախտում:
- <sup>23</sup> Տե՛ս Грачева Е. Ю., Толстопятенко Г. П. Финансовое право. Учебник. М., 2007, ст. 465:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ**

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆ  
ԱՆՁԵՌՆՄԵՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ԱՆՁԵՌՆՄԵՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՍՎԳՐՄԱՆ ՆՈՐ  
ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**Ծովինար ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
*Իրավագիտության մագիստրոս*

**Յ**յուլայատոսական իրավունքում արտոնություններին և անձեռնմխելիություններին վերաբերող ամենաբարդ և մինչ օրս արդիական խնդիրներից մեկը հանդիսանում է դրանց տրամադրման տեսական հիմնավորումը: Արտոնությունների և անձեռնմխելիությունների տեսական հիմնավորման խնդիրն մեծ ուշադրություն են դարձրել Գ. Ի. Տունկինը<sup>1</sup>, Ի. Պ. Բլիշչենկոն, Վ. Ն. Դուրդենսկին<sup>2</sup> և այլ խորհրդային ու ռուս, ինչպես նաև արտասահմանյան իրավաբան-միջազգայնագետներ, մասնավորապես Յա. Բրոունլին<sup>3</sup>, Է. Սաթուն<sup>4</sup>: **Յյուլայատոսական արտոնությունների և անձեռնմխելիությունների իրավաբանական բնույթը բացահայտող տեսության ամհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն միջազգային իրավունքի գիտության հետաքրքրությամբ, այլ նաև հյուլայատոսական իրավունքի նորմերի հետագա կողմնակցման անհրաժեշտությամբ: Այսինքն՝ խնդիրն ունի նաև պրակտիկ նշանակություն:**

Ժամանակակից միջազգային իրավունքի դոկտրինայում դիտարկվում են երեք հիմնական տեսություններ՝ էքստերիտորիալության (արտերկրայնության), ներկայացուցչական և ֆունկցիոնալ տեսությունները, որոնք այս կամ այն չափով բացատրում են դիվանագիտական և հյուլայատոսական արտոնություններն ու անձեռնմխելիությունները:

Այսպես, **էքստերիտորիալության տեսությունը** դեսպանության կողմից զբաղեցվող տարածքը հայտարարում է հավատարմագրող պետության տարածք. դեսպանը և դեսպանության անձնակազմը, գտնվելով ընդունող երկրում, կարծես շարունակում են գտնվել սեփական պետության տարածքում: Այս տեսությունն առաջացել է դեռևս ստրկատիրական ժամանակաշրջանում: «Պաշտոնների մասին» Ցիցերոնի աշխատության մեջ հանդիպում է այն պնդումը, որ դեսպանը կարծես գտնվում է իր գտնվելու տարածքից դուրս<sup>5</sup>:

Շուտով այս տեսությունը լայն տարածում գտավ ինչպես իրավաբանական գրականության մեջ, այնպես էլ պետությունների պրակտիկայում: Քանի որ սեփական երկրում գտնվելու հնարանքը վերաբերում էր ոչ միայն դեսպանի անձին, այլ նաև նրա կողմից զբաղեցվող շինությանը, այս տեսությունն իր բացարձակ ձևով ծառայում էր որպես արդարացում դիվանագիտական շինություններում ապաստանի իրավունքի և իր անձնակազմի նկատմամբ դեսպանի իրավագործության իրավունքի համար: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին դեսպանի էքստերիտորիալությունը սկսեցին շատ վտանգավոր համարել, քանի որ մի շարք դեպքերում այն հնարավորություն էր տալիս դեսպանատանը թաքցնել որևէ անձի, որը հետապնդվում էր դեսպանին ուղարկած կամ նրա գտնվելու

երկրում: Ասյախսով, 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին պետությունները սկսում են ընդունել, որ դեսպանը անձեռնմխելիությունից օգտվում է, քանի որ դա անհրաժեշտ է նրա գործառույթների ազատ իրականացման համար: Նա կարող է պաշտպանություն ստանալ նույնիսկ իր մասնավոր գործողությունների ժամանակ, քանի որ մասնավոր գործողությունների համար նրան հետապնդելով՝ կարելի է վերջինիս խանգարել պաշտոնական գործողություններում<sup>6</sup>:

Իրավաբան-միջազգայնագետների մեծ մասը հրաժարվել է էքստերիտորիալության տեսությունից: Այս տեսությունը քննադատության է ենթարկվում դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի վերաբերյալ զրեթե բոլոր աշխատություններում: Դրա հետ կապված՝ մեջբերենք Բ. Վ. Գանյուշկինի խոսքերը. «Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է նշել, որ հյուպատոսական շինությունների անձեռնմխելիությունը չի նշանակում, որ դրանք ուղարկող պետության մասն են հանդիսանում: Այս հնարանքից ելնելով՝ էքստերիտորիալության տեսությունը վաղուց անցյալում է մնացել: Հյուպատոսության կողմից զբաղեցվող տարածքը՝ անկախ շինության և հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքի, մնում է մատակարար երկրի սեփականությունը և չի դառնում ուղարկող պետության տարածք, նույնիսկ եթե հյուպատոսության շենքը և հողատարածքը ձեռք են բերված որպես սեփականություն»<sup>7</sup>:

Ներկայումս էքստերիտորիալության տեսությունը գործնականում չի կիրառվում, չնայած այն վկայակոչվում է ինչպես իրավաբանական գրականության մեջ, այնպես էլ դիվանագիտական և հյուպատոսական պրակտիկայում:

Ինչ վերաբերում է **ներկայացուցչական տեսությանը**, ապա վերջինս առաջացել է աբսոլյուտիզմի ժամանակաշրջանում և որոշակի փոփոխություններով կիրառվում է նաև ներկայումս<sup>8</sup>: Դեսպանը դիտարկվում է որպես իր երկրի թագավորի (միապետի)

ներկայացուցիչ կամ մարմնացում: Քանի որ մյուս երկրի թագավորը իշխանություն չունի դեսպանի երկրի միապետի նկատմամբ, ուստի նա չի կարող իշխանություն ունենալ նաև դեսպանի նկատմամբ: Չափազանց կարճ և ճշգրիտ այս տեսությունը ձևակերպել է ռուս մեծ իշխան Իվան 3-րդը. «Դեսպանը ճառեր է ասում և կրում է իր երկրի միապետի դեմքը»<sup>9</sup>:

Դրա հետ մեկտեղ ավելի ամրապնդվեց պատկերացումն այն մասին, որ դեսպանն իր մեջ կրում է իր երկրի միապետի պատիվը և հեղինակությունը: Համարվում էր, որ դեսպանը, կարծես, անձնավորում է վերջինիս ինքնիշխան եությունը: Այս պատկերացումների համադրությունից էլ ձևավորվեց ներկայացուցչական տեսությունը<sup>10</sup>: Այս տեսությունը բավական երկար գոյատևեց և համապատասխանում էր միջին դարերի քաղաքական իրադրությանը: Սակայն ֆեոդալական դարաշրջանի վերջին, երբ ֆեոդալական կարգերի մեջ սկսեց կազմավորվել նոր տնտեսական կացութաձևը, երբ բուրժուազիան իշխանության գլուխ եկավ, երբ դեսպանների հետ միասին սկսեց առավել մեծ նշանակություն ձեռք բերել հյուպատոսների իմստիտուտը, որոնք ֆորմալ ձևով չէին ներկայացնում սուվերենին և հաճախ պարզապես հանդիսանում էին ընտրված առևտրական ավագներ, պահանջվեց անձեռնմխելիության տրամադրման դրդապատճառների նոր բացատրություն<sup>11</sup>: Արդյունքում ներկայացուցչական տեսության որոշ կողմնակիցներ փորձեցին լրացնել իրենց տեսության խնդիրները ֆունկցիոնալ անհրաժեշտության տեսության օգնությամբ:

**Ֆունկցիոնալ անհրաժեշտության տեսությունը** ելնում է այն բանից, որ արտոնությունների և անձեռնմխելիությունների տրամադրման հիմք հանդիսանում է հյուպատոսական հաստատությունների գործառույթների արդյունավետ կատարման ապահովման անհրաժեշտությունը<sup>12</sup>: Այս տեսությունն իր միջազգային իրավական արտահայտությունն է գտել Հյուպատոսա-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐԻՈՆ**

կան հարաբերությունների մասին Վիեննայի 1963թ. կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա), որի նախաբանում նշված է, որ «նման արտոնություններն ու իմունիտետները հատկացվում են ոչ թե ի շահ առանձին անձանց, այլ իրենց պետության անունից հյուպատոսական գործառույթների արդյունավետ իրականացումն ապահովելու համար»<sup>13</sup>: Իրավաբանական գրականության մեջ այս տեսությունն անվանում են պետությունների միջև հարաբերությունների պաշտպանության անհրաժեշտության տեսություն: Կոնվենցիայի 43-րդ հոդվածը ազատում է հյուպատոսական պաշտոնատար անձանց և հյուպատոսական ծառայողներին դատական և վարչական մարմինների իրավագործությունից հյուպատոսական գործառույթներ կատարելիս նրանց կողմից իրականացվող գործողությունների դեպքում: Այս դրույթից բխում է, որ հյուպատոսական պաշտոնատար անձանց իրավագործությունից անձեռնմխելիությունն ունի սահմանափակ ֆունկցիոնալ բնույթ, քանի որ գործում է միայն նրանց կողմից ծառայողական պարտականություններն իրականացնելիս: Վերջինիս կիրառումը պրակտիկայում բավականին դժվար է, քանի որ, որպես կանոն, շատ դժվար է որոշել այն սահմանը, որտեղ ավարտվում են հյուպատոսական պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունները: Ոչ պակաս դժվարություններ են առաջանում նաև այն հարցում, թե ով է իրավասու լուծել այդ հարցը՝ ընդունող պետությունը, թե ներկայացվող պետությունը:

Միջազգային իրավունքի դոկտրինայի, պայմանագրային և օրենսդրական նորմերի, պետությունների պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս ծառայողական անձեռնմխելիության հարցի ունիվերսալ լուծման բացակայությունը: Թերևս, նշված խնդրի ունիվերսալ լուծում ընդհանրապես

չի էլ կարող լինել: Դա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ կատարվող իրավախախտումների բազմազանությունը և ֆունկցիոնալ իմունիտետից օգտվող յուրաքանչյուր պաշտոնատար անձի ծառայողական պարտականությունների սպառիչ ցանկն ըստ էության կազմելու անհնարինությունը, բացառում են կոնկրետ և ունիվերսալ չափանիշների մշակումը, որոնք թույլ կտան միանշանակ որոշել, թե արդյոք տվյալ անձը իրավախախտում կատարելիս գտնվել է ծառայողական պարտականությունների կատարման մեջ, թե ոչ: Այսպիսի չափանիշների բացակայությունը դժվարացվում է նաև նրանով, որ իրավախախտման դեպքում հակասություններ են առաջանում մի կողմից իր ներկայացուցիչների պաշտպանությամբ հետաքրքրված հավատարմագրող պետության շահերի, իսկ մյուս կողմից՝ ընդունող պետության շահերի միջև, որը վնաս է կրում պատճառված իրավախախտումից:

Նշված խնդիրն առկա է նաև մեր հանրապետությունում: Այսպես, գործող 12 հյուպատոսական պայմանագրերից ֆունկցիոնալ սահմանափակում նախատեսված չէ միայն երկուսում (Չինաստանի և Բուլղարիայի հետ կնքած հյուպատոսական կոնվենցիաներ): Վրաստանի, Հունաստանի, Ռումինիայի հետ ՀՀ հյուպատոսական կոնվենցիաներում ընդունող պետության իրավագործությունից բացարձակ անձեռնմխելիություն նախատեսվում է միայն հյուպատոսական հիմնարկի ղեկավարի համար, իսկ հյուպատոսական հիմնարկի մյուս աշխատողները ենթակա չեն ընդունող պետության իրավագործությանը միայն իրենց հյուպատոսական գործառույթների իրականացման ընթացքում կատարված գործողությունների համար:

Լիբանանի Հանրապետության, Հնդկաստանի հետ կնքած ՀՀ հյուպատոսական կոնվենցիաներում հյուպատոսական արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին ոչինչ չի ասվում: Իսկ ահա Իրանի Իսլամական Հանրապետու-

յան, Սիրիայի Արաբական Հանրապետության հետ համաձայնագրերը սահմանում են միայն մուտքի արտոնագիր տրամադրելու կարգը: Այսինքն, վերոնշյալ պետությունների հետ հյուպատոսական արտոնությունների և անձեռնմխելիությունների հետ կապված հարցերը կարգավորվում են դեկավարվելով Կոնվենցիայի (որին ՀՀ-ը միացել է 1992թ. հոկտեմբերի 6-ին) համապատասխան դրույթներով:

ՀՀ-ում գործում է նաև «Հյուպատոսական ծառայության մասին» 1996թ. օրենքը<sup>14</sup>, որտեղ, թեև մանրամասն կարգավորվում են հյուպատոսական ծառայության մի շարք հարցեր (ՀՀ հյուպատոսական հիմնարկների կազմակերպման, հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նշանակման, հյուպատոսական պարտականությունների կատարման կարգը և այլն), այնուամենայնիվ, ոչինչ չի ասվում հյուպատոսական արտոնությունների և անձեռնմխելիությունների, դրանց տրամադրման կարգի մասին: Այսինքն, այս հարցը կարգավորված չէ նաև ներպետական մակարդակով:

Ֆունկցիոնալ անհրաժեշտության տեսության ուժեղ կողմը այն է, որ վերջինս կարող է որպես չափանիշ օգտագործվել վիճելի իրավիճակների լուծման ժամանակ, երբ անհրաժեշտ է սահմանել անձեռնմխելիությունների առկայությունը և ծավալը<sup>15</sup>: Միևնույն ժամանակ այս տեսությունը բազմաթիվ գիտնականների կողմից ենթարկվել է արդարացի քննադատության: Այս տեսության որոշ կողմնակիցներ համարում են, որ իրավագործությունից անձեռնմխելիությունը պետք է տարածվի միայն հյուպատոսական հաստատությունների պաշտոնական գործողությունների վրա, քանի որ պաշտոնական գործողությունների ոլորտում անկախությունը անհրաժեշտ է նրանց կողմից իրենց գործառույթների անխոչընդոտ իրականացման համար: Իսկ մյուսները ելնում են այն բանից, որ ազգային իրավագործությանը ենթարկվելը նույնիսկ մասնավոր գործողություններում կարող է խանգարել արտասահ-

մանյան ներկայացուցչության կողմից իր գործառույթների կատարմանը: Խնդիրը ոչ թե այն է, թե արդյոք հյուպատոսական պաշտոնատար անձի գործողությունները հանդիսանում են պաշտոնական կամ մասնավոր, այլ այն, թե նման գործողությունների դեպքում ազգային իրավագործությանը ենթարկվելը կարող է արդյոք խանգարել նրանց գործառույթների իրականացմանը, թե ոչ: Ներկայումս միջազգային իրավունքի դոկտրինայում լայն տարածում ունի ֆունկցիոնալ անհրաժեշտության տեսությունը ներկայացուցչական տեսության հետ համատեղ օգտագործելու անհրաժեշտության մասին կարծիքը: Այսպիսով, խոսքը այսպես կոչված, «կոմբինացված տեսության» մասին է<sup>16</sup>:

Ֆունկցիոնալ անհրաժեշտության և ներկայացուցչական տեսության թերությունները պահանջում են հյուպատոսական հիմնարկներին և դրանց աշխատակիցներին արտոնությունների և անձեռնմխելիությունների տրամադրման անհրաժեշտության նոր դոկտրինալ հիմնավորում:

Ռուսական և արտասահմանյան հեղինակների որոշ աշխատություններ առանձին դրույթներ են պարունակում, որոնք վկայում են հյուպատոսական արտոնությունների և անձեռնմխելիությունների ինստիտուտի նկատմամբ նոր մոտեցման առաջացման մասին, որը, սակայն, դեռևս անհրաժեշտ զարգացում չի ստացել միջազգային իրավունքի դոկտրինայում: Դրանք կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ արտոնությունների և անձեռնմխելիությունների հիմքում ընկած է պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը, որի վրա է հիմնվում միջազգային իրավունքի՝ օտարերկրյա իրավագործությունից պետության անձեռնմխելիության նորմը: Պետության անձեռնմխելիությունը տարածվում է ինչպես հենց պետության, այնպես էլ նրա գույքի, սեփականության, պետական մարմինների վրա: Պայմանականորեն այս տեսությունը կարելի է ան-

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ****վանել պետությունների ինքնիշխան անձեռնմխելիության տեսություն:**

Այսպիսով, հյուպատոսական հիմնարկները պետական մարմիններ են և պետության անձեռնմխելիության ուժով ազատվում են ընդունող երկրի իրավազորությունից: Հենց հավատարմագրող պետության անձեռնմխելիությամբ կարելի է բացատրել բոլոր այն արտոնություններն ու անձեռնմխելիությունները, որոնցով օժտվում են հյուպատոսական հաստատությունները: Իրենց հերթին հյուպատոսները հանդիսանում են պետության պաշտոնական ներկայացուցիչներ և այդ պատճառով էլ օժտված են արտոնությունների և անձեռնմխելիությունների անհրաժեշտ ծավալով: Առա-

ջարկվող տեսական հիմնավորումը բացատրում է նաև հյուպատոսական հաստատության աշխատակիցներին արտոնությունների և անձեռնմխելիությունների տրամադրման անհրաժեշտությունը, որոնք պետք է դիտարկվեն որպես պետական հաստատության աշխատակիցներ և այդ պատճառով պետք է ազատվեն օտարերկրյա պետության իրավազորությունից:

Պետությունների ինքնիշխան անձեռնմխելիության տեսությունը՝ որպես հյուպատոսական արտոնությունների ու անձեռնմխելիությունների տրամադրումը հիմնավորող նոր տեսություն, կարևորություն է ներկայացնում նաև մեր հանրապետության համար, որտեղ ևս, ինչպես արդեն նկատեցինք, այս հարցը միասնական լուծում չի ստացել:

<sup>1</sup> Տե՛ս Тункин Г. И. Теория международного права. М., 1970:

<sup>2</sup> Տե՛ս Блищенко И. П., Дурденевский В. Н. Дипломатическое и консульское право. Отв. ред. А. С. Пирадов. М., 1962, էջ 330:

<sup>3</sup> Տե՛ս Броунли Я. Международное право. М., 1977, Т. 1:

<sup>4</sup> Տե՛ս Сатю Э. Руководство по дипломатической практике. М., 1961:

<sup>5</sup> Տե՛ս Цицерон. О должностях., հղումն ըստ՝ Блищенко И. П., Дурденевский В. Н. Дипломатическое и консульское право. Отв. ред. А. С. Пирадов., М., 1962.

<sup>6</sup> Տե՛ս Блищенко И. П., Дурденевский В. Н. Дипломатическое и консульское право. Отв. ред. А. С. Пирадов. М., 1962, էջ 338:

<sup>7</sup> Տե՛ս Ганюшкин Б. В. Широта прав консульских учреждений (статья), Московский журнал международного права, N2, 1999, էջ 227:

<sup>8</sup> Տե՛ս Демин Ю. Г. Статус дипломатических представительств и их персонала. М., 1995,

էջ 23:

<sup>9</sup> Տե՛ս Блищенко И. П., Дурденевский В. Н., Дипломатическое и консульское право. Отв. ред. А. С. Пирадов. М., 1962, էջ 336: նշվ. աշխ., էջ 336:

<sup>10</sup> Տե՛ս Игнатенко Г. В. Международное право. Учебник. М., 2001, էջ 112:

<sup>11</sup> Տե՛ս Блищенко И. П., Дурденевский В. Н. նշվ. աշխ., էջ 336:

<sup>12</sup> Տե՛ս Демин Ю. Г. Статус дипломатических представительств и их персонала. М., 1995, էջ 22:

<sup>13</sup> Տե՛ս Действующее международное право (избранные документы), под ред. Колосова Ю. М., Кривчиковой Э. С. М., 2002:

<sup>14</sup> Տե՛ս ՀՀ օրենքը հյուպատոսական ծառայության մասին (ընդունվել է 29.05.1996):

<sup>15</sup> Տե՛ս Демин Ю. Г. Статус дипломатических представительств и их персонала. М., 1995, էջ 22:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 24:

## ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԵՐԸ ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

### Մարինե ՕՀԱՆՅԱՆ

ԵՊՀ Սահմանադրական իրավունքի  
ամբիոնի հայցորդ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2-րդ հոդվ.) ժողովրդին պատկանող իշխանության իրականացման առաջնային ձև է ճանաչում անմիջական ժողովրդավարությունը («ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների... միջոցով»), իսկ որպես երկրորդական, լրացուցիչ ձև վկայակոչվում է ներկայացուցչական ժողովրդավարությունը («**ինչպես նաև** (ընդգծումը մերն է՝ Մ.Օ.) Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»): Եվ դա հասկանալի է, քանզի ներկայացուցչական ժողովրդավարության ձևերը, ի դեմս Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության Նախագահի, որոնք կազմում են պետական ապարատի հիմքը, ձևավորվում են անմիջական ժողովրդավարության ձևերի միջոցով և գտնվում են ժողովրդի վերահսկողության ներքո: Անմիջական ժողովրդավարության ճանապարհով ընտրված Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից ձևավորվում են այն գործադիր և դատական իշխանության մարմինները, որոնց գործունեությունը նույնպես այս կամ այն չափով վերահսկվում է Հանրապետության քաղաքացիների կողմից:

Եթե նկատի առնենք, որ Հանրապետության Հիմնական օրենքի 2-րդ հոդվածում ժողովրդաիշխանության իրացման ձևերը թվարկվում են ըստ կարևորության, ապա պարզ կդառնա, որ դրանց առաջին կարևորության ձևը **ազատ ընտրություններն են**: Ընդ որում, ժողովրդին պատկանող իշխանության իրացման այդ ձևի

կարևորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ ընտրությունների միջոցով վերջին հաշվով ձևավորվում է ողջ պետական ապարատը, այլ նաև նրանով, որ Սահմանադրության համաձայն (30-րդ հոդվ., առաջին մաս) Հանրապետության քաղաքացիները կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցում են երկրի պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը:

Հայաստանի Հանրապետության հասարակական և պետական կյանքի այդ կարևոր հիմնախնդիրների արդյունավետ լուծման գործում չափազանց կարևոր է Հանրապետությունում կիրառվող **ընտրական համակարգի** դերը: Խնդիրն այն է, որ կախված այն բանից, թե որքանով է այդ համակարգը ապահովում ազատ ընտրությունների անցկացումը, այդքանով էլ կարող է ապահովված լինել պետական իշխանության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների իրական լեգիտիմությունը<sup>1</sup>:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ «ընտրական համակարգ» հասկացությունը ներկայացվում է երկու իմաստով՝ նեղ և լայն:

**Լայն առումով** ընտրական համակարգը իրենից ներկայացնում է իրավական նորմերի այնպիսի համակցություն, որը կոչված է կարգավորելու ընտրական իրավունքներ վերապահելու կարգը, ընտրությունների անցկացումը և քվեարկության արդյունքների որոշումը: Իսկ «ընտրական համակարգ» հասկացությունը **նեղ առումով** բովանդակվում է միայն ընտրությունների արդյունքների որոշման կարգը:

Ամբողջ խնդիրն այն է, որ «ընտրական համակարգ» հասկացությունը իրավաբանական գիտության մեջ առավելապես օգտագործվում է «նեղ» առումով՝ որպես

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐԻՈՆ**

ընտրությունների արդյունքների բաշխման եղանակ<sup>2</sup>: Ավելին, անգամ առաջարկվում է «ընտրական համակարգ» հասկացության փոխարեն օգտագործել «ընտրությունների արդյունքների որոշման մեծամասնական և համամասնական եղանակներ» արտահայտությունը<sup>3</sup>: Պատճառն այն է, որ լայն առումով ընտրական համակարգը գրեթե համընկնում է ընտրական իրավունքի հետ (լայն կամ օբյեկտիվ առումով)<sup>4</sup>, որը նույնպես իրենից ներկայացնում է իրավանորմների մի ամբողջություն, որը կարգավորում է ընտրական գործընթացը սկզբից մինչև վերջ: Այդ առնչությամբ լայն առումով ընտրական համակարգի խնդիրները սովորաբար քննարկվում են լայն առումով ընտրական իրավունքի համատեքստում:

Մեր կողմից հետազոտվող հիմնախնդրի լուսաբանման առումով կարևորվում է Հայաստանում գործող ընտրական համակարգը լայն առումով: Ընդ որում, ընտրական համակարգի գլխավոր առաքելությունն ուղղված է ոչ թե սոսկ «ընտրությունների» կազմակերպմանը և անցկացմանը, այլ «ազատ ընտրությունների» անցկացմանը: Խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2-րդ հոդվ.) ժողովրդին պատկանող իշխանության իրականացման անմիջական ժողովրդավարության ձև է ճանաչում ոչ թե ընտրությունների կազմակերպումը ընդհանրապես, այլ **ազատ ընտրությունները**:

Ինչպես Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության, այնպես էլ սահմանադրական իրավունքի գիտության մեջ հստակ սահմանված չեն ընտրությունների «ազատ» լինելու չափանիշները: Արդյունքում ազատ ընտրությունների գաղափարը հաճախ հանգեցվում է ընտրական իրավունքի իրականացման ժամանակ ընտրողի նկատմամբ ճնշման, բռնության և ահաբեկման երևույթների բացառմանը<sup>5</sup>:

Ամենևին չնսեմացնելով ընտրություն-

ներն «ազատ» որակելու հարցում վերը նշված հանգամանքների դերը՝ հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, քննարկվող հիմնախնդրի համար ելակետային չափանիշը, մեր կարծիքով, հանդիսանում է ժողովրդի կամքի լրիվ և ամբողջական դրսևորումը: Ուստի բոլոր այն հանգամանքները, որոնք նպաստում են ընտրությունների ժամանակ ժողովրդի կամքի լիարժեք դրսևորմանը, կարող են համարվել ազատ ընտրությունների գնահատման չափանիշներ:

Այդ չափանիշների շարքում առանձնակի կարևորվում է **քաղաքացիների տեղեկացվածության, լիարժեք տեղեկատվական միջավայրի ստեղծման հանգամանքը**: Հայտնի է, որ ընտրական գործընթացում տեղեկատվությունը տարածվում է քաղաքացիների իրազեկման և նախընտրական քարոզչության միջոցով: Օրենսդրության խնդիրն է սահմանել այնպիսի կառուցակարգեր, իսկ ընտրական մարմինների խնդիրը՝ այդ կառուցակարգերը գործադրել այնպիսի ձևերով, որոնք հնարավորություն ընձեռեն ձևավորել լիարժեք տեղեկատվական միջավայր, ուր քաղաքացին հնարավորություն ունենա ազատորեն կողմնորոշվելու և լիարժեք դրսևորելու իր ընտրական կամքը: Այն չափազանց կարևոր է ցանկացած երկրի, ցանկացած հասարակության համար, քանզի «Ազատությունը հակասական հետաքրքրությունների գոյության և անհրաժեշտության ճանաչումն է, և ժողովրդավարական վարչակարգը ստեղծում է տարածություն հոգևոր, քաղաքական և սոցիալական ուժերի համերաշխության և հակամարտության համար, հետևաբար՝ պարունակում է հետագա պատմական զարգացման հնարավորություն»<sup>6</sup>:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքն իրավունք է վերապահում Հանրապետության քաղաքացիներին, կուսակցություններին և նրանց դաշինքներին «օրենքով չարգելված ձևերով քարոզչություն կատարել ցանկացած թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ նրա դեմ»



(18-րդ հոդվ., 2-րդ մաս)՝: Սակայն թե որոնք են այդ «օրենքով չարգելված ձևերը», ընտրական օրենսգրքում ոչինչ չի ասված: Միայն դրա 18-րդ հոդվածի 4-րդ մասում թվարկվում են այն սուբյեկտները, որոնց արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել<sup>8</sup>:

Օգտվելով ընտրական օրենսդրության այդ բացից՝ նախընտրական քարոզարշավի մասնակիցները ցանկացած մտացածին լուրեր են տարածում ընտրովի մարմիններում առաջադրված թեկնածուների մասին, ինչը էապես ապակողմնորոշում է Հանրապետության քաղաքացիներին ճիշտ ընտրություն կատարելիս, որի արդյունքում այդ մարմիններում տեղեր են զբաղեցնում մարդիկ, որոնք իրենց որակական, մասնագիտական, բարոյական և այլ չափանիշներով չեն համապատասխանում տվյալ ընտրովի մարմնի կոչմանն ու առաքելությանը: Այսպես, 2008թ. նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ դրսևորվեց երկու ծայրահեղ մոտեցում. իշխանության թևի կողմնակիցները փորձում էին հանրությանը համոզել, որ նախագահի ընդդիմադիր թեկնածուի ընտրազանգվածն են կազմում թալանի ձգտող նախկին պաշտոնյաները և հասարակության անգիտակից, խաբված կամ ապաշնորհ անդամները, ստորին խավի ներկայացուցիչները, այսինքն՝ հասարակության ակնհայտ փոքրամասնությունը<sup>9</sup>: Նույն կարգով, ընդդիմադիր քարոզիչները, իրենց հերթին, հասարակությունը բաժանեցին «մենք»-ի և «ոչ մենք»-ի՝ շեշտելով «մենք»-ի առավելությունը և իշխանություններին բնութագրելով որպես ավազակապետություն, մոնղոլաթաթարական իշխանություն և այլն<sup>10</sup>: Արդյունքում հասարակությունը պառակտվեց երկու թևերի, իսկ չեզոք քաղաքացիների գիտակցության մեջ ընդդիմության թեկնածուն զուգորդվեց «հալածվածի և չպաշտպանվածի» պատկերներով<sup>11</sup>:

Մինչդեռ հարկ է նշել, որ «Անկախ պետությունների համագործակցության մաս-

նակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» 2002թ. Դաշնագիրը ամրագրում է կոնկրետ դրույթներ ընտրությունների տեղեկատվական լուսաբանման և ընտրական գործընթացներում ՁԼՄ-ների դերի վերաբերյալ, որը պահանջում է ընտրությունների մասին տեղեկատվության անկողմնակալ լուսաբանում<sup>12</sup>: Նույն կարգով Եվրոպայի խորհրդի շրջանակներում նախարարների կոմիտեի ընդունած թիվ 5 (1999) հանձնարարականը ուղղակիորեն վերաբերում է նախընտրական քարոզարշավի լուսաբանման ընթացքում արդարության, հավասարակշռության և անկողմնակալության սկզբունքների պահպանման նպատակով պետությունների կողմից ձեռնարկվելիք միջոցներին<sup>13</sup>:

Ասածից պարզորոշ հետևում է, որ ազատ ընտրությունների կազմակերպման չափանիշները անհրաժեշտ է իրավական առումով ամրագրել ընտրական օրենսդրությամբ, որպեսզի քարոզարշավի ընթացքում այն լուսաբանող ինստիտուտները խստագույնս առաջնորդվեն այդ չափանիշներով և ընտրողներին կողմնորոշելու համար ներկայացնեն անկողմնակալ և անաչառ լրատվություն: Մասնավորապես նպատակահարմար է, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ կետում («2. ՀՀ քաղաքացիները, կուսակցությունները, նրանց դաշինքները իրավունք ունեն օրենքով չարգելված ձևերով քարոզչություն կատարել ցանկացած թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ նրա դեմ») բացառել ընտրարշավին մասնակցող սուբյեկտներին «դեմ քարոզչությունը» (քանզի տարբեր տարիներին ընտրովի մարմինների «թեկնածուների դեմ» քարոզողները միշտ էլ չեն կարողացել ձեռնպահ մնալ իրենց մրցակիցներին վարկաբեկելու գայթակղությունից) և, ի թիվս ազատ ընտրությունների ապահովման այլ չափանիշների, ամրագրել քարոզարշավի ընթացքում թեկ-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ**

նաժուհիների պարտականությունը՝ իրենց մասին հայտնել միայն օբյեկտիվ և ճշմարիտ տեղեկատվություն և այդ պարտականության խախտման համար նախատեսել իրավական պատասխանատվության խիստ միջոցներ: Այդ ճանապարհով հնարավոր կլինի ճիշտ կողմնորոշել ընտրողներին և նպաստել նրանց ազատ կամքի դրսևորմանը:

Ընտրական համակարգի կարևոր առաքելություններից է **ընտրական իրավունքի ցանկացած սուբյեկտի կողմից իր իրավունքների բարեխիղճ կատարման ապահովումը**, ինչը «ազատ ընտրությունների» կազմակերպման հաջորդ կարևորագույն չափանիշն է: Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունում ընտրովի մարմինների կազմավորման ժամանակ ընտրական իրավունքի սուբյեկտները (այդ թվում առաջադրված թեկնածուները, նրանց վստահված անձինք, ընտրական հանձնաժողովները և այլն) հաճախ չարաշահում են իրենց տրված լիազորությունները: ՀՀ ընտրական օրենսգրքը նման խախտումների որոշ տեսակների արգելման վերաբերյալ բովանդակում է նորմեր: Այսպես, Օրենսգրքի 18-րդ հոդվածով նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին (կուսակցություններին) արգելվում է անձամբ կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ նատուցել (խոստանալ) ծառայություններ (7-րդ կետ): Այդ նույն հոդվածով արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութեր տարածել՝ 1) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս: 2) դատավորներին, ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության,

դատախազության մարմինների աշխատակիցներին: 3) բարեգործական և կրոնական կազմակերպություններին: 4) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին: 5) ընտրական հանձնաժողովների անդամներին (4-րդ կետ):

Մեր խնդիրը չէ քննարկել, թե նշված արգելքներից որն է ավելի արդյունավետ և ինչ կիրառություն է գտնում գործնականում, այլ ցույց տալ քննարկվող ոլորտում ՀՀ ընտրական օրենսդրությունում առկա որոշ բացեր, որոնք պատճառ են դառնում ընտրություններում քաղաքացիների ազատ կամքի դրսևորման խաթարմանը: Օրենսդրական կարգավորման բացակայությունը, բնականաբար, հնարավորություն չի ընձեռում իրավակիրառներին պատասխանատվության ենթարկել իրենց ընտրական իրավունքը չարաշահող սուբյեկտներին՝ վկայակոչելով դրա վերաբերյալ համապատասխան իրավական նորմը: Այսպես, որոշ քաղաքացիներ, որոնք հասարակության մեջ ունեն զգալի «քաղաքական կշիռ», ազդեցություն և հեղինակություն, մասնակցում են ընտրական գործընթացին՝ ընդգրկելով այս կամ այն կուսակցության (կուսակցությունների միավորման) պատգամավորության թեկնածուների ցուցակում (մեծամասամբ սկզբի համարներում) ոչ թե պատգամավորական մանդատ ստանալու նպատակով, այլ բացառապես այն բանի համար, որպեսզի իր հեղինակությունն օգտագործելով քվեարկողների ձայներ բերի տվյալ կուսակցության (կուսակցությունների միավորման) համար: Քվեարկությունից հետո այդպիսի թեկնածուները հրաժարվում են իրենց պատգամավորական մանդատներից<sup>14</sup>, և նրանց փոխարեն, օրենսդրությամբ նախատեսված կարգով, պատգամավորական մանդատ են ստանում ընտրացուցակի հաջորդ համարներում գրանցված թեկնածուները<sup>15</sup>:

Փաստորեն ստացվում է, որ նշված ընտրական տեխնոլոգիայի կիրառման արդյունքում ընտրողները քվեարկում են

մեկ ցուցակում ընդգրկված թեկնածուների օգտին, սակայն նրանց տեղը օրենսդիր մարմնում զբաղեցնում են այլ անձինք: Հետևաբար նման պայմաններում օրինաչափորեն կարող է կասկածի տակ դրվել Հանրապետության Խորհրդարանի լեգիտիմության հարցը: Մինչդեռ ընտրական իրավունքի նման դիտավորյալ չարաչափման համար ընտրական օրենսդրությունը որևէ պատասխանատվություն չի նախատեսում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (67-րդ հոդվ.) և Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը (12-րդ հոդվ.) սահմանում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում կարող են ժամկետից շուտ դադարել պատգամավորի լիազորությունները: Այդ հիմքերի թվում նշվում է նաև պատգամավորի մանդատից հրաժարվելու իրավունքը, որն իրականացվում է ԱԺ կանոնակարգի 13-րդ հոդվածում սահմանված կարգով: Հասկանալի է, որ օրենսդրությամբ նպատակահարմար չէ սահմանափակել պատգամավորի իրավունքը՝ հրաժարվելու իր պատգամավորական մանդատից: Սակայն այլ է խնդիրը, երբ պատգամավորն ստիպված է հրաժարվել իր մանդատից, մեկ այլ բան, երբ անձը վաղօրոք գիտի, որ ընտրվելուց հետո չի զբաղվելու պատգամավորական գործունեությամբ: Այսպես, երբ Սահմանադրությամբ նախատեսված կարգով անձը պետական ապարատում զբաղեցնում է պաշտոն, կորցնում է քաղաքացիությունը, դատապարտվում է ազատազրկման, ճանաչվում է անգործունակ և այլն, ապա հարկադրաբար (երբեմն իր կամքից անկախ) վաղաժամկետ դադարեցվում են նրա լիազորությունները, որն օրինաչափ իրավիճակ է: Իսկ երբ նա ընդգրկվում է կուսակցության ընտրական ցուցակում, մասնավորապես ցուցակի առաջին եռյակում, որպեսզի վերջինիս համար ծայներ վաստակի, վաղօրոք իմանալով, որ ընտրվելուց հետո հրաժարվելու է պատգամավորական մանդատից, և իր տեղն զբաղեցնելու է ցուցակի հաջորդ

համարի թեկնածուն, ապա նման իրավիճակը, մեր կարծիքով, կարելի է որակել որպես ընտրական իրավունքի չարաչափում:

Նման չարաչափումները կանխելու կապակցությամբ արտասահմանյան երկրների ընտրական իրավունքում մշակվել են որոշակի լուծումներ: Այսպես, Ռուսաստանի Դաշնության ընտրական օրենսդրությամբ նախատեսվում է, որ եթե համապետական ընտրություններից հետո կուսակցություններից մեկի ցուցակի առաջին երեք համարներում գրանցված թեկնածուն Պետական դումայի ընտրվելու օրվանից մեկ տարվա ընթացքում առանց հարկադիր պատճառի վաղաժամկետ դադարեցնում է իր պատգամավորական լիազորությունները, ապա Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը նրա մանդատը հանձնում է ոչ թե այդ նույն կուսակցության ցուցակում գրանցված հաջորդ թեկնածուին, այլ՝ պատգամավորական տեղերի բաշխմանը մասնակցող հաջորդ կուսակցությանը<sup>16</sup>:

Ինչպես հետևում է բերված օրենքի բովանդակությունից, նշված սանկցիան տարածվում է միայն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վրա, որովհետև նրանք զրկվում են իրենց շահած մանդատներից, իսկ իրենց ընտրական իրավունքը չարաչափած անձինք պատասխանատվության չեն ենթարկվում<sup>17</sup>, քանզի պատգամավորական մանդատից հրաժարվելը անձի իրավունքն է, որի սահմանափակումը կհակասի անձի սահմանադրական իրավունքներին և ազատություններին: Այդ առնչությամբ նպատակահարմար է, մեր կարծիքով, ՀՀ ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետը («Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ մեկշաբաթյա ժամկետում տրվում է համապատասխան կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին...») լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադա-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՔՈՆ**

սությանը. «Եթե կուսակցության ցուցակի առաջին երեք համարներում գրանցված թեկնածուն ՀՀ Ազգային ժողովի ընտրության օրից մեկ տարվա ընթացքում առանց հարկադրվածության վաղաժամկետ դադարեցնում է իր պատգամավորական լիազորությունները, ապա կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ նրա մանդատը հանձնվում է պատգամավորական տեղերի բաշխմանը մասնակցող հաջորդ կուսակցությանը»:

Ընտրողների ազատ կամքի դրսևորման համար Հանրապետության ընտրական համակարգը խնդիր ունի նաև ապահովելու քաղաքացիների համար իրական ընտրություն կատարելու հնարավորություն, այսինքն՝ ամրագրելու **թեկնածուների մրցակցության սկզբունքը**, որը պահանջում է ընտրական քվեաթերթիկներում ներկայացնել ոչ պակաս, քան երկու թեկնածուների ազգանուններ: Նման պահանջը բխում է «ընտրություն» հասկացության բուն բովանդակությունից, որը մեկնաբանվում է որպես համապատասխան մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու գործընթաց, որն իրականացվում է իրավազոր անձանց քվեարկության միջոցով՝ պայմանով, եթե յուրաքանչյուր մանդատի համար սահմանված կարգով հավակնում են երկու և ավելի թեկնածուներ<sup>18</sup>:

Ասածից պարզորոշ հետևում է, որ մրցակցության և այլընտրանքի բացակայության պայմաններում անցկացվող ցանկացած միջոցառում չի կարելի ընտրություն անվանել, քանզի ընտրություններն, անգամ քաղաքական կոնտեքստից դուրս, ենթադրում են մի քանի սուբյեկտների առկայություն, որի դեպքում, ընտրության նպատակից, առաքելությունից ելնելով, ընտրվող սուբյեկտներից որևէ մեկին պետք է տրվի առավելություն<sup>19</sup>:

Հայաստանի Հանրապետության ընտ-

րական օրենսգիրքը, ինչպես Հայաստանի Հանրապետության Նախագահի, այնպես էլ Ազգային ժողովի մեծամասնական կարգով ընտրությունների ժամանակ պարտադիր չի համարում այլընտրանքային քվեարկությունը, այսինքն՝ թույլատրում է մեկ թեկնածուի քվեարկության հնարավորությունը: Այսպես, Օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի ընտրության ժամանակ «Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին» (2-րդ կետ): Կամ Օրենսգրքի 87-րդ հոդվածն ամրագրում է, որ Հանրապետության Նախագահի ընտրությունը չկայացված է ճանաչվում, եթե՝ «քվեարկված միակ թեկնածուին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ» (1-ին մաս)<sup>20</sup>:

Նույն կարգով, Հանրապետության ընտրական օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրությունների ժամանակ «Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին» (3-րդ կետ)<sup>21</sup>:

Այստեղից պարզորոշ հետևում է, որ Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը համապետական (նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների՝ համայնքապետերի) ընտրության ժամանակ չի ապահովում մրցակցության սկզբունքը: Դա հնարավորություն է տալիս բնակչության համար անցանկալի անձանց ոչ քաղաքակիրթ միջոցների գործադրմամբ (ընտրակաշառք տալը, սպառնալը, սուտ խոստումներ տալը) գրանցվել համապատասխան ընտրատարածքում որպես Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով միակ պատգամավորության թեկնածու կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ որպես համայնքի ղեկավարի միակ թեկնածու<sup>22</sup>:

Նման իրավիճակը, անշուշտ, էապես

ազդում է ընտրողների կամքի ազատ դրսևորման, ինչպես նաև Հանրապետության ընտրովի մարմինների լեգիտիմության վրա: Մինչդեռ արտասահմանյան որոշ երկրների ընտրական գործընթացները կանոնակարգող օրենսդրական ակտերում իր կայուն տեղն է զբաղեցնում պարտադիր մրցակցության սկզբունքը: Այսպես, «Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պալետական Դումայի պատգամավորների ընտրության մասին» 1995թ. հունիսի 15-ին ընդունված Դաշնային օրենքի 42-րդ հոդվածում («պատգամավորության թեկնածուների գրանցումը») գրված է. «Այն դեպքում, եթե ներկա հոդվածով սահմանված ժամկետում միամանդատ ընտրատարածքում կգրանցվի միայն մեկ թեկնածու կամ չի գրանցվի ոչ մի թեկնածու... ապա համապատասխան հանձնաժողովի որոշմամբ ընտրությունները նման ընտրատարածքում կհետաձգվեն 60 օրով՝ լրացուցիչ թեկնածուներ առաջադրելու համար» (13-րդ մաս): Այդ նույն հոդվածով նախատեսվում է նաև, որ եթե միամանդատ ընտրատարածքում ընտրության օրը մնացել է երկու թեկնածուներից պակաս, ապա ընտրությունները այդ ընտրատարածքում համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշմամբ հետաձգվում են 100 օրով՝ լրացուցիչ թեկնածուներ առաջադրելու և ընտրական հետագա գործողություններ կատարելու համար (14-րդ մաս)<sup>29</sup>:

Հայաստանի Հանրապետությունը, ըստ էության, իր ստեղծման օրից շատ ջանքեր է գործադրել եվրոպական ընտանիքին պատկանող պետությունների օրինակով երկրում ժողովրդավարական կարգերի արմատավորման ուղղությամբ: Լուրջ առաջընթաց քայլեր են կատարվել, մասնավորապես, ընտրական համակարգի կատարելագործման և արդար ու ազատ ընտրություններ անցկացնելու ուղղությամբ: Սակայն, չնայած դրան, դեռևս Հանրապետությունում կան անհատներ, որոնք, օգտվելով ընտրական օրենսդրության բացերից և օգտագործելով իրենց հասարակա-

կան դիրքը, կարողանում են անարգել թափանցել հայոց խորհրդարան՝ առանց պետական այդ կառույցի համար նախատեսվող արժանիքների տիրապետման: Ընտրական օրենսդրության այդ բացերից է ընտրատարածքում պատգամավորության թեկնածուների մրցակցության (այլընտրանքային քվեարկության) սկզբունքի բացակայությունը, որի վերացման դեպքում հնարավոր կլինի կանխել նման անձանց մուտքը խորհրդարան: Ուստի, նպատակահարմար է, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 108-րդ («Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների գրանցումը») և 124-րդ («Համայնքի ղեկավար և ավագանու անդամ առաջադրված թեկնածուների գրանցումը») հոդվածներում ամրագրել նորմեր, որոնք Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների և համայնքապետերի թեկնածուների (միամանդատ ընտրատարածքում) գրանցման ժամանակ կնախատեսեն ոչ պակաս, քան երկու թեկնածուի առկայություն: Միաժամանակ, բացառված չէ, որ մեկից ավելի թեկնածուների գրանցումից հետո տարբեր պատճառներով որոշ թեկնածուներ «հրաժարվեն» պայքարը շարունակելուց և քվեարկության օրվա նախօրյակին ցուցակում մնա մեկ թեկնածու: Ուստի նպատակահարմար է նշված հոդվածներում ամրագրված նորմերով նախատեսել նաև, որ նման դեպքերում հետաձգվում է քվեարկությունը (համապատասխան հանձնաժողովի կողմից նախատեսված ժամկետով)՝ լրացուցիչ թեկնածուների առաջադրման և հաջորդ ընտրական գործողությունների կատարման համար:

Քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման ժամանակ ազատ կամքի դրսևորման կարևոր նախադրյալ է նաև **ժողովրդի ինչպես ընդհանուր, այնպես էլ քաղաքական մշակույթի մակարդակը**: Դա նշանակում է, որ ժողովրդավարական (եվրոպական) չափանիշներով ընտրություններ անցկացնելու համար հասարակութ-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

յունը պետք է հասունացած լինի: Դա քաղաքական մշակույթի այն մակարդակն է, երբ ժողովուրդը գիտակցում է իր իրավունքները և հարգում է ուրիշի իրավունքները, հասկանում է իր պարտականությունները և ընդունակ է ինքնասահմանափակման: Հայաստանի Հանրապետությունում քաղաքական մշակույթի այդ մակարդակը դեռևս բացակայում է, քանզի քաղաքական գիտակցության նման բարձունքի հնարավոր չէ հասնել միանգամից. այն ձեռք է բերվում երկարատև և դժվարին կյանքի փորձով:

Հայաստանը իրական ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու ձևավորված մշակույթ և փորձ չունի, որն իր ուղղակի ազդեցությունն է ունենում քաղաքացիների ընտրական կամքի դրսևորման վրա: Արդյունքում քվեարկողների մի մասը, ելնելով իր կենսապայմաններից, իր ձայնը «փոխանակում է» նյութական բարիքներով, մյուս մասը կուլ է գնում քաղաքական այս կամ այն ուժի խոստումներին, երրորդ խումբ մարդիկ ընդհանրապես չեն հավատում ոչ մեկին (ոչ իշխանություններին, ոչ էլ ընդդիմադիրներին) ու չեն կողմնորոշվում և այլն:

Սակայն դա ամենևին չի նշանակում, որ ժողովուրդը չպետք է մասնակցի ընտրություններին (և այդ ճանապարհով՝ պետության կառավարմանը), ինչպես եզրակացնում են առանձին հետազոտողներ<sup>24</sup>: Չի կարելի սպասել, մեր կարծիքով, թե երբ ժողովուրդը «կհասունանա» իր ընտրական կամքը ազատ արտահայտելու համար, այլ պետք է նրան հնարավորություն

ընձեռել սովորելու, ձեռք բերելու փորձ, անմիջապես իրականացնելու իր ընտրական իրավունքները գործնականում: Նման արդյունք կարելի է ակնկալել միայն հասարակության իրավական դաստիարակության ընդարձակ ծրագրերի իրականացման, հասարակական կարծիքի ձևավորման, ժողովրդավարական օրենքների ընդունման և այլ միջոցառումների իրականացման ճանապարհով, ինչը կնպաստի Հանրապետության ընտրագնազվածի ազգային մտածողության և ընդհանուր բարեկեցության խնդրի լուծմանն աջակցելու կամքի ձևավորմանը:

Ընտրողների ազատ կամքի արտահայտման գործում իրենց բացասական կնիքն են թողնում նաև ընտրական գործընթացին մասնակից սուբյեկտների կողմից ընտրական իրավունքի այնպիսի խախտումները, ինչպիսիք են ապօրինի քարոզչությունը, ընտրակաշառք տալը, ֆինանսական բնույթի խախտումները, ընտրական գործընթացի վերահսկողությանը խոչընդոտելը, ընտրությունների արդյունքները կեղծելը, ընտրական գործընթացում խախտումներ կատարած անձանց նկատմամբ օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ չկիրառելը և այլն<sup>25</sup>: Նշված խախտումներն իրենց արտահայտությունն են գտնում ընտրական գործընթացի տարբեր փուլերում (ընտրությունների նախապատրաստում, քվեարկության կազմակերպում, ձայների հաշվառում և արդյունքների հրապարակում), որոնց քննական վերլուծությունը նույնպես հնարավորություն կտա ավելի արդյունավետ կազմակերպել քաղաքացիների կամքի ազատ դրսևորման հարցը Հանրապետության ընտրովի մարմինների կազմակերպման ժամանակ:

<sup>1</sup> Սահմանադրական իրավունքում լեգիտիմություն (լատիներեն legitimus – օրինական) է անվանվում պետական իշխանության մարմնի կամ բարձրագույն պաշտոնատար անձի իրավունքների և լիազորությունների օրինակա-

նության, ինչպես նաև սահմանադրության և ժողովրդի օրինական արտահայտված կամքին դրանց խստագույնս համապատասխանության ճանաչումը:

- <sup>2</sup> Տե՛ս Մակլակով В.В. Конституционное право зарубежных стран. М. 2006, էջ 511-550; Енгибарян Р.В. Конституционное развитие в современном мире (Основные тенденции). М., 2007, էջ 323-332; Сравнительное конституционное право (Отв. ред. В.Е.Чиркин). М., 2002, էջ 218-227 և ուրիշներ:
- <sup>3</sup> Տե՛ս Зиновьев А.В., Поляшова И.С. Избирательная система России: теория, практика и перспективы. СПб., 2003, էջ 34:
- <sup>4</sup> Տե՛ս Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М., 2005, էջ 387:
- <sup>5</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 395:
- <sup>6</sup> Конрад Хессе. Основы Конституционного права ФРГ. М., 1981, էջ 87:
- <sup>7</sup> ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 4 (528), 17.01.07, էջ 25-26:
- <sup>8</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 26:
- <sup>9</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» - հոկտեմբերի 27, 2007թ.
- <sup>10</sup> Տե՛ս «Հայկական ժամանակ» - 2007թ. դեկտեմբերի 4, 2008թ. փետրվարի 6:
- <sup>11</sup> Մանրամասն տես Մարդու իրավունքների պաշտպանի «Արտահերթ իրապարակային գեկույցը» 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական գարգացումների վերաբերյալ: Երևան, 2008, էջ 7-10:
- <sup>12</sup> Տե՛ս [www.laws.am](http://www.laws.am).
- <sup>13</sup> Տե՛ս <http://wed.coe.int/view doc.jsp.=FFAC 75>
- <sup>14</sup> Այդպես վարվեցին ՀՀ ԱԺ մայիսի 12-ի ընտրություններին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ցուցակում ընդգրկված որոշ պատգամավորներ:
- <sup>15</sup> Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետը:
- <sup>16</sup> Տե՛ս Федеральный Закон “О выборах депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации” от 20 декабря 2002г.
- <sup>17</sup> Советников И. Злоупотребление пассивным избирательным правом// Сравнительное конституционное обозрение. М., 2005, N 2 էջ 140-141:
- <sup>18</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (պատասխանատու խմբագիր իրավ. գիտ. դոկ. պրոֆ. Ն.Այվազյան), Երևան, 2008, էջ 447:
- <sup>19</sup> Տե՛ս Թովմասյան Հ.Վ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը (թեկնածուական ատենախոսության սեղմագիր), Երևան, 2000, էջ 11:
- <sup>20</sup> Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք, Երևան, 2008, էջ 81:
- <sup>21</sup> Նույն տեղում, էջ 97:
- <sup>22</sup> Այսպես, 2007թ. մայիսի 12-ին կայացած ՀՀ Խորհրդարանական ընտրությունների ժամանակ 4 ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով զրանցվել էին յուրաքանչյուրում մեկ թեկնածու, իսկ 2008թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ 7 համայնքներում զրանցվել էին համայնքի մեկական թեկնածու:
- <sup>23</sup> Собрание законодательства Российской Федерации, 1995, N 26, հոդվ. 2398:
- <sup>24</sup> Տե՛ս Бердяев Н.А. О назначении человека. М., 1993, էջ 172-173; Соловьев В.С. Собрание сочинений и писем: в 15 томах. Т.1. М., 1992, էջ 273 և ուրիշներ:
- <sup>25</sup> Մանրամասն տես Малиновский А.А. Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование). М., 2007, էջ 55-90: Նույն ինքը՝ Злоупотребление избирательными правами: вопросы квалификации, Право и управление — XXI век. М., 2008, N1 (6), էջ 12-16 և ուրիշներ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

**ԱՐԴՅՈ՞Ք ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՉԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՀԱՔԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՆԵՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Արմենուհի ԳԱՌԳԱԼՈՅԱՆ**  
*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ*

Ինքնապաշտպանության իրավունքը պետությունների անբաժան, անօտարելի և բնական իրավունքն է, որը կարելի է իրականացնել միայն զինված հարձակման ենթարկվելու դեպքում: Համաձայն Միավորված Ազգերի կազմակերպության կանոնադրության 51-րդ հոդվածի՝ “Սույն կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի զինված հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ...”<sup>1</sup>: Ինքնապաշտպանության իրավունքը ենթադրում է, որ իրենց վրա զինված հարձակման դեպքում պետությունները կարող են ձեռնարկել ինքնապաշտպանական գործողություններ: Ձինված հարձակման ենթարկվելը, Կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն, ինքնապաշտպանական գործողություններ ձեռնարկելու կարևորագույն նախապայման է: Սակայն ներկայումս վիճահարույց է մնում այն հարցը, թե արդյոք պետություններն օգտվում են այդ իրավունքից միայն այն պարագայում, երբ զինված հարձակումը իրականացվել է մեկ այլ պետության կողմից, թե այդ իրավունքի իրականացումը կախված չէ հարձակման սուբյեկտից. այսինքն՝ պետություններն ու-

նե՞ն ինքնապաշտպանության իրավունք ինչպես մեկ այլ պետության կողմից զինված հարձակման ենթարկվելու պարագայում, այնպես էլ ոչ պետական կազմավորումների՝ մասնավորապես ահաբեկչական կազմակերպությունների կողմից հարձակումների ենթարկվելու դեպքում: Հենց այս հանգամանքն էլ նկատի ունենալով՝ ինքնապաշտպանության իրավունքը մեկնաբանվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ մեկնաբանման կողմնակիցները գտնում են, որ ինքնապաշտպանության իրավունքին կարելի է դիմել միմիայն մեկ այլ պետության կողմից զինված հարձակման ենթարկվելու դեպքում: Իսկ լայն մեկնաբանման կողմնակիցները, ընդհակառակը, նշում են, որ այդ իրավունքը որևէ կերպ չի կարող կախվածության մեջ լինել հարձակման սուբյեկտից: Սույն հիմնահարցը առավել մանրամասն քննարկելու համար ստորև կներկայացվեն ինքնապաշտպանության իրավունքի նեղ և լայն մեկնաբանությունները առանձին- առանձին:

Նեղ մեկնաբանման կողմնակիցները նշում են, որ քանի որ ՄԱԿ-ի ադան են հանդիսանում պետությունները, հետևաբար ՄԱԿ-ի Կանոնադրությունը բացառապես կարգավորում է պետությունների փոխհարաբերությունները: Այսինքն՝ Կանոնադրության 51-րդ հոդվածը չի կարող վերաբերել ոչ պետական կազմավորումներին, և հետևաբար պետությունները այդ ոչ պետական կազմավորումների հետ հարաբերություններում չեն կարող հղում կատարել ՄԱԿ-ի Կանոնադրությանը:

Օրինակ, ՄԱԿ-ի Արդարադատության



միջազգային դատարարանի կողմից քնված երկու գործերով, այն է՝ բռնազավթված Պաղեստինի տարածքում պատի կառուցման իրավական հետևանքների վերաբերյալ խորհրդատվական եզրակացության և Կոնգոն ընդդեմ Ուգանդայի գործերով կայացրած վճիռներում նշում է, որ ինքնապաշտպանության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ է զինված հարձակումը կատարված լինի որևէ պետության կողմից<sup>2</sup>:

Այս տեսակետի կողմնակիցները նշում են, որ եթե նույնիսկ պետությունը իրավունք ունի ինքնապաշտպանություն իրականացնել ոչ պետական կազմավորումների նկատմամբ, ապա միայն այն դեպքում, երբ այդ կազմավորումների գործողությունները վերագրելի են պետությանը. այսինքն՝ այդ ոչ պետական կազմավորումները պետք է կապ ունենան այն պետության հետ, որի հանդեպ իրականացվում է ինքնապաշտպանության իրավունքը<sup>3</sup>:

Գրականության մեջ քննարկումների առարկա է նաև այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը նախատեսում է զինված հարձակման առկայությունը, իսկ ահաբեկչական գործողությունները չեն կարող զինված հարձակում համարվել:

Հակառակ այս տեսակետի կողմնակիցների՝ ինքնապաշտպանության իրավունքի լայն մեկնաբանման կողմնակիցները նշում են, որ պետությունները ունեն ինքնապաշտպանության իրավունք անկախ հարձակման սուբյեկտից:

Այժմ կփորձենք ներկայացնել հոգուտ այս տեսակետի հանդես եկողների փաստարկները:

Նախ, պետությունների ինքնապաշտպանության բնական կամ անբաժան իրավունքը երաշխավորված և ճանաչված է ոչ միայն ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, այլ նաև միջազգային սովորության իրավունքով: Այսպես, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը «Ռազմական և ապառազմականացված գործողությունները

Նիկարագուայում և դրա դեմ» գործով նշում է, որ ինքնապաշտպանության իրավունքը ճանաչվում է որպես պետությունների անբաժան իրավունք ինչպես միջազգային սովորության իրավունքով, անպես էլ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածով<sup>4</sup>: Այն մասնավորապես նշում է, որ Կանոնադրության 51-րդ հոդվածը բազմաթիվ հիմքերից մեկն է, որը վկայում է ինքնապաշտպանության բնական և անբաժան իրավունքի մասին, և դժվար է չնկատել դրա սովորության բնույթը, նույնիսկ եթե դրա ներկա բովանդակությունը վերահաստատվել է Կանոնադրությամբ<sup>5</sup>:

Երկրորդ, ինքնապաշտպանության իրավունքը կարգավորող ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածում չկա ոչ մի մատնանշում առ այն, թե ում կողմից պետք է իրականացված լինի զինված հարձակումը, և հետևաբար պարտադիր պահանջ չկա, որ այդ հարձակումը անպայման պետք է կատարի պետությունը<sup>6</sup>: ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը բավական ընդգրկում է այն թույլատրում է պետություններին ինքնապաշտպանական գործողություններ ձեռնարկել նաև ոչ պետական կազմավորումների կողմից հարձակման ենթարկվելու դեպքում<sup>7</sup>:

Ավելին, ինչպես նշում են այս տեսակետի կողմնակիցները, եթե նույնիսկ ընդունենք այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի անդամ են միայն պետությունները, այսինքն՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը կարգավորում է միայն պետությունների փոխհարաբերությունները, ապա 1969թ-ի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի առաջին կետի համաձայն պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների և դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո<sup>8</sup>: Նույն կոնվենցիայի 31-րդ հոդվածի 3-րդ կետի բենթակետի համաձայն՝ պայմանագրի մեկնաբանման նպատակով համատեքստի

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

հետ միասին հաշվի է առնվում պայմանագրի կիրառման հետագա պրակտիկան, որը սահմանում է դրա մեկնաբանման վերաբերյալ մասնակիցների համաձայնությունը: ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի հետագա կիրառման պրակտիկան ցույց տալու համար բավական է մատնանշել ինքնապաշտպանության այն գործողությունների օրինակները, որոնց դիմել են պետությունները ահաբեկչական գործողություններից հետո: Այսպես, 1986թ-ին ԱՄՆ-ը ի պատասխան Լիբիայից ֆինանսավորվող կազմակերպությունների կողմից իր քաղաքացիների նկատմամբ իրականացված ահաբեկչական գործողությունների, օդային ռմբահարումներ ձեռնարկեց Լիբիայի դեմ<sup>9</sup>: 1993թ-ին դարձյալ ԱՄՆ-ը այս անգամ Իրաքի նկատմամբ հարձակում իրականացրեց՝ ի պատասխան իր երկրի նախագահի նկատմամբ ծրագրված մահափորձի<sup>10</sup>: 1985թ-ին Իսրայելը ինքնապաշտպանական գործողություններ ձեռնարկեց Թունիսում՝ ի պատասխան Կիպրոսում գտնվող Իսրայելի գաղտնի գործակալի վրա հարձակման: 1998թ-ին ԱՄՆ-ը, ի պատասխան Աֆրիկայում իր դեսպանատների դեմ իրականացված ահաբեկչությունների, որոնց հետևանքով զոհվեց շուրջ 300 անձ, հարձակումներ ձեռնարկեց Աֆղանստանում գտնվող ահաբեկիչների պատրաստման ճամբարների վրա<sup>11</sup>: Ոչ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը և ոչ էլ Գլխավոր ասամբլեան չդատապարտեցին այդ գործողությունները: Բոլորովին վերջերս 2008թ. սկզբին, թուրքական զորքերը ներխուժեցին Չյուսիսային Իրաքի տարածք՝ ահաբեկչական կազմակերպությունների գործողությունները դադարեցնելու նպատակով, և միջազգային հանրությունը չդատապարտեց դա: Եվ վերջապես ամենավառ օրինակը, երբ պետությունը, ի պատասխան ահաբեկչական գործողությունների, իրականացրել է իր ինքնապաշտպանության ի-

րավունքը, իհարկե, 2001թ-ի սեպտեմբերի 11-ին հաջորդած գործողություններն են: 2001թ-ի հոկտեմբերի 7-ին ԱՄՆ-ը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահին իր մշտական ներկայացուցչի միջոցով տեղեկացրեց, որ ի պատասխան ահաբեկչական գործողությունների՝ իրականացնում է ինքնապաշտպանության իր անբաժան իրավունքը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը իր 1368 և 1373 բանաձևերով վերահաստատեց ԱՄՆ-ի այդ իրավունքը: Միջազգային հանրությունը աննախադեպ լայն օժանդակություն ցուցաբերեց ԱՄՆ-ին ինքնապաշտպանական գործողությունների ընթացքում: Եվրոմիությունը, Աֆրիկյան երկրների միությունը, Ամերիկյան երկրների կազմակերպությունը, Արաբական լիգան և բազմաթիվ պետություններ ԱՄՆ-ին հայտնեցին իրենց օժանդակության մասին<sup>12</sup>:

Պետությունների այս պրակտիկան ցույց է տալիս, որ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի լայն իմաստով, և հետևաբար այն չի բացառում պետությունների ինքնապաշտպանության իրավունքը նաև ահաբեկչական գործողություններին ի պատասխան:

Ավելին, ինչպես նշում է ամերիկյան ակադեմիկոս մասնագետ Մ. Գլենոնը, պետությունների հետագա պրակտիկան կարող է ազդել ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթների մեկնաբանման վրա՝ մասնավորապես ուժի կիրառման խնդրին<sup>13</sup>:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի կայացրած վճիռներին, ապա այստեղ ևս մեկ կարծիք լինել չի կարող: Ավելի կոնկրետ՝ վերոհիշյալ առաջին գործում Դատարանը նշում է, քանի որ Իսրայելի տարածքում իրականացված ահաբեկչական գործողությունները չեն կարող վերագրվել ինչ-որ պետության, հետևաբար Իսրայելը, ի պատասխան այդ գործողությունների, չունի ինքնապաշտպանության իրավունք: Կոնգոյի գործում Դատարանը, ի տարբերություն վերոհիշյալ գործի, ուղղակիորեն չի

մատնանշում, որ զինված հարձակումը պետք է վերագրելի լինի պետությանը՝ ինքնապաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորություն առաջացնելու համար: Բացի այս ամենից, Պաղեստինի և Իսրայելի միջև պատի կառուցման գործում Դատարանը նշում է, որ ահաբեկչական գործողությունները չեն կարող հիմք հանդիսանալ ինքնապաշտպանության իրավունքի համար, քանի որ դրանք գտնու են անմիջապես Իսրայելի հսկողության տակ գտնվող տարածքում: Հետևաբար, Դատարանը չի բացառում այն հանգամանքը, որ եթե վտանգը լիներ Իսրայելի սահմաններից դուրս, ապա ինքնապաշտպանության իրավունքից օգտվելը կհամարվեր օրինական: Եվ ամենակարևորը. այս գործերը լուծելիս Դատարանի վճիռները միաձայն չեն ընդունվել: Երկուսում առկա են դատավորների առանձին կարծիքներ<sup>14</sup>:

Ինչպես արդեն նշվել է, գրականության մեջ քննարկման առարկա է դարձել այն հանգամանքը, որ պետությունները ահաբեկչական կազմակերպությունների նկատմամբ չունեն ինքնապաշտպանության իրավունք այն պարզ պատճառով, որ ահաբեկչական գործողությունները զինված հարձակումներ չեն: Այս տեսակետը ևս վիճահարույց է, քանզի միջազգային իրավունքում դեռևս բացակայում է զինված հարձակման հստակ սահմանումը, և հետևաբար չի կարելի միանշանակորեն պնդել, որ ահաբեկչական գործողությունները զինված հարձակումներ չեն: Նախ, ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ “զինված հարձակում” արտահայտությունը բացակայում է<sup>15</sup>: Հենց այս հիմքով էլ գրականության մեջ նշվում է, որ այժմ պետությունները ահաբեկչական կազմակերպությունների իրականացրած հարձակումները նույնացնում են պետության կողմից իրականացվող “զինված ագրեսիային” դրանով իսկ տուժող պետությանը իրավունք ընձեռելով իրականացնել իր ինքնապաշտպանության իրավունքը<sup>16</sup>: Դրա ամենավառ ապացույցը արդեն մատնանշված սեպտեմբերի 11-ի օ-

րինակն է, երբ միջազգային կազմակերպությունները համաձայնեցին, որ սեպտեմբերի 11-ի հարձակումները ահաբեկչական գործողություններ<sup>17</sup> են և ԱՄՆ-ի դեմ ուղղված զինված հարձակում: Բացի այդ, գոյություն ունեն մի շարք այլ օրինակներ ևս, որոնց պարագայում ոչ պետական կազմավորումների իրականացրած գործողությունները որակվել են որպես զինված հարձակումներ: Այսպես, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը Juan Carlos Abella et. al. v. Argentina գործում նշում է, որ չնայած կարճատևությանը՝ գործում քննարկվող գործողությունները զինված հարձակումներ էին, որովհետև դրանք մանրակրկիտ պլանավորված և նպատակաուղղված բնույթ ունեին<sup>18</sup>: Իսրայելի Գերագույն դատարանը 2006թ-ին քննվող գործում նշում է, որ երկիրը դարձել է զինված հարձակումների թիրախ, քանի որ այն ենթարկվում է շարունակական ահաբեկչական գործողությունների<sup>19</sup>: Նախկին Հարավսլավիայի Քրեական տրիբունալը Prosecutor v. Dusko Tadic գործում նշում է, որ զինված հակամարտությունը առկա է ցանկացած այն դեպքում, երբ գոյություն ունի ուժի գործադրում պետությունների կամ կառավարական ուժերի և կազմակերպված զինված խմբավորումների միջև<sup>20</sup>: Եվ վերջապես, ինչպես նշվում է գրականության մեջ, ոչ պետական հզոր խմբերի կամ կառավարության հետ սերտ կապեր ունեցող անկանոն խմբավորումների կողմից իրականացված գործողությունները զինված հարձակումներ են<sup>21</sup>: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից աշխարհում զինված հարձակում կարող են իրականացնել ոչ միայն պետությունները, այլ նաև խոշոր ահաբեկչական կազմակերպությունները:

Գրականության մեջ նշվում է, որ ահաբեկչության դեմ պետությունների ինքնապաշտպանության իրավունքի իրականացման միակ հնարավոր սահմանափակումն այն է, որ այդ իրավունքը պետք է նախապես տրվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհր-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

դի կողմից, ինչպես, օրինակ, 1368 և 1373 բանաձևերի պարագայում<sup>22</sup>: Սակայն այս տեսակետի հետ համաձայնելը ևս դժվար է, քանի որ ինքնապաշտպանության իրավունքը պետությունների անօտարելի իրավունքն է և կարիք չունի որևէ մարմնի կողմից շնորհվելու կամ հաստատվելու: ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը միայն միջազգային սովորության իրավունքի արտահայտման մի միջոց է, և ոչ կանոնադրությունը և ոչ էլ ՄԱԿ-ի որևէ մարմին չեն կարող սահմանափակել այդ իրավունքը:

Ռեսուրսներով այս երկու տեսակետների իրավական հիմքերը և հաշվի առնելով միջազգային իրավունքի ներկա զարգացումները՝ թերևս ավելի արժանահավատ է թվում երկրորդը: Մասնավորապես, մի ժամանակաշրջանում, որը անվանվում է «ահաբեկչության դեմ պատերազմի» ժամանակաշրջան, երբ պետությունների նկատմամբ ահաբեկչական կազմակերպությունների իրականացրած հարձակումները իրենց թե ծավալներով և թե հետևանքներով կարող են ոչ միայն չզիջել, այլ նաև գերազանցել պետությունների իրականացրած զինված հարձակումներին, անտրամաբանական կլիներ պետություններին զրկել ինքնապաշտպանության իրենց անօտարելի իրավունքին դիմելու հնարավորությունից:

Ամեն դեպքում, եթե նույնիսկ պետություններն իրենց ինքնապաշտպանությունը իրականացնում են ահաբեկչական գործո-

ղություններին ի պատասխան, նրանք միանշանակորեն պետք է առաջնորդվեն համաչափության և անհրաժեշտության սկզբունքներով: Այսպես, ՄԱԿ-ի Դատարանը Նիկարագուայի գործով նշել է, որ այն դրույթը, որ ինքնապաշտպանությունը ենթադրում է միայն այնպիսի միջոցներ, որոնք համաչափ են զինված հարձակմանը և անհրաժեշտ դրան պատասխանելու համար, միջազգային սովորության իրավունքում է<sup>23</sup>: Դատարանը վերահաստատել է այս դրույթը նաև Գլխավոր Ասամբլեային Legality of the threat or use of nuclear Weapons գործի հետ կապված խորհրդատվական եզրակացությունում<sup>24</sup>: Այսինքն՝ ձեռնարկված ինքնապաշտպանական գործողությունները իրենց ծավալներով և միջոցներով պետք է համապատասխանեն դրանց նախորդած զինված հարձակմանը և միաժամանակ լինեն անհրաժեշտ:

Այս ամենից հետևում է, որ պետությունների ինքնապաշտպանության իրավունքը ենթակա չէ որևէ սահմանափակման՝ կախված հարձակման սուբյեկտից: Հաշվի առնելով վերջին զարգացումները՝ կարելի է պնդել, որ միջազգային հանրությունը ընդունում է ահաբեկչության դեմ ուղղված ինքնապաշտպանական գործողությունները, և զրականության մեջ նույնիսկ նշվում է, որ լայնածավալ այն օժանդակությունը, որը ցուցաբերվեց ԱՄՆ-ին Աֆղանստանում իրականացվող ռազմական գործողությունների համար, ահաբեկչությանն ի պատասխան ինքնապաշտպանություն թույլատրող միջազգային սովորության իրավունքի ամենավառ արտահատությունն է<sup>25</sup>:

<sup>1</sup> Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրություն, հոդված 51:

<sup>2</sup> St'u Case concerning armed activities on the territory of the Congo./paras. 146-147/ , Legal consequences of the construction of a wall in the occupied Palestinian Territory, /para.139./:

<sup>3</sup> St'u Case concerning armed activities on the

territory of the Congo <2006> I.L. M. 271, para.146. Bruno Simma, ed. The Charter of the United Nations: A Commentary 2nd ed. (New York, Oxford University Press 2002) at 82..

<sup>4</sup> St'u ICJ Reports, 1986, pp. 14, 94; 76ILR, pp.349,428.

<sup>5</sup> St'u նույն տեղը:

- 
- <sup>16</sup> St'ú Karl Zemanek, Self-Defence Against Terrorism, Reflexions on an Unprecedented Situation, in EL DERECHO INTERNACIONAL EN LOS ALBORES DEL SIGLO XXI: HOMENAJE AL PROFESSOR JUAN MANUEL CASTRO-RIAL CANOSA 695, 702 (Fernando M. Mariño Menendez, ed. 2002):
- <sup>7</sup> St'ú Carsten Stahn, Terrorist Acts as "Armed Attack": The Right to Self-Defense, Article 51/1/2/1 of the UN Charter, and International Terrorism; 27- FALL Fletcher F. World Aff.35 (2003), at 36:
- <sup>8</sup> St'ú Vienna Convention on the Law of Treaties, art.31/3/:
- <sup>9</sup> St'ú W. Michael Reisman, International Legal Responses to Terrorosm, 22 Hous. J.Int'l L.3, at 34./1999/:
- <sup>10</sup> St'ú C. Gray, Self- defence against Terrorism. Extract from Evans, ed ., International Law /2003/,pp.603-5:
- <sup>11</sup> St'ú Ambassador Richardson's letter to the President of the U.N. Security Council, August 20, 1998 . U.N. Doc. S/1998/780:
- <sup>12</sup> St'ú Scott M. Malzahn, State sponsorship and support of international terrorism: Customary norms of state responsibility; 26 Hastings Int'l and Comp. L.Rev.85:
- <sup>13</sup> St'ú Glennon M.J., Limits of Law, Prerogatives of Power: Interventionism after Kosovo. Pulgrave Pub., New York, 2001:
- <sup>14</sup> St'ú Separate opinion of judge Kooijmans, Separate opinions of judges Kooijmans, Higgins, Buergenthal. Stanimir A. Alexandrov, Self – Defense Against the Use of Force in International Law./1996/, 182:
- <sup>16</sup> St'ú Antonio Cassesse, The international community's legal Response To Terrorism, 38 Int'l and Comp. L Q.558,596/1989/:
- <sup>17</sup> St'ú Scott M. Malzahn, State sponsorship and support of international terrorism: Customary norms of state responsibility; 26 Hastings Int'l and Comp. L.Rev.85:
- <sup>18</sup> St'ú Inter-American Commission on Human Rights, Juan Carlos Abella et. al. v. Argentina, 1997, para. 155:
- <sup>19</sup> St'ú Supreme Court of Israel. Public Committee against torture in Israel v. Israel. Para.16 ,2006:
- <sup>20</sup> St'ú Prosecutor v. Dusko Tadic, a/k/a "DULE" , ICTY, para.70:
- <sup>21</sup> St'ú Brownlie. International law and the use of force by states.1963.pp. 278-279:
- <sup>22</sup> St'ú Gray. Self –defence against terrorism, extract from Evans, ed., International Law/2003/, pp 603-5:
- <sup>23</sup> St'ú ICJ Reports , 1986.pp.14,94,103.76 ILR, pp.349, 428, 437:
- <sup>24</sup> St'ú ICJ Reports, 1996.pp.226, 245; 110ILR, p.163:
- <sup>25</sup> St'ú Greg Travalio and John Altenburg, Terrorism, State Responsibility and the use of Military Force, 4Chi.J.Int'l. L. 109 /2003/:
-

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

**Վարդան ԱՎԱԳՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
ասպիրանտ, ՀՀ քաղաքացիական  
ծառայության խորհրդի նախագահի օգնական*

Պետությունը կարող է համարվել իրավական միայն այն դեպքում, եթե դրանում առկա է իշխանությունների տարանջատում, օրենքների գերակայություն, անկախ դատարան, մարդու իրավունքների երաշխավորվածություն, սահմանադրական վերահսկողության ամբողջական և գործուն համակարգ<sup>1</sup>: Այս առումով հատկանշական է, որ Հայաստանի ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ Հանրապետություն սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմին չստեղծվեց: Առաջին Հանրապետությունը գոյատևեց մինչև սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգի ձևավորումը: Այն նույնիսկ չհասցրեց ընդունել իր սահմանադրությունը:

Խորհրդային պետությունը, լեցինյան բնորոշմամբ, հիմնված էր պետական իշխանության համակարգում սովետների գերիշխանության գաղափարի վրա, որն ի սկզբանե բացառում էր իշխանությունների տարանջատումը՝ որպես կապիտալիստական պետության դասակարգային էությունը քողարկող կեղծ բուրժուական գաղափար: Այս պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել սահմանադրական վերահսկողության հատուկ մեխանիզմի մասին: Ե՛վ ԽՍՀՄ Սահմանադրությամբ, և՛ ՀԽՍՀ Սահմանադրությամբ ամբողջ բարձրագույն իշխանությունը ձևականորեն կենտրոնացված էր Գերագույն խորհրդի /իսկ գործնականում՝ Կոմունիստական կուսակցության վերնախավի/ ձեռքերում: Այս պայ-

մաններում, իհարկե, պետական իշխանության համակարգում աներևակելի էր մի այնպիսի կառուցակարգի առկայություն, որի հիմնական առաքելությունն է վերահսկել այդ «իշխանության բարձրագույն մարմնի» կողմից ընդունվող ակտերի՝ օրենքների սահմանադրականությունը: Միայն գորբոշոյան վերակառուցման վերջին փուլում՝ 1989 թվականի դեկտեմբերին, անհասկանալի «սոցիալիստական իրավական պետության» կառուցման նպատակով ԽՍՀՄ 1977 թվականի Սահմանադրության մեջ կատարվեցին փոփոխություններ, և այլ նորանուններով շարքում նախատեսվեց նաև սահմանադրական հսկողության կոմիտեի ստեղծում: Դրան համապատասխան 1989 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունվեց «ԽՍՀՄ-ում սահմանադրական հսկողության մասին» օրենքը, և ձևավորվեց ԽՍՀՄ սահմանադրական հսկողության կոմիտեն, որում այլ հանրապետությունների ներկայացուցիչների հետ միասին ներգրավվեց նաև Հայկական ԽՍՀ ներկայացուցիչը:

1990թ. փոփոխություններ և լրացումներ կատարվեցին նաև Հայկական ԽՍՀ Սահմանադրության մեջ և արձանագրվեց, որ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը տասը տարի ժամկետով ընտրում է սահմանադրական հսկողության կոմիտե: Սակայն Խորհրդային Հայաստանում դրանով էլ ավարտվեց սահմանադրության գերակայությունը ապահովող կառուցակարգի նորմատիվ-իրավական հիմունքների ձևավորումը: Համապատասխան օրենքը այդպես էլ չունդունվեց, և կոմիտե չստեղծվեց:

ՀՀ-ում իշխանությունների տարանջատման գաղափարի կիրառման նպատակը առաջին անգամ պաշտոնապես արձանագր-

վեց 1990 թվականի օգոստոսի 23-ին՝ «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրում<sup>2</sup>, որի 9-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում: Հռչակագրի մեջ այդպիսի դրույթի ամրագրումը ինքնին ենթադրում էր սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի ստեղծման անհրաժեշտություն:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ հռչակագրերը գնահատվում են որպես սահմանադրական իրավունքի առանձնահատուկ աղբյուր: Դրանք ունեն հատուկ իրավաբանական նշանակություն, քանի որ դրանցում ձևակերպվում են այն սկզբունքները, որոնք պարտադիր են պետության ամբողջ սահմանադրաիրավական զարգացման համար: Հռչակագրերը սահմանում են նաև այն հայեցակետերը, որոնք կանխորոշում են պետականության հետագա զարգացումը և այն սկզբունքները, որոնց համապատասխան պետք է ձևավորվի օրենսդրությունը<sup>3</sup>: Այս առումով «Հայաստանի անկախության մասին» Հռչակագիրը առանձնահատուկ դեր ուներ Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական զարգացման գործընթացում՝ ընդհուպ մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը:

Հայաստանի անկախության հռչակումից հետո ընդունված մի շարք հիմնարար օրենսդրական ակտերով /ՀՀ Նախագահի մասին օրենք, ՀՀ Գերագույն խորհրդի մասին օրենք, «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենք/ նախատեսվում էր Սահմանադրական դատարանի ստեղծում: Սակայն համապատասխան օրենքը այդ ժամանակահատվածում չընդունվեց, և Սահմանադրական դատարան չստեղծվեց: Պատճառն այն էր, որ մինչև ՀՀ 1995 թվականի Սահմանադրության ընդունումը շարունակում էր գործել Հայկական ԽՍՀ 1977 թվականի Սահմանադրությունը:

Այստեղ պետք է հաշվի առնել մեկ կարևորագույն հանգամանք: 1990 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության անկախության մասին» Հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքը: Համաձայն այդ օրենքի՝ «մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը դադարեցվում է գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին»<sup>4</sup>: Քննարկվող օրենքը չդադարեցրեց խորհրդային Հայաստանի Սահմանադրության գործողությունը և դրանով իսկ չստեղծեց բացեր սահմանադրաիրավական կարգավորման ոլորտում: Այդ օրենքը ուղղակի գործող Սահմանադրությունը մասամբ զրկեց բարձրագույն իրավաբանական ուժից: Սահմանադրությունը պահպանեց իր բարձրագույն իրավաբանական ուժը բոլոր օրենքների նկատմամբ՝ բացառությամբ Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքների: Վերջիններս իրենց հերթին գործող Սահմանադրության նկատմամբ ստացան ավելի բարձր իրավաբանական ուժ<sup>5</sup>: Այդ պայմաններում ակնհայտ էր, որ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինը պետական իշխանության ընդհանուր համակարգում որևէ գործառնություն չէր կարող իրականացնել: Միայն ՀՀ 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո ստեղծվեցին անհրաժեշտ քաղաքական և իրավական պայմաններ ՀՀ սահմանադրական դատարանի ստեղծման համար:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեցին պետական իշխանության ամբողջ համակարգի, իշխանության դատական թևի կազմակերպման, կազմավորման և գործունեության հիմնական նորմ-սկզբունքները, ինչպես նաև կոնկրետ նորմեր, որոնք կարգավորվում են Սահմանադրական դատա-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ**

րանի կազմակերպման, կազմավորման և գործունեության ոլորտում ձևավորվող ամենակարևոր և էական հասարակական հարաբերությունները: Մասնավորապես, Սահմանադրությամբ ամրագրվեց Սահմանադրական դատարանի հիմնական առաքելությունը՝ սահմանադրական արդարադատության իրականացումը /հոդ. 93/, Սահմանադրական դատարանի անդամների քանակը /հոդ. 99/, նրանց նշանակման կարգը /հոդ. 55, կետ 10, հոդ. 83, կետ 1/, Սահմանադրական դատարանի նախագահի նշանակման գործընթացում Ազգային ժողովի լիազորությունը /հոդ. 83, կետ 2/, Սահմանադրական դատարանի նախագահի նշանակման գործընթացում Հանրապետության Նախագահի լիազորությունը /հոդ. 55, կետ 10/, Սահմանադրական դատարանի լիազորությունները /հոդ. 100/, Սահմանադրական դատարանին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը /հոդ. 101/, Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող իրավական ակտերի տեսակները /հոդ. 102/ և այլն:

Այդ նորմերը իրենց համակցության մեջ կազմում են Սահմանադրական դատարանի կարգավիճակի սահմանադրական հիմունքները, իսկ դրանցով սահմանված սկզբունքների, իրավունքների և պարտականությունների /լիազորությունների/ համակարգը՝ Սահմանադրական դատարանի սահմանադրական կարգավիճակը:

Սակայն ակնհայտ է, որ հասարակական հարաբերությունների որևէ ոլորտ չի կարող կարգավորվել միայն սահմանադրական մակարդակով: Ավելին, Սահմանադրական դատարանի կարգավիճակի նորմատիվ հիմքն են կազմում ոչ միայն Սահմանադրությունը և սահմանադրական իրավունքի ճյուղի այլ նորմատիվ իրավական ակտերը, այլև իրավունքի այլ ճյուղերին պատասխանող որոշ նորմատիվ-իրավական ակտերը: Հետևաբար, կարելի է ա-

ռանձնացնել երեք տարբեր հասկացություններ՝ Սահմանադրական դատարանի «սահմանադրական կարգավիճակ», «սահմանադրաիրավական կարգավիճակ» և «իրավական կարգավիճակ»: Այս հասկացությունները միմյանցից տարբերվում են իրենց նորմատիվ-իրավական հիմքերով և ծավալով: Սահմանադրական դատարանի սահմանադրական կարգավիճակը սահմանվում է Սահմանադրությամբ, սահմանադրաիրավական կարգավիճակը՝ Սահմանադրությամբ և սահմանադրաիրավական այլ ակտերով, իրավական կարգավիճակը՝ Սահմանադրությամբ և իրավունքի մի շարք ճյուղերի /քրեական, վարչական և այլն/ նորմատիվ-իրավական ակտերով:

ՀՀ-ում Սահմանադրական դատարանի գործունեության հիմունքները կազմող հասարակական հարաբերությունների համալիրները կարգավորվում են Սահմանադրությամբ: Դրա նպատակն է ապահովել դատական իշխանության համակարգի բաղադրատարր հանդիսացող սահմանադրական վերահսկողության մարմնի անկախությունը օրենսդիր իշխանության հակաիրավական միջամտությունից: Այդպիսի մոտեցման դեպքում Ազգային ժողովը չի ունենում հնարավորություն սահմանափակել Սահմանադրական դատարանի լիազորությունները, սովորական օրենսդրական գործընթացի միջոցով փոխել նրա կողմից ընդունվող իրավական ակտերի իրավական բնույթն ու ուժը և այլն: Համապատասխան փոփոխություններ կարող են կատարվել միայն հանրաքվեի միջոցով՝ սահմանադրական փոփոխությունների արդյունքում:

ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասում փորձ է կատարվել հստակ տարանջատել Սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության սահմանադրական կարգավորման և ընթացիկ օրենսդրական կարգավորման ոլորտները: Համաձայն նշված հոդվածի՝ «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահման-



վում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով»: Այս ձևակերպումից հետևում է՝ Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության հետ կապված առաջնային՝ նյութական, նորմերը պետք է ամրագրվեն միայն Սահմանադրությամբ, իսկ այդ նորմերի իրականացման կարգն ու ընթացակարգերը /պրոցեսուալ նորմերը/՝ Սահմանադրությամբ և հատուկ օրենքով՝ Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության մի քանի այլ հոդվածներում պարունակվում են հողող /բլանկետային/ նորմեր, որոնք Սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության ոլորտի մի շարք հարաբերությունների կարգավորումը նախատեսում է այլ օրենքներով: Մասնավորապես՝

– Սահմանադրության 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատությունը իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան,

– Սահմանադրության 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով,

– Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ դատավորի և Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով,

– Սահմանադրության 97-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորների և Սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

Եթե հետևենք Սահմանադրության՝ փարկված հոդվածների բառացի իմաստին, պետք է արձանագրենք, որ Սահմա-

նադրական դատարանի մասին օրենքը, ըստ էության, պետք է լինի օրենք սահմանադրական դատավարության մասին: Միևնույն ժամանակ, մի շարք այլ օրենքներով պետք է կոնկրետացվեն դատարանների անկախության՝ սահմանադրորեն ամրագրված երաշխիքները, Սահմանադրական դատարանի անդամների լիազորությունների դադարեցման դեպքերն ու կարգը, Սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարանի մասին սահմանադրորեն ամրագրված սկզբունքներն ու դրույթները երկրների մեծամասնությունում կոնկրետացվում են Սահմանադրական դատարանի մասին մեկ միասնական օրենքով: Սակայն որոշ դեպքերում նշված հարաբերությունները կարգավորվում են մի քանի օրենքներով: Այսպես, Մոլդովայի Հանրապետությունում գործում են երկու օրենքներ՝ «Սահմանադրական դատարանի մասին» և «Սահմանադրական յուրիսդիկցիայի մասին»: Նույնը՝ Ղրղզստանում, Լատվիայում և Էստոնիայում: Իսկ, օրինակ, Վրաստանում, բացի վերը նշված օրենքներից, գործում է նաև օրենք՝ «Վրաստանի սահմանադրական դատարանի անդամների սոցիալական պաշտպանության մասին»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը կրում է, կարելի է ասել, էկլեկտիկ բնույթ: Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում, սկսած 6-րդ գլխից, զետեղված են դատավարական բնույթի նորմեր: Սակայն օրենքը պարունակում է նաև մի շարք նյութական նորմեր: Դրանց մի մասի օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է Սահմանադրության որոշ հոդվածներում տեղ գտած բլանկետային նորմերի պահանջներով՝

-օրենքի 6-րդ հոդվածի /«Սահմանադր-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ**

րական դատարանի գործունեության երախիքները»/ նորմատիվ բովանդակությունը համապատասխանում է Սահմանադրության 94-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին, որի համաձայն՝ դատարանների /բնականաբար և Սահմանադրական դատարանի/ անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով,

-12-րդ հոդվածի /«Սահմանադրական դատարանի նախագահի և անդամի նյութական ապահովությունը»/ նորմատիվ բովանդակությունը՝ Սահմանադրության 97-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, որի համաձայն՝ դատավորի և Սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով,

-14-րդ հոդվածի /Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների դադարման, դադարեցման և կասեցման հիմքերը/ նորմատիվ բովանդակությունը՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի պահանջին, որի համաձայն՝ դատավորի և Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

Սակայն, ինչպես արդեն նշել էինք, Սահմանադրության համապատասխան դրույթների բառացի իմաստից բխում է, որ այդ հարաբերությունները պետք է կարգավորվեն ոչ թե Սահմանադրական դատարանի մասին օրենքով /որը պետք է պարունակեր միայն դատավարական նորմեր/, այլ մեկ ուրիշ օրենքով /կամ օրենքներով/:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ կարելի է անել նաև տեխնիկական բնույթի դիտարկում: Բանն այն է, որ օրենքի մի շարք հոդվածներում պարզապես կրկնվում են, իսկ առանձին դեպքերում բառացի վերաշարադրված են Սահմանադրության համապատասխան դրույթները: Մասնավորա-

պես, օրենքի՝ «Սահմանադրական դատարանի լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը» վերտառությամբ 2-րդ հոդվածում բառացիորեն վերաշարադրված է Սահմանադրության 94-րդ հոդվածի տեքստը, «Սահմանադրական դատարանի անդամի անկախությունը» վերտառությամբ 9-րդ հոդվածի 1-ին մասում չնչին խմբագրական փոփոխություններով զետեղված է Սահմանադրության 97-րդ հոդվածի 1-ին մասի տեքստը, «Սահմանադրական դատարանի անդամի անձեռնմխելիությունը» վերտառությամբ 11-րդ հոդվածի նորմատիվ բովանդակությունը լիովին համընկնում է Սահմանադրության 97-րդ հոդվածի նորմատիվ բովանդակությանը և այլն:

Նկատենք, որ Սահմանադրության դրույթների բովանդակության կրկնությունը համապատասխան օրենքներում կամ օրենքից օրենք միևնույն դրույթների կրկնությունը մեզանում ստացել է «օրենսդրական ավանդույթի» կարգավիճակ, չնայած այդպիսի մոտեցումը ուղղակիորեն հակասում է ոչ միայն օրենսդրական տեխնիկայի կանոններին<sup>6</sup>, այլև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածին<sup>7</sup>:

Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի քննարկման տեսանկյունից պետք է անել ևս մեկ դիտարկում, որը նույնպես վերաբերում է օրենսդրական տեխնիկայի հարցերին: Սահմանադրական դատարանը պետական իշխանության դատական թևի բաղադրատարրն է: Սակայն ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրքը»<sup>8</sup>, որի անվանումը շատ ավելի լայն է, քան դրա կարգավորման առարկան, քանի որ այն չի արձարծուն սահմանադրական արդարադատության հարցերը: Այդպիսի իրավիճակը կարող է դառնալ նոր տեսական վեճերի և գործնական խառնաշփոթի պատճառ: Ուստի, նպատակահարմար է մտածել «ՀՀ Դատական օրենսգրքի» ավելի ճիշտ վերանվանման մասին:

Սահմանադրական դատարանի կարգավիճակի սահմանադրաիրավական հիմքն են կազմում ոչ միայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, այլ նաև սահմանադրաիրավական այլ ակտեր: Մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ոչ միայն սահմանված են իրավական ակտերի ընդունման, հրապարակման, մեկնաբանման, ստորադասության վերաբերյալ ընդհանուր կանոններ, օրենսդրական տեխնիկայի կանոններ, որոնք վերաբերում են նաև Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող իրավական ակտերին, այլ նաև՝ հենց կոնկրետ Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող իրավական ակտերի նկատմամբ պահանջներ: Այդ կոնկրետ դրույթների մի մասը «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի նորմատիվ բովանդակության կրկնությունն է: Սակայն օրենքում տեղ են գտել նաև մի շարք դրույթներ, որոնք լրացուցիչ կարգավորում են տալիս այս ոլորտում ձևավորվող հարաբերությունների առանձին տեսակներին: Այդպիսի դրույթներ են պարունակում, մասնավորապես, օրենքի՝

- 11-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ընդունում է միայն նորմատիվ, անհատական կամ աշխատակարգային որոշումներ»,

- նույն հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահն ընդունում է միայն անհատական որոշումներ կամ կարգադրություններ»,

- 50-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի որոշումները, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներն անվավեր ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության

սահմանադրական դատարանի որոշումները պետք է հրապարակվեն այն կարգով, որով հրապարակվել են անվավեր ճանաչված ակտերը»,

- նույն հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները հրապարակման է ուղարկում Սահմանադրական դատարանի նախագահը՝ դրանց ընդունմանը հաջորդող երեք օրվա ընթացքում»:

Ակնհայտ է, որ թվարկված բոլոր դրույթները ուղղակիորեն առնչվում են Սահմանադրական դատարանի կարգավիճակի հետ: Մինչև նույն ժամանակ դրանք լրացուցիչ նորմատիվ բովանդակություն են տալիս այդ կարգավիճակին, քանի որ համապատասխան դրույթներ չկան «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ՝ «Սահմանադրական դատարանի ակտերը, դրանց ընդունման կարգը և այդ ակտերին ներկայացվող պահանջները» վերտառությամբ գլխում:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը պարունակում է մի շարք բլանկետային նորմեր, որոնց համաձայն՝ Սահմանադրական դատարանի գործունեության հետ առնչվող հասարակական հարաբերությունների որոշակի տեսակներ իրավական կարգավորում են ստանում այլ նորմատիվ-իրավական ակտերի միջոցով: Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Սահմանադրական դատարանում թարգմանիչների վարձատրության կարգը սահմանվում է օրենքով /հոդ 24, 3-րդ մաս/, դիմողի միջնորդության հիման վրա պետական տուրքի վճարումից ազատելու հարցը Սահմանադրական դատարանը լուծում է անհատական դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով /հոդ 27, 3-րդ մաս/, Սահմանադրական դատարանին ներկայացվող դիմումին կցվում են օտար լեզուներով շարադր-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՔՈՆ**

ված բոլոր փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությունները /հոդ 28, 1-ին մաս, կետ 2/, կողմի պաշտոնական ներկայացուցիչ կարող է հանդես գալ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը ներկայացնող որևէ պատգամավոր՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով /հոդ 46, 2-րդ մաս /, և այլն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի որոշ հոդվածներով սահմանվում է նաև, որ Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունը խաթարող մի շարք արարքների համար կարող են նշանակվել օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ: Մասնավորապես, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Սահմանադրական դատարանի պահանջները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու, դրանց կատարումից խուսափելու կամ կատարման ժամկետները խախտելու դեպքում Սահմանադրական դատարանը այդ մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ կարող է նշանակել օրենքով սահմանված պատասխանատվության միջոց /հոդ 41, 3-րդ մաս/, պատասխանատվության միջոց նշանակվելուց հետո Սահմանադրական դատարանի պահանջները վերստին չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ դրանց կատարումից խուսափելը կամ կատար-

ման ժամկետները խախտելն առաջացնում են քրեական պատասխանատվություն /հոդ 41, 4-րդ մաս/, դատական նիստում կարգը խախտելու դեպքում Սահմանադրական դատարանը իրավունք ունի նշանակելու տուգանք՝ օրենքով սահմանված կարգով և չափով /հոդ 50, 1-ին մաս/, և այլն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենքով նախատեսված դեպքերում Սահմանադրական դատարանի որոշմամբ նշանակվել է տուգանք, և այդ որոշումը կամովին չի կատարվել, ապա այն ենթակա է կատարման՝ դատական ակտերի հարկադիր ծառայության կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

Ինչպես նկատեցինք, քննարկվող նորմերով հղում է կատարվում նաև որոշ վարչաիրավական, ֆինանսաիրավական, քաղաքացիաիրավական ակտերի վրա: Համապատասխան ակտերով կոնկրետացվում են սահմանադրական արդարադատության իրականացման ընթացակարգերը, սահմանվում են Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունը ապահովող իրավական երաշխիքներ և պատասխանատվության միջոցներ Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունը խաթարող արարքների համար: Ուստի, կարելի է եզրահանգել, որ իրավունքի այլ ճյուղերի ակտերի նորմերով լրացուցիչ կարգավորում է տրվում Սահմանադրական դատարանի կարգավիճակի հետ կապված հասարակական հարաբերությունների որոշակի տեսակների:

<sup>1</sup> Տե՛ս Арутюнян Г.Г. Конституционный контроль: характер функционирования и развития системы. М., 1997, էջ 13:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀԳԽՏ, 1990/16:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2008, էջ 32:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀԳԽՏ 1990/ 23:

<sup>5</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Ստեփանյան Վ. Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում// Օրենք և իրականություն, 2003, թիվ 19-20, էջ 2:

<sup>6</sup> Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն. Երևան, 2001, էջ 190:

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ 2002/15- 21.05.02:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ 2007, 20- 18.04.2007:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

### Գոռ ԵՆԳԻՔԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փոխտնօրինի, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման կարևորագույն հիմնախնդիրը ներառում է փոխկապակցված հարցերի մի ամբողջ համալիր: Դրա մեջ տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի այնպիսի տեղեկությունների պահպանությունը, որոնց տարածումն այս կամ այն չափով կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը: Խոսքը պետական և ծառայողական գաղտնիք կազմող և պետության սեփականությունը հանդիսացող գաղտնի տեղեկությունների մասին է:

Դրանց լիարժեք պահպանության կազմակերպումն ու իրականացումը պայմանավորված է տարբեր հանգամանքներով և, առաջին հերթին, հստակ ու ամբողջական իրավական կարգավորմամբ, որն օրենքի արդյունավետ գործողության կարևորագույն երաշխիքներից է: Այս հանգամանքը, ցավոք, երբեմն անհրաժեշտ ուշադրության չի արժանանում, եթե չասենք՝ անտեսվում է: Որպես հետևանք՝ ականա ծնվում են օրենքի այս կամ այն դրույթի իրարամերձ մեկնաբանություններ, որոնք անհարկի դժվարություններ են ստեղծում դրա կիրառման ընթացքում: Օրենքի անկատարությունը դառնում է դրա թերի կատարման նախապայման, ինչը չի կարող ծառայողական գաղտնիքի մասով ևս բացասաբար չանդրադառնալ պետության շահերին:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ծառայողական գաղտնիքի իրավական ինստիտուտի ար-

դի վիճակի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար և մինչ դրա զարգացման հեռանկարների վերաբերյալ մեր նկատառումները ներկայացնելը փորձենք հիմնավորել այդ իրավական ինստիտուտի գոյության իրավաչափությունը և անհրաժեշտությունը՝ համառոտ անդրադառնալով նաև հարցի պատմությանը:

Պետության և իրավունքի տեսությունում իրավական ինստիտուտը բնորոշվում է որպես իրավական նորմերի համակարգված ամբողջություն, որը կարգավորում է հասարակական հարաբերությունների որոշակի տեսակ (խումբ)<sup>1</sup>:

Ծառայողական գաղտնիքի իրավական ինստիտուտը որպես այդպիսին կայացել է դեռևս խորհրդային տարիներին: Այսպես, օրինակ՝ Ա. Ա. Ֆատյանովը, անդրադառնալով խորհրդային շրջանում տեղեկությունների շրջանառությունը սահմանափակող ինստիտուտներին, նշում է, որ «երկրում ձևավորվել էր տեղեկություններ ստացումը սահմանափակող ինստիտուտների՝ պետական գաղտնիքի, ծառայողական գաղտնիքի, սահմանափակ տարածման տեղեկությունների բավականաչափ կուռ և պետական ապարատի պահանջումները լիովին բավարարող համակարգ»<sup>2</sup>: Հիշյալ տեսակետը պաշտպանում են նաև այլ գիտնականներ, և այն կրում է ընդհանրական բնույթ<sup>3</sup>:

Նախարարություններում և զերատեսչություններում գաղտնիության ռեժիմի ապահովման մասին 1987 թվականին լույս տեսած ուղեցույցում ծառայողական գաղտնիքը սահմանվել է որպես գիտության, տեխնիկայի, արտադրության և կառավարման բնագավառների ցանկացած տեղեկություն, որի տարածումը կարող էր վնաս հասցնել պետության շահերին: Այդպիսի տեղեկությունները կրել են «գաղտ-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐԻՈՆ**

նի» դրոշմագիրը և պահպանվել պետության կողմից պետական գաղտնիքի հետ գրեթե միևնույն շեղմով:

Այս հանգամանքն արդեն իսկ խոսում է ծառայողական գաղտնիքին նախկինում ևս տրված կարևոր նշանակության մասին: Ելակետը եղել է այն, որ ծառայողական գաղտնիքի պահպանությունը մեծապես նպաստել է հենց պետական գաղտնիքի պահպանությանը: Որպես կանոն՝ պետական գաղտնիքի մեջ մտնում էին նաև այնպիսի առավել փոքր ծավալի և նշանակության տեղեկություններ, որոնք առանձին-առանձին ոչ թե պետական գաղտնիք էին, այլ ծառայողական, բայց և որոշակի համադրությամբ կարող էին դառնալ այդպիսին:

Ա. Ա. Ֆատյանովի բնորոշմամբ՝ «ծառայողական գաղտնիքի ինստիտուտը առավելապես «սպասարկել է» պետական գաղտնիքի ինստիտուտը»<sup>4</sup>: Այստեղից պարզ է դառնում այդ կարգի տեղեկությունների պահպանման անհրաժեշտությունն ու ծառայողական գաղտնիքի ու այն կարգավորող իրավական նորմերի դերն ազգային անվտանգության (նախկինում ընդունված ձևակերպմամբ՝ պետական անվտանգության) ապահովման ոլորտում:

Մյուս կողմից՝ կային նախարարությունների և գերատեսչությունների գործունեությանը վերաբերող բազմաթիվ ծառայողական բնույթի տեղեկություններ, որոնց տարածումը կարող էր վնաս պատճառել հենց նշված մարմինների օրինական շահերին, հետևաբար՝ միջնորդավորված ձևով նաև պետությանը: Այս մոտեցումներն ըստ էության պահպանվել են նաև մեր օրերում:

Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ «ռազմական գաղտնիք» հասկացությունը խորհրդային տարիներին ներառում էր նաև ծառայողական բնույթի գաղտնի տեղեկություններ (ռազմական բնագավառի գաղտնի տեղեկություններ, ո-

րոնք պետական գաղտնիք չէին հանդիսանում), ապա առավել հասկանալի կդառնան ծառայողական գաղտնիքին տրված կարևոր նշանակությունը և պետական գաղտնիքի շեղմով դրա պահպանության անհրաժեշտությունը:

Սահմանելով «ծառայողական գաղտնիք» հասկացությունը և ծառայողական գաղտնիքի պահպանության կարգը՝ խորհրդային օրենսդրությունը նաև պատասխանատվություն էր նախատեսում դրա տարածման համար: Մասնավորապես՝ 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 71<sup>1</sup> հոդվածում («Պաշտոնեական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հանձնումը օտարերկրյա կազմակերպություններին») թեև խոսվում էր «պաշտոնեական գաղտնիքի» մասին, սակայն դրա բովանդակության մեջ քիչ թե շատ խորամուխ լինելը կասկած չի թողնում, որ խոսքը հենց ծառայողական բնույթի տեղեկությունների մասին է («Պաշտոնեական գաղտնիք հանդիսացող տնտեսական, գիտատեխնիկական կամ այլ տեղեկություններ օտարերկրյա կազմակերպություններին կամ նրանց ներկայացուցիչներին հանձնելը կամ հանձնելու նպատակով հավաքելը այն անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել ծառայության կամ աշխատանքի բերումով կամ հայտնի են դարձել այլ ճանապարհով...» և այլն):

Նույն օրենսգրքի մեկ այլ հոդված (հոդված 267, մաս «դ») պատասխանատվություն էր նախատեսում «իրապարակման ոչ ենթակա, բայց պետական գաղտնիք չհանդիսացող ռազմական տեղեկություններ» իրապարակելու համար:

Մենք հեռու ենք ծառայողական գաղտնիքի՝ խորհրդային տարիների իրավական կարգավորումը կատարյալ համարելու մտքից: Ընդհակառակը, հակված ենք կարծելու, որ այն ավելի շատ կրում էր ոչ թե իրավական, այլ վարչահրամայական բնույթ: Բավական է որպես խոշոր թերություն մատնանշել ընդհանրապես գաղտ-

նիքների մասին օրենքների բացակայության և ոլորտի ենթաօրենսդրական կարգավորման հանգամանքը: Եվ, այնուամենայնիվ, ծառայողական գաղտնիքի խորհրդային տարիների իրավական ինստիտուտը ներառել է նորմեր, որոնք մի կողմից սահմանել են ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակը (այլ խոսքերով՝ սահմանվել է «ծառայողական գաղտնիք» հասկացությունը), մյուս կողմից՝ կարգավորել են դրանց պահպանության կարգը և պատասխանատվություն նախատեսել այդ տեղեկությունների անօրինական տարածման համար: Այսինքն՝ այն ներառել է ծառայողական գաղտնիքի հետ կապված գրեթե բոլոր հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմեր:

Դրանց մեջ առաջնային դեր է հատկացվել «ծառայողական գաղտնիք» հասկացությունը սահմանող իրավական նորմին: Դեռևս 18-րդ դարում գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչ Յեզեղը հասկացությունն անվանել է «մտածողության գազաթնակետ»<sup>8</sup>: Հանրահայտ է, որ գիտության մեջ հասկացությունները փոխկապակցված են, և սահմանումներում է բացահայտվում դրանց միջև եղած կապը: Ահա թե ինչու «ծառայողական գաղտնիք» հասկացության հստակ սահմանման դեպքում էր միայն հնարավոր ճիշտ որոշել պահպանվող տեղեկությունների շրջանակը, տարանջատել դրանք նմանատիպ այլ տեղեկություններից և պահպանության արդյունավետ միջոցներ իրականացնել: Ակնհայտ է, որ ծառայողական գաղտնիքի (նաև այլ գաղտնիքների) հստակ սահմանումը կարող է թույլ տալ խուսափել այնպիսի տեղեկությունների պահպանումից, որոնք ընդհանրապես գաղտնիք չեն կազմում կամ դադարել են այդպիսին լինելուց (դրանով իսկ ավելորդ անգամ չսահմանափակելով տեղեկատվության ազատության իրավունքը, ինչպես նաև խնայելով ֆինանսական միջոցները), ճիշտ սահմանել գաղտնի տեղեկությունների անօրինական

տարածման համար պատասխանատվությունը:

Ասվածի համատեքստում փորձենք վերլուծել Հայաստանի Հանրապետությունում ծառայողական գաղտնիքի հետ կապված հասարակական հարաբերությունների կարգավորման առանձին կողմերը, պարզել մեզանում դրա կարևորության ըմբռնման աստիճանը:

Այսպես, «ծառայողական գաղտնիք» հասկացությունն առաջին անգամ օրենսդրորեն սահմանվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ին ընդունված «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, ըստ որի՝ «Ծառայողական գաղտնիքը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը»:

Նշենք այդ բնագավառները՝ ռազմական, արտաքին հարաբերություններ, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական, և նկատենք, որ օրենքում բովանդակային առումով պետական և ծառայողական գաղտնիքներն ըստ էության դիտարկվում են նույն հարթության վրա, այլ կերպ ասած՝ բխում են նույն տրամաբանությունից:

Բայց կա նաև ծառայողական գաղտնիքի մեկ այլ սահմանում, որը տեղ է գտել 1998 թ. մայիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում. «Տեղեկությունը ծառայողական գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքով այն ազատորեն ստանալու հնարավորություն, և տեղեկությունն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար»:

Այսպիսով՝ խոսքը նույն հասկացության

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ**

(ծառայողական գաղտնիքի) սահմանումների ձևակերպումների (տեքստային) տարբերությունների մասին չէ: Ի վերջո՝ ամեն օրենք ունի իր գերակա ուղղվածությունը, լեզուն, տերմինաբանությունը, և այդպիսի տարբերություններ կարող են լինել: Բայց դրանք չպետք է լինեն այնպիսին, որ առաջացնեն նույն հասկացության սահմանումների իմաստային անհամաձայնություն, անհամապատասխանություն, նույնիսկ՝ իրարամերժություն, որն անընդունելի է, քանի որ հիշյալ երկու օրենքներն էլ գործում են նույն օրենսդրական դաշտում և, մեղմ ասած, առնվազն չպետք է հակասեն միմյանց: Մինչդեռ այստեղ հակասություններն առավել քան ակնհայտ են:

Դիտարկենք դրանցից առավել կարևորները:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն՝ ծառայողական գաղտնիք է այն տեղեկությունը, որի տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը:

Քաղաքացիական օրենսգրքում այս դրույթը շրջանցված է, բայց այնպես, կարծես ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունը նախ և առաջ կապ ունի ոչ թե հանրապետության անվտանգության, այլ միանշանակորեն այդ տեղեկության սեփականատիրոջ նյութական շահերի հետ: Քաղաքացիական օրենսգրքի սահմանումն այլ կերպ դժվար է մեկնաբանել, քանի որ, ըստ դրա, ծառայողական գաղտնիքն այն տեղեկությունն է, որը «երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք»: Հարց է առաջանում. ինչու՞ միայն առևտրային:

Ըստ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի սահմանման՝ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները պաշտպանվում են պետու-

յան կողմից:

Քաղաքացիական օրենսգրքում ծառայողական գաղտնիք կազմող տեղեկության պետական պաշտպանության մասին դրույթը փոխարինված է այդպիսի տեղեկություն ունեցողի կողմից դրա գաղտնիության պահպանման համար միջոցներ ձեռնարկելու մասին դրույթով:

Կարծում ենք՝ այստեղ առարկելու մի քանի հիմքեր կան:

Նախ՝ իրավագիտության լեզվով (ինչպես մենք բազմիցս հանդիպում ենք օրենսդրական ակտերում) «պաշտպանելն» ու «պահպանելը» նույնիմաստ բառեր կամ հասկացություններ չեն: Որքանո՞վ է ճիշտ մեկ օրենքում խոսել ծառայողական գաղտնիքի պաշտպանության և պահպանության, մեկ այլ օրենքում՝ միայն պահպանության մասին:

Երկրորդ՝ որքանո՞վ է ճիշտ, որ մեկ օրենքի սահմանման համաձայն՝ ծառայողական գաղտնիք է այն տեղեկությունը, որը պաշտպանվում է պետության կողմից, իսկ մեկ այլ օրենքի նույն հասկացության սահմանման համաձայն՝ այն տեղեկությունը, որի գաղտնիության պահպանման համար «տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում»: Անշուշտ, «տեղեկատվություն ունեցողը» կարող է լինել նաև պետությունը, բայց ինչու՞ միայն նա: Անբացատրելիորեն հաշվի չի առնվում այն, որ տվյալ պարագայում (և ընդհանրապես) «տեղեկատվություն ունեցողը» կարող է լինել ոչ միայն պետությունը, այլև քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ:

Երկու տարբեր օրենքներում նույն հասկացության սահմանումների հակասությունն այստեղ ևս ակնհայտ է. ըստ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի՝ ինչպես պետական, այնպես էլ ծառայողական գաղտնիքի սեփականատերը պետությունն է, ըստ քաղաքացիական օրենսգրքի՝ «տեղեկատվություն ունեցողը», որը, սակայն, ինչպես մշտեցինք, կարող է լինել նաև քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտ:



Անշուշտ, ամեն օրենք ունի իրեն հատուկ գործառույթներ, կարգավորման օբյեկտներ, կիրառության ոլորտներ, բովանդակություն, որոնք չի կարելի մեխանիկորեն տարածել մեկ այլ օրենքի վրա և դատողություններ անել այդ հիմքով: Այնուամենայնիվ, չի կարելի անտեսել այն իրողությունը, որ տվյալ երկրի օրենքներն ի վերջո գործում են մեկ իրավական դաշտում և իրենց տրամաբանությամբ, փոխլրացնելով միմյանց, պետք է կազմեն մեկ միասնական, կուռ համակարգ՝ տեղիք չտալով հակասությունների և տարրնթերցումների:

Այս տեսանկյունից դիտարկելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում և քաղաքացիական օրենսգրքում ծառայողական գաղտնիքի սահմանումները՝ չի կարելի չնկատել, որ առանձին կողմերով դրանք այնքան են հեռանում իրարից, որ թվում է՝ խոսքը ոչ թե մեկ, այլ երկու առանձին հասկացությունների մասին է: Իրավական բնույթի նման անհամաձայնությունները գործնական կյանքում, մասնավորապես դատաիրավական գործընթացներում, կարող են հանգեցնել խրթին, ուղղակի փակուղային իրավիճակների առաջացման:

Նշենք «ծառայողական գաղտնիք» հասկացության երկու սահմանումների մեկ էական անհամապատասխանություն ևս: Քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում ոչ մի կերպ չի տեղավորվում «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի այն դրույթը, որ ծառայողական գաղտնիքը պարունակում է պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ և ունի իր տարածման որոշակի ոլորտները: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի շրջանակներում էլ չի տեղավորվում քաղաքացիական օրենսգրքի այն դրույթը, ըստ որի ծառայողական գաղտնիք է այն տեղեկատվությունը, որն ունի «իրական կամ հնարավոր առևտրային արժեք»:

Մեզ տրամաբանական չի թվում այն, որ

մեկ օրենքում օրենսդիրը պետական և ծառայողական գաղտնիքները դիտարկում է մեկ հարթության մեջ (դա երևում է հենց օրենքի անվանումից՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին»)՝ սահմանելով պետական և ծառայողական գաղտնիքների պահպանության և պաշտպանության զրեթե նույն վարչաիրավական ռեժիմը, իսկ մեկ այլ օրենքում (քաղաքացիական օրենսգրքում) ծառայողական գաղտնիքը «միացնում է» առևտրային ու բանկային գաղտնիքներին և դրանք դիտարկում նույն հարթության մեջ՝ երեքին էլ տալով նույն՝ «առևտրային արժեք», բնութագրումը: Չէ՞ որ խոսքն այստեղ մեկ՝ «ծառայողական գաղտնիք», հասկացության մասին է:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը, ըստ էության, ծառայողական գաղտնիքը դիտարկում է առավելապես վարչական իրավահարաբերությունների շրջանակներում, որտեղ սուբյեկտի դերում մի կողմից հանդես է գալիս պետական կառավարման մարմինը՝ որպես ծառայողական գաղտնիք սահմանող, դրա պահպանությունն ու պաշտպանությունն իրականացնող, ծառայողական գաղտնիքների առնչությամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանող մարմին:

Քաղաքացիական օրենսդրությունը ծառայողական գաղտնիքը դիտում է որպես քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ: Այս կապակցությամբ պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյանը նշում է. «Տեղեկատվությունը վաղուց վեր է ածվել ապրանքի և հանդիսանում է պայմանագրային հարաբերությունների հատուկ օբյեկտ: ... Սակայն օրենսդրությամբ կարգավորվում են ոչ թե տեղեկատվության, որպես օբյեկտի, իրավահարաբերություններին մասնակցելու կարգավիճակը, այլ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության գաղտնիության պահպանման հիմնահար-

### **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**

ցերը»<sup>6</sup>:

Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ այսօր մենք, ըստ էության, ունենք երկու «տեսակի» ծառայողական գաղտնիք. մեկը, որը պարունակում է պետական գաղտնիքի մաս կազմող տեղեկություններ և կարգավորվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով, մյուսը, որը չի պարունակում և կարգավորվում է քաղաքացիական օրենսդրությամբ:

Ինչ խոսք, նշված երկու «տեսակի» ծառայողական գաղտնիքներն էլ կարող են հանդիպել հասարակական կյանքում: Յետևաբար՝ ծառայողական բնույթի գաղտնի տեղեկությունների նման տարանջատումն իրականում հնարավոր ենք համարում: Խառնաշփոթը, մեր կարծիքով, առաջանում է դրանց ոչ ճիշտ անվանման և կարգավորման հետևանքով, երբ, օրենսդրորեն հստակ չսահմանազատելով ծառայողական գաղտնիքների «տեսակները», փորձ է կատարվել դրանք կարգավորել տարբեր օրենսդրական ակտերով: Արդյունքում մեկ «ծառայողական գաղտնիք» հասկացությանը տրվել են երկու հակասական սահմանումներ:

Մեր համոզմամբ՝ նման հակասությունները հարթելու համար նախ և առաջ պետք է մտածել «Ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության առանձին օրենք ընդունելու մասին: Այս դեպքում հնարավոր կդառնա նորովի և ամբողջականորեն սահմանել «ծառայողական գաղտնիք» հասկացությունը, որը կընդգրկի ինչպես պետական գաղտնիքի մաս կազմող տեղեկություններ պարունակող, այնպես էլ մյուս՝ առևտրային բնույթի ծառայողական գաղտնիքները: Այդ դեպքում օրենքն ամբողջությամբ համապատասխան իրավական ռեժիմներ կսահմանի նաև դրանց պահպանության և պաշտպանության համար: Մյուս կողմից՝ «Ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի ըն-

դունմամբ, մեր կարծիքով, ավելի կհստակեցվեն պետական գաղտնիքի մասին օրենքի գործողության շրջանակները, ինչը կդառնա պետական գաղտնիք կազմող տեղեկությունների ավելի հուսալի պահպանության և պաշտպանության գրավական:

Մեկ դիտարկում ևս. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում «ծառայողական գաղտնիք» հասկացությունը բառացիորեն սահմանված է այնպես, ինչպես Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 139-րդ հոդվածում: Այստեղ ակնհայտորեն հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ մեր օրենսդրական դաշտում կան սկզբունքային տարբերություններ ՌԴ օրենսդրական դաշտի համեմատ: Այսպես՝ ՀՀ-ում պետական և ծառայողական գաղտնիքների մասին գործում է մեկ օրենք, ծառայողական գաղտնիքի «մայր» սահմանումը տրվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում և ոչ թե քաղաքացիական օրենսգրքում, ինչպես ՌԴ-ում: Մեր կարծիքով, օրենսդիրը զանց է առել այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնությունում քննարկվող ոլորտին վերաբերող օրենսդրության փոփոխությամբ նախկինում «գաղտնի» դրոշմագիրը կրող ծառայողական գաղտնիքները դասվել են պետական գաղտնիքների շարքը, իսկ «ծառայողական գաղտնիք» տերմինն օգտագործվում է միայն առևտրային ոլորտին պատկանող գաղտնիքի իմաստով և կարգավորվում է քաղաքացիական օրենսդրությամբ<sup>7</sup>:

Կարծում ենք, Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերի պատրաստման վրա աշխատող իրավասու ատյաններն ու պաշտոնատար անձինք պետք է հաշվի առնեն այս և նման հանգամանքներն ու խուսափեն իրավական դաշտում արհեստական հակասություններից, հնարավոր իրավական կազուսներից: Ինչպես կարելի է մեկնաբանել, օրինակ, այն հանգամանքը, որ «Պետական և ծա-

ռայոդական գաղտնիքի մասին» օրենքը խոսում է ծառայողական գաղտնիքի պահպանման (դրա տարածման հետևանքով հնարավոր վնասների) մասին, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ու Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքն ընդհանրապես նման հասկացություն չեն «ճանաչում», այնտեղ դրա հիշատակումն անգամ չկա: Դրա հետ մեկտեղ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված առևտրային և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ապօրինի հավաքման և հրապարակման համար: Այդպիսով, ծառայողական գաղտնիքի պահպանման կարգի խախտումները դրանց համեմատ հանրության համար ավելի նվազ վտանգավորություն են ներկայացնում: Սակայն, մեր կարծիքով, անբացատրելի է, թե ինչու չի նախատեսվում ծառայողական գաղտնիքի պահպանման կարգի խախտումների համար պատասխանատվություն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:

Գտնում ենք, որ հետևողականություն պետք է ցուցաբերել նաև օրենքների լեզվի հարցում: Դիցուք, որքանով է ճիշտ նույն օրենքում կամ այլ օրենքներում նույն իմաստով օգտագործել և՛ «տեղեկություն», և՛ «տեղեկատվություն» բառերը: Նման զուգահեռականություններն անհարկի են, ինչը, ի դեպ, ինչպես նշեցինք վերևում, ակնհայտ է նաև «պահպանություն» և «պաշտպանություն» տերմիններն օգտագործելիս: Ավելին, դա կարելի որակել նաև որպես օրենքի պահանջի ուղղակի խախտում: «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված է. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը ...»:

Վերոգրյալն ավելորդ անգամ ապացուցում է հանրահայտ ճշմարտությունը՝ օրենքները պետք է ներդաշնակ լինեն հասարակական հարաբերությունների ու զարգացումների հետ, սակայն դրանք պետք է ներդաշնակ լինեն նաև միմյանց հետ:

<sup>1</sup> Տե՛ս С. А. Комаров, А. В. Малько. Теория государства и права. М., 2000, էջ 328:

<sup>2</sup> Տե՛ս А. А. Фатьянов. Тайна и право. М., 1999, էջ 136-137:

<sup>3</sup> Տե՛ս Государственная тайна и ее защита в Российской Федерации, под общей редакцией М. А. Вуса и А. В. Федорова, Санкт-Петербург, 2007, էջ 28-29:

<sup>4</sup> Տե՛ս А. А. Фатьянов, նշվ. աշխ., էջ 137:

<sup>5</sup> Տե՛ս Гегель. Сочинения. 2. 6, էջ 12:

<sup>6</sup> Բարսեղյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք. առաջին մաս, Եր., 2000, էջ 175-176:

<sup>7</sup> Ի դեպ, ինչպես Ռուսաստանի Դաշնությունում, Վրաստանի Հանրապետությունում և Ադրբեջանական Հանրապետությունում նախկինում ծառայողական գաղտնիք հանդիսացող և «գաղտնի» դրոշմագրով տեղեկությունները դասվել են պետական գաղտնիքի շարքը: Տե՛ս <http://www.medialaw.ru>

**ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲՈՆ****ՖՐԱՆԶԱՅՉԻՆԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԳՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ****Վարդուհի ՍԵՄԵՐՉՅԱՆ**

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
I-ին պարվա մագիստրանսը*

**Յ**Ր Սահմանադրության 8-րդ հոդվածը հռչակում է. «Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»:

Շուկայական հարաբերությունների զարգացման արդի պայմաններում, երբ բուռն զարգացում է ապրում ձեռնարկատիրական գործունեությունը, հրատապ խնդիր է հանդիսանում ձեռնարկատիրական արդյունավետ գործունեություն վարելու եղանակների հայտնաբերումը, մշակումը: Բիզնեսի վարման այդպիսի արդյունավետ մեթոդներից է ֆրանչայզինգը: Ֆրանչայզինգը գործնական հարաբերությունների կազմակերպման և վարման պրոգրեսիվ ու դիմամիկ համակարգ է: Ֆրանչայզինգը թույլ է տալիս «պատճենահանել» ձեռնարկատիրական գործունեության այս կամ այն տեսակը: Այլ խոսքով՝ ֆրանչայզինգի էությունը ձեռնարկատիրոջ համաձայնության գալն է հայտնի և հեղինակություն վայելող ընկերության հետ սեփական բիզնեսը նրա անվան ներքո իրականացնելու շուրջ:

Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագրով մեկ կողմը (իրավատերը) պարտավորվում է վարձատրությամբ, ժամկետի նշումով կամ առանց դրա մյուս կողմին (օգտագործողին) իրավունք տրամադրել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը, ներառ-

յալ՝ իրավատիրոջ ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առևտրային տեղեկատվության, ինչպես նաև պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների այլ օբյեկտների ապրանքային նշանի, սպասարկման նշանի և այլնի նկատմամբ իրավունքները (Քաղ. օր.՝ հոդվ. 969 կետ 1): ՀՀ Քաղ. օր.-ի գլուխ 53-ում սահմանված է վերոնշյալ ձևակերպումը, անկասկած խոսքը ֆրանչայզինգի մասին է՝ մանավանդ որ 53-րդ գլխի վերնագիրը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվություն (ֆրանչայզինգ)»:

Մեր տնտեսության համար ֆրանչայզինգը համեմատաբար նոր երևույթ է, մինչդեռ դրա արմատները հասնում են մոտ 500 տարի ետ՝ մինչև միջնադար: Իհարկե ֆրանչայզինգ բառն այսօրվա իմաստով սկսել է օգտագործվել կարի մեքենաների խոշոր արտադրությամբ զբաղվող «Singer» ընկերությունը 19-րդ դ.-ի կեսերին ԱՄՆ-ում: Այնուհետև ֆրանչայզինգին դիմեցին «General Motors», «Coca-Cola», «Pepsi», «Seven up» ընկերությունները, մի փոքր ուշ՝ «Pizza Hut»-ը և հյուրանոցային բիզնեսի այնպիսի «իմպերիաներ», ինչպիսիք են «Hilton», «Holiday Inns»-ը<sup>2</sup>:

Իր բիզնեսն ընդլայնել ցանկացող ընկերությունը կարող է դա անել կամ հիմնելով առևտրային կետեր, որոնք իր սեփականությունն են և կառավարվում են սեփական անձնակազմի կողմից, կամ դիմելով ֆրանչայզինգի օգնությանը: Եթե ընկերությունը որոշի դիմել առաջին տարբերակին, ապա ստիպված կլինի մեծացնելու իր կապիտալը: Մասնավորապես, դա պայմանավորված է մի շարք ծախսերի կատարման անհրաժեշտությամբ՝ ուղղված ան-

շարժ գույքի ձեռքբերմանը, նոր աշխատողներ վարձելուն և այլնին: Իսկ երկրորդ տարբերակին դիմելու դեպքում ընկերությունը հնարավորություն կունենա նվազ ծախսերով ընդլայնելու իր բիզնեսը, ձեռք բերելու նոր շուկաներ իր ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) համար: Բացի այդ, նա ստիպված չի լինի գումարներ ծախսել նոր աշխատողներ վարձելու նպատակով: Ընկերության լրացուցիչ օգուտն այն է, որ ֆրանչայզինգի դեպքում ֆրանչայզի-ընկերությունն իրավաբանորեն ավտոնոմ է և շահագրգռված իր շահույթի հնարավոր մեծացմամբ՝ ի տարբերություն ֆրանչայզերի սեփականությունը հանդիսացող առևտրային կետերը կառավարող մենեջերների, որոնք սովորական վարձու աշխատողներ են, ստանում են որոշակի վարձատրություն և այնքան էլ շահագրգռված չեն ընկերության շահույթի մեծացմամբ\*:

Ֆրանչայզինգը ֆրանչայզերի համար նաև բիզնեսի ընդլայնման միջոց է: Ֆրանչայզինգի կիրառումն ազատում է ֆրանչայզերին նոր առևտրային հենակետեր (ֆիլիալներ) բացելու և լրացուցիչ աշխատակիցներ վարձելու անհրաժեշտությունից, փոխարենը՝ իր բացառիկ իրավունքների տրամադրման միջոցով ընդլայնում է առևտրային գործակալների ցանցը և վերջիններիս գործունեությունը վերահսկելու միջոցով նպաստում է իր ապրանքների (ծառայությունների) ակտիվ շրջանառությանը: Ֆրանչայզին նույնպես շահագրգռված է այս եղանակի կիրառման մեջ, քանի որ նա դեռևս չունի լուրջ առևտրային փորձ, չունի ճանաչում (հանգամանքներ, որոնք կենսականորեն անհրաժեշտ են հաջող բիզնես վարելու համար), ուստի բիզնես վարելն արդեն հանրահայտ ընկերության ֆիրմային անվան և մյուս բացառիկ իրավունքների, այդ թվում՝ հարուստ առևտրային փորձի ներքո, նրանց համար կարող է նոր հեռանկարներ բացել շուկայում հաստատվելու և ցանկալի շահույթ ապահովելու հարցում\*:

Ֆրանչայզինգն իրենից ներկայացնում է ձեռնարկատիրական գործունեության իրականացման՝ հայաստանյան տնտեսության համար նորույթ հանդիսացող ձև: Այն մեծ ասպարեզներ է բացում սկսնակ ձեռնարկատերերի համար, որոնց մեծամասնությունը չունի համապատասխան գիտելիքներ, փորձ ու ֆինանսական հնարավորություններ հաջող գործունեություն ծավալելու համար:

Ֆրանչայզինգը հեռանկարային է և կիրառելի տնտեսության բազմաթիվ ճյուղերում, այն մեկնարկային կետ է փոքր և միջին ձեռնարկատերերի համար: Ֆրանչայզինգը, բացի բիզնես վարելու արդյունավետ միջոցից, նաև օտարերկրյա ներդրումների ուղիներից մեկն է (ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի): Ֆրանչայզինգի պայմանագրի կնքումն օտարերկրյա ֆրանչայզերի և տեղացի ֆրանչայզի միջև մեծ օգուտ է բերում պետության տնտեսությանը ոչ միայն ներդրումների տեսքով, այլև նոր աշխատատեղերի բացման, նոր տեխնոլոգիաներ զարգացնելու և միջազգային առևտրային կապերն ընդլայնելու առումով: Բացի այդ, ավելանում են նաև հարկման օբյեկտները, և դրա արդյունքում հարստանում է պետական բյուջեն: Ֆրանչայզինգի շնորհիվ նվազում է բիզնեսում անհաջողությունների թիվը, հետևաբար ֆրանչայզինգի օգտավետությունը նաև այն է, որ կրճատվում են ձեռնարկատերերի սնանկության հետ կապված պետական ծախսերը:

Վերոնշյալը հատկապես կարևոր է զարգացող և ներդրումների անհրաժեշտություն ունեցող երկրների համար, ինչպիսին է ՀՀ-ն: Ճիշտ է, ՀՀ-ում առկա է ֆրանչայզինգ, բայց միջազգային ֆրանչայզինգի տեսքով: Վերջին ժամանակներում բացվել և արդյունավետ գործունեություն են ծավալում համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի ընկերությունների ֆրանչայզիներ, ինչպիսիք են՝ «Marriott», «Golden Tulip» հյուրանոցները, «Yves Rocher» կոսմետիկայի մասնագիտացված խանութ-

### **ՈՒՍԱՆՈՂԻ ԱՍԲԻՈՆ**

սրահն ու գեղեցկության սրահը, «Naf-Naf», «Mango», «Mexx», «Morgan», «Benetton» պատրաստի հագուստի սրահները, «Ростик'с» արագ սննդի ռեստորանը, «Gold's Gym» մարզասրահը և նաև այլ առևտրային կետեր:

Ճիշտ է՝ գովելի է ՀՀ-ում միջազգային ֆրանչայզինգի առկայության փաստը, բայց տնտեսության համար նպաստավոր կլինի, եթե հայաստանյան ձեռնարկատերերն իրենց առևտրային ցանցերն ընդլայնելու համար նույնպես դիմեն ֆրանչայզինգի օգնությանը՝ տեղացի ձեռնարկատերերին վաճառելով իրենց ֆրանչիզան, այլ ոչ թե հսկայական ներդրումներ կատարեն՝ սեփական առևտրային կետերը բազմապատկելուն ուղղված: Այս ամենն ունի իր հասկանալի պատճառները: Հայաստանում ֆրանչայզինգային հարաբերությունների կարգավորմանն է նվիրված միայն ՀՀ Քաղ. օր.-ի 53-րդ գլուխը, որը սահմանում է ֆրանչայզինգի պայմանագրի հասկացությունը, նրա տարրերը, իսկ շատ հարցեր մնում են բաց և անհասկանալի: Չկա հատուկ օրենք, որն ամբողջովին նվիրված լինի ֆրանչայզինգի կարգավորմանը: Մինչդեռ մի շարք արտասահմանյան երկրներում (հատկապես՝ Եվրոպայի երկրներում և ԱՄՆ-ում) կան ֆրանչայզինգային հարաբերությունները կարգավորող հատուկ նորմատիվ իրավական ակտեր: Հատուկ օրենսդրական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է ֆրանչայզերի և ֆրանչայզիի միջև փոխհարաբերություններն առավել մանրամասն կարգավորելու անհրաժեշտությունից ոչ միայն պայմանագիրը կնքելուց հետո, այլև մինչպայմանագրային փուլում: Իսկ ՀՀ Քաղ. օր.-ում ընդհանրապես խոսք չկա մինչպայմանագրային հարաբերությունների մասին: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, հենց այս հարաբերությունների փուլում է իրականացվում չարաշահումների առյուծի բաժի-

նը, այն դեպքում, երբ ֆրանչայզերը տրամադրում է ոչ ճշմարտացի տեղեկություններ ընկերության գործունեության, նրա մրցակցային կարողության, նրա հնարավորությունների մասին: Այդ խախտումները կանխելու և ֆրանչայզիի շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ է հատուկ օրենքի առկայություն: Օրինակ՝ արտասահմանյան մի շարք երկրներում, որտեղ զարգացած են ֆրանչայզինգային հարաբերությունները, կան նորմատիվ ակտեր, որոնք կարգավորում են ապագա ֆրանչայզերի և ֆրանչայզիի հարաբերությունների այդ «ճգնաժամային» փուլը: Օրինակ՝ Ֆրանսիայում 1989թ.-ին ընդունվել է օրենք «Առևտրային և արհեստագործական ձեռնարկությունների զարգացման և դրանց տնտեսական, իրավաբանական ու սոցիալական դրության բարելավման մասին», որը հայտնի է Դուբենի օրենք անվանմամբ (օրենքի հեղինակի անունով): Սույն օրենքի համաձայն՝ ֆրանչայզերը պոտենցիալ ֆրանչայզիին պետք է տրամադրի նախնական տեղեկատվության ցուցակ, որը պարունակում է մանրամասն տեղեկություններ ֆրանչայզերի ձեռնարկության և գործունեության մասին: Նախնական տեղեկատվության ցուցակի բովանդակությունը նախատեսված է օրենքին կից կառավարության դեկրետով, մասնավորապես՝ ֆրանչայզերը պետք է տրամադրի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

- Ընկերության հասցեն, նրա կազմակերպական-իրավական ձևը, կապիտալի չափը,
- Ապրանքային նշանի գրանցման ամիսն ու տարեթիվը, դրա գրանցման համարը,
- Ձեռնարկության գրանցման համարը,
- Բանկային ռեկվիզիտները,
- Ընկերության տնօրենի իսկական անունը և կարճ բնութագիրը (С.Վ.),
- Ընկերության գործունեության բնութագիրը,
- Ընկերության կողմից վաճառվող ապրանքների, մատուցվող ծառայությունների

շուկայի մասին տեղեկություններ,

– Այդ շուկայի հեռանկարների մասին տեղեկություններ,

– Ընկերության ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ,

– Ընկերության առևտրային ցանցի մասին տեղեկություններ, մասնավորապես՝ ընկերության գործընկերների, մասնաճյուղերի, ֆրանչայզիների (եթե այդպիսիք առկա են) մասին տեղեկություններ,

– Դեկրետում նախատեսված նաև այլ տեղեկություններ<sup>7</sup>:

Ի դեպ, նշենք, որ ֆրանչայզիճի պայմանագիրը կնքելուց հետո, եթե պարզվում է, որ վերոնշյալ տեղեկությունները չեն տրամադրվել կամ ոչ ամբողջ ծավալով են տրամադրվել, ապա, Դուբեյի օրենքի համաձայն, պայմանագիրն առջինն է<sup>8</sup>:

Նմանատիպ կարգ սահմանված է նաև ԱՄՆ-ում՝ Առևտրի Դաշնային Հանձնաժողովի N 436 որոշմամբ (1976թ.), բայց սույն որոշումը պահանջում է ֆրանչայզերից ավելի շատ տեղեկությունների տրամադրում իր և իր գործունեության մասին: Դուբեյի օրենքի հետ համեմատ՝ խիստ է նաև որոշման խախտման համար պատասխանատվությունը: Դուբեյի օրենքով նախատեսված պահանջը խախտելու համար սահմանվում է տուգանք, մինչդեռ ԱՄՆ Առևտրի Դաշնային Հանձնաժողովի որոշման խախտման համար՝ քրեական պատասխանատվություն<sup>9</sup>:

Մեզ մոտ առկա օրենսդրական բացերի պատճառով պայմանագիրը կնքելուց հետո էլ ֆրանչայզիի վիճակը մնում է խոցելի: Նա, Քաղ. օր.-ի (974 հոդվ.-ի կետ 3) համաձայն, պետք է անվերապահորեն կատարի ֆրանչայզերի բոլոր ցուցումները՝ որքան էլ որ դրանք բացասական լինեն իր համար: Իսկ դրանց կատարումից հրաժարվելու դեպքում պայմանագիրը վաղաժամ լուծարելու սպառնալիք է առաջանում: Այստեղ գործ ունենք Քաղ. օր.-ում առկա այնպիսի բացի հետ, ինչպիսին է ֆրանչայզերի կողմից սահմանվող պահանջների և ցուցում-

ների նկատմամբ սահմանափակումների բացակայությունը: Մասնավորապես՝ ֆրանչայզերը, օգտվելով օրենքի այս բացից, շատ հավանական է, որ սահմանի այնպիսի պահանջներ, որոնք չեն բխում ֆրանչայզիի շահերից և անհնարին են կատարման համար, և հետո էլ՝ չկատարման դեպքում պահանջի պայմանագրի վաղաժամ լուծում: Ուստի, մեր խորին համոզմամբ, անհրաժեշտ է հատուկ օրենքի ընդունում, որը կպաշտպանի ֆրանչայզիի շահերը: Օրինակ՝ ԱՄՆ-ի շատ նահանգներում գործում են օրենքներ, որոնք նախատեսում են մի շարք դրույթներ՝ ուղղված ֆրանչայզիի շահերի պաշտպանությանը: Մասնավորապես՝ այդ օրենքների որոշ մասը տարանջատում է ֆրանչայզերի պահանջները և ցուցումները «բարեխիղճների» և «ոչ բարեխիղճների» (ի դեպ՝ առաջինների թիվը շատ սահմանափակ է): Օրենսդրության այս բացը հնարավոր է լրացնել ոչ միայն հատուկ օրենքի ընդունմամբ, այլև Քաղ. օր.-ում այնպիսի պայմանի նախատեսմամբ, որի համաձայն՝ ֆրանչայզերն իրավունք չունի ֆրանչայզիին այնպիսի պահանջներ ներկայացնել, որոնց հենց ինքը չի հետևում: Հենց այս կանոնը կլինի այն նվազագույն սահմանափակումը, որը թույլ չի տա ֆրանչայզերին սահմանել կատարման առումով անհնարին ցուցումներ և պահանջներ: Ֆրանչայզիճային հարաբերությունների մանրամասն կարգավորումը մեծամասամբ նպատակ ունի հավասարակշռել կողմերի հնարավորություններն ու պաշտպանել ֆրանչայզիի շահերը: Փաստորեն, ֆրանչայզիի շահերի պաշտպանությանը ուղղված օրենքներ չունեցող պետություններին մնում է սահմանափակվել քաղաքացիական իրավունքի ընդհանուր դրույթներում նախատեսված ավանդական սկզբունքների կիրառմամբ, դրանք են՝ «բարեխիղճության», «արդարացիության», «բարի կամքի», «ազնիվ գործարարական պրակտիկայի» և

### **ՈՒՍԱՆՈՂԻ ՎՄՔԻՈՆ**

այլ սկզբունքները: Մի շարք պետություններում, որտեղ ֆրանչայզինգային հարաբերությունները զարգացման բարձր մակարդակի վրա են գտնվում, ֆրանչայզիների շահերի պաշտպանության համար կարևոր դեր են կատարում ֆրանչայզինգային ասոցիացիաները: Դրանք հրապարակում են էթիկայի կոդեքսներ և պարտավորեցնում իրենց անդամներին ղեկավարվել դրանցով:

Հայաստանում ֆրանչայզինգի զարգացմանը խոչընդոտում է քաղաքացիների, հատկապես՝ ձեռնարկատերերի և պաշտոնատար անձանց անտեղյակությունը: Այս բացի լրացմանը կնպաստի ՀՀ-ում ֆրանչայզինգային ասոցիացիայի կամ այլ մասնագիտացված կառույցի հիմնումը, որը հասարակության լայն զանգվածներին կիրազեկի ֆրանչայզինգի, նրա ելքային, նրա առաջարկած հնարավորությունների մասին՝ այդ ուղղությամբ հրապարակելով պարբերականներ, ձեռնարկներ, կազմակերպելով սեմինարներ, ֆրանչիզաների ցուցահանդես-վաճառքներ և իրականացնելով այլ գործառնություններ, որոնք, սովորաբար, իրականացնում են արտասահմանյան երկրների ասոցիացիաները: Այսպիսի մարմնի հիմնումը կարևոր է նաև այն առումով, որ դա կօժանդակի իր բիզնեսը ֆրանչայզինգի միջոցով ընդլայնել ցանկացող ձեռնարկատիրոջը ճիշտ ընտրություն կատարելու հարցում: Այսպիսի կառույցը կնպաստի այս ոլորտում համապատասխան մասնագետների պատրաստմանը, որոնց կարիքը ՀՀ-ն շատ է զգում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում (ՌԴ) գործում է Ֆրանչայզինգային ասոցիացիա, որը ոչ առևտրային կազմակերպություն է: Այն ստեղծվել է իր անդամներին աջակցելու, նրանց շահերը պաշտպանելու, Ռուսաստանում ֆրանչայզինգի զարգացման

համար առավել բարենպաստ տնտեսական և իրավական միջավայր ստեղծելու նպատակով: Իսկ Ֆրանչայզինգային ասոցիացիայի անդամներ են հանդիսանում գործող և պոտենցյալ ֆրանչայզերներն ու ֆրանչայզիները, կառավարական գործակալությունները և բիզնեսի աջակցության կազմակերպությունները, բանկերը, ֆրանչայզինգի գծով խորհրդատուները և այլն: Ասոցիացիան նաև տեղեկատվական կենտրոն է ինչպես գործող, այնպես էլ պոտենցյալ ֆրանչայզերների ու ֆրանչայզիների համար. այն մշտապես գործող ֆորում է տեղեկատվության և զաղափարների փոխանակման համար: Ասոցիացիան հրատարակում է տեղեկատվական պարբերականներ, սեմինարներ է անց կացնում, կազմակերպում է ցուցահանդեսներ ու կոնֆերանսներ և իրականացնում է ՌԴ օրենսդրությամբ չարգելված այլ գործողություններ՝ ասոցիացիայի նպատակների իրագործմանն ուղղված<sup>10</sup>:

ՀՀ-ում ֆրանչայզինգի զարգացման և, ընդհանրապես, ձեռնարկատիրական գործունեության զարգացման խոչընդոտներից է նաև փոքր և միջին ձեռնարկատերերի հնարավորությունների խիստ սահմանափակությունը: Հայաստանում գործող ֆրանչայզիների համոզմամբ անհրաժեշտ է պայմաններ ստեղծել, որոնց դեպքում ֆրանչայզիները կկարողանան, վերջապես, արտոնյալ պայմաններով վարկ ստանալ բանկերից: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում բանկը ձեռնարկատիրոջը տալիս է վարկ, իսկ պետությունն իր վրա է վերցնում վարկի 80 տոկոսի երաշխավորությունը:

Վերոնշյալ բացերի հետևանք է նաև այն փաստը, որ ՀՀ-ում ֆրանչայզինգի պայմանագրերը Մտավոր սեփականության գործակալությունում գրանցվում են որպես լիցենզիոն պայմանագրեր՝ այն պատճառաբանությամբ, որ չկա համապատասխան ընթացակարգ: Մտավոր սեփականության գործակալությունում որպես լիցենզիոն



պայմանագրեր են գրանցված նաև այն ֆրանչայզինգային պայմանագրերը, որոնց հիման վրա գործում են վերը նշված համաշխարհային ճանաչում ունեցող ընկերությունների հայաստանյան ֆրանչայզիները:

Եվ, այսպիսով, արդեն հասունացել է ֆրանչայզինգային հարաբերությունները

կարգավորող հատուկ օրենքի ընդունման պահը, որը նախապատրաստելիս, կարծում ենք, պետք է հաշվի առնել նաև ֆրանչայզինգային հարաբերությունների կարգավորման արտասահմանյան փորձը: Հատուկ օրենքի ընդունումից հետո արդեն կարելի է մտածել ֆրանչայզինգային ասոցիացիայի հիմնման ուղղությամբ:

<sup>1</sup> Քաղաքացիական օրենսգիրքը ընդունվել է 05.05.1998թ.-ին:

<sup>2</sup> Տե՛ս Сосна С.А., Новое в гражданском праве: Франчайзинг, журнал “Государство и право”. N7, 1997г., էջ 26-27:

<sup>3</sup> Տե՛ս Балабанов И.Т., Балабанов А.И., Внешнеэкономические связи, М., 1998г. էջ 172-173:

<sup>4</sup> Տե՛ս Руководство по франшизе. ВОИС. Женева 1995 էջ 40-41:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք, մաս 2-րդ, Ռ.Գ. Պետրոսյանի, Գ. Հ. Ղարախանյանի խմբագրությամբ, Եր., 2001թ. էջ 508:

<sup>6</sup> Տե՛ս Сосна С.А., Новое в гражданском праве: Франчайзинг, журнал “Государство и право”. N7, 1997թ. էջ 31:

<sup>7</sup> Տե՛ս Декрет N 91-337/ 4 апреля 1991г.:

<sup>8</sup> Տե՛ս Ж. Дельтей Франчайзинг, изд.-во Нева, Петербург, 2003г. էջ 58:

<sup>9</sup> Տե՛ս Сосна С.А. Новое в гражданском праве: Франчайзинг, журнал “Государство и право”. N7, 1997թ. էջ 31:

<sup>10</sup> Տե՛ս Устав некоммерческой организации “Ассоциация Франчайзинга”, 1999г., пункт 1.10:

**ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲՈՆ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԳԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԸ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**Նանե ՂԱԶԱՐՅԱՆ**

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի*

Յամաձայն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք՝:

Փաստորեն, վերը նշված հոդվածով պետությունը պարտավորվում է ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը: Չնայած դրան՝ ներկայումս բավական հաճախ են ոտնահարվում մարդու և քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից: Վերջիններիս մեջ ձևավորվել է անպատժելիության զգացում, և նրանցից ոմանց կողմից դրսևորվում է ակնհայտ անտարբերություն մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ: Բայց, կարծում ենք, յուրաքանչյուր իրավական պետության հիմնախնդիրներից է այնպիսի լծակների ստեղծումը, որոնք ապահովում են մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը: Եվ այդ լծակները ոչ միայն պետք է ապահովեն մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը, այլև վերականգնեն նրանց խախտված իրա-

վունքը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի դրույթների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ են մի շարք երաշխիքներ:

Ներպետական երաշխիքներից հիմնական է համարվում մարդու իրավունքների դատական պաշտպանությունը: ՀՀ Սահմանադրությունը (18-րդ հոդվ. առաջին մաս) ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Նորամուծություն է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի չորրորդ մասի այն դրույթը, որ յուրաքանչյուր ոք, ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին, ինչպես նաև Եվրոպական դատարան, երբ սպառվում են ներպետական բոլոր ընթացակարգերը<sup>2</sup>: Սա նույնպես գործադիր իշխանության բնագավառում կարևոր երաշխիք է մարդու իրավունքների պաշտպանության համար: 2001թ. հունվարի 25-ին ՀՀ դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ: Վարչական արդարադատության համար կարևոր նշանակություն կունենա վարչական իրավունքի տեղեկատվություն, որը պատրաստում է Եվրախորհուրդը, և որը պարտադիր է լինելու բոլոր անդամ պետությունների համար: Այն պարունակելու է վարչական իրավունքի հիմնարար սկզբունքներ և դրույթներ, որոնք լինելու են անդամ պետությունների վարչական իրավունքի հիմքում. սա հե-

տապնդում է վարչական իրավունքի ունիվերսալացման և յուրաքանչյուր անդամ պետության կողմից կամայականությունների դրսևորմանը խոչընդոտելու նպատակ, և կարծում ենք, որ դրանով նաև կարևորվում է վարչական իրավունքի դերը յուրաքանչյուր պետության իրավական համակարգում:

Պետական մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և քաղաքացու հարաբերություններն իրավական պետությունում նախ և առաջ իրավունքի սուբյեկտների հարաբերություններ են, որոնք հավասար պետք է լինեն օրենքի և դատարանի առջև: Կարծում ենք՝ վարչական արդարադատության խնդիրներից մեկն էլ հենց այս հավասարության ապահովումը պետք է լինի: Ֆիզիկական անձը, դատական կարգով վիճարկելով պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից ընդունված իրավական ակտերն ու գործողությունները, ակնհայտորեն հանդես է գալիս ոչ փաստացի իրավահավասար կարգավիճակում<sup>3</sup>: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով ապահովվում է կողմերի իրավահավասարության սկզբունքը, համաձայն որի՝ վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ կողմից յուրաքանչյուրին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն<sup>4</sup>:

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի՝ ՀՀ մասնագիտացված դատարաններն են՝

1. քրեական դատարանները,
2. քաղաքացիական դատարանները,
3. վարչական դատարանները<sup>5</sup>:

Արդարադատության ներկայիս հասկացությունն անվերապահորեն առնչվում է դատական իշխանության հետ<sup>6</sup>: Ըստ ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն

դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան<sup>7</sup>: Հետևաբար՝ վարչական արդարադատությունը ՀՀ-ում իրականացնում են մասնագիտացված վարչական դատարանները:

Իսկ ի՞նչ է վարչական արդարադատությունը: Մինչ այսօր գոյություն չունի մեկ միասնական սահմանում, և շարունակվում են բանավեճերն այս հասկացության շուրջ: Ամենալայն իմաստով վարչական արդարադատությունը քաղաքացու և պետական կառավարման մարմնի միջև առաջացած վեճի լուծման կարգն է, որն առաջացել է վերջինիս լիազորությունների իրականացման ժամանակ<sup>8</sup>: Լայն տարածում է ստացել Դ.Ս. Չեչոտի կողմից տված վարչական արդարադատության հետևյալ սահմանումը՝ վարչական արդարադատությունը դատական-ընթացակարգային կարգով վեճի քննման և լուծման կարգն է, որն առաջացել է պետական կառավարման բնագավառում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց՝ մի կողմից, և վարչական մարմինների միջև՝ մյուս կողմից: Այն իրականացվում է հատուկ ստեղծված իրավական վեճերի լուծման նպատակով վարչական արդարադատության մարմինների կողմից:

Ն. Խամանևան, վարչական արդարադատությունն ընկալելով որպես հատուկ մարմինների համակարգ, որոնք պետական կառավարման բնագավառում վերահսկողություն են իրականացնում, անհրաժեշտ է համարում վարչական արդարադատության համար հատուկ դատարանների համակարգի ստեղծումը, որոնք առանձնացված կլինեն ընդհանուր դատական համակարգից<sup>9</sup>: Պետք է նշել, որ նման կերպ է իրականացվում վարչական արդարադատությունը Ֆրանսիայում:

Դ. Բախրախն առաջարկում է տալ վարչական արդարադատության հասկացության լայն և նեղ ըմբռնում: Լայն առումով արդարադատություն իրականացվում է քաղաքացիների դիմումների հիման վրա պետական մարմինների և պաշտոնատար

### **ՈՒՍԱՆՈՂԻ ՎԱՐՅԱԿԱՆ**

անձանց գործունեության օրինականության վերաբերյալ: Իսկ նեղ առումով վարչական արդարադատությունը ըմբռնումը դատարանների կողմից քաղաքացիների՝ կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց ակտերի վերաբերյալ բողոքների քննարկումն է<sup>10</sup>:

Գ. Դանիելյանը տալիս է վարչական արդարադատության հետևյալ բնորոշումը. վարչական արդարադատությունը քաղաքացու և հասարակական միավորումների իրավունքներն ու օրինական շահերը խախտող՝ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց օրենքին հակասող իրավական ակտերն ու գործողությունները (անգործությունը) բողոքարկելու դատավարական ընթացակարգն է<sup>11</sup>:

Վարչական արդարադատության ինստիտուտը դեռևս ԱՊՀ երկրներում գտնվում է սաղմնային վիճակում, որտեղ վարչական դատարանները գործում են 2008 թ. հունվարի 1-ից: Այս կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում պատմական ակնարկ անցկացնել և դիմել այլ երկրների իրավական համակարգերի փորձին:

Վարչական արդարադատության դասական մոդելը ֆրանսիականն է, որտեղ էլ այն ստեղծվել է 20-րդ դարի 70-ական թթ. սկզբներին՝ վարչական արդարադատության և վարչական վարույթի խնդիրների բուռն քննարկման ժամանակաշրջանում: Ն. Սալիշչևան նշում է. «Չենց բուրժուական հասարակությունում, որն այժմ ֆորմալ-դեմոկրատական տարբեր բնույթի հաստատությունների այդքան կարիք ունի, առաջացել էր վարչական արդարադատության գաղափարը, որն իր վառ դրսևորումն է ստացել հատուկ վարչական դատարանների համակարգի ստեղծմամբ Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում, Բելգիայում և վերջին շրջանում

նաև Անգլիայի վարչական տրիբունալների համակարգում և որոշ այլ երկրներում»<sup>12</sup>:

Վարչական արդարադատության հիմնադիրը Ֆրանսիայում Նապոլեոն Բոնապարտն է, որը 1799թ. ստեղծեց Պետական խորհուրդը<sup>13</sup>: Ընդհանուր իրավասության դատարանները չէին կարող հսկողություն իրականացնել օրենսդիր և գործադիր ոլորտում, իսկ պրակտիկան ցույց էր տվել, որ այդպիսի հսկողությունն անհրաժեշտ է, հետևաբար պետք էր որևէ կերպ լրացնել այդ բացը: Արդյունքում ստեղծվեց արդարադատության ինքնուրույն ճյուղ՝ վարչական արդարադատության տեսքով:

Այսպիսով, ստեղծվեցին պրեֆեկտությունների խորհուրդները: Սակայն մինչև 1872 թ. խորհուրդների որոշումները վարչակազմի համար պարտադիր չէին և բացառիկ դեպքերում էին իրականացվում: 1872 թ. խորհուրդներին օրենքով տրվեցին դատական լիազորություններ. խորհուրդները այսուհետ դատական որոշումներ կայացնելու իրավունք ստացան: Իրենց որոշումներում նոր դատարանները վարչական իրավունքի մի շարք նորմեր ու դրույթներ ձևավորեցին, որոնք հետագայում ամրագրվեցին օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում<sup>14</sup>:

Սակայն վարչական արդարադատության վերաբերյալ քննարկումներն ընթանում էին ոչ միակարծիք: Կային այս ինստիտուտին դեմ մասնագետներ, որոնց թվում էր նաև Ա. Տոկվիլը: Նրանք իրենց դիրքորոշումը հիմնավորում էին այսպես. վարչական արդարադատության ստեղծումը հակասում է դատարանների միասնականության սկզբունքին, որը բխում է իշխանությունների տարանջատման սկզբունքից, և հակասում է նաև միայն դատարանների կողմից արդարադատության իրականացման սկզբունքին: Բայց վարչական արդարադատության ինստիտուտի կողմնակիցները ի վերջո կարողացան ապացուցել, որ վարչական դատարանների ստեղծումն անհրաժեշտ է, որ նրանք նույնպես կլինեն լիովին անկախ պետական իշխանության

մյուս թևերից, որ նրանց ինքնուրույնությունը պայմանավորված է իրենց գործունեության առարկայով՝ կառավարման ոլորտով, որը յուրահատուկ ոլորտ է և ոչ մի կերպ չի համընկնում քրեաիրավական և քաղաքացիաիրավական ոլորտների հետ, և որ նման խնդիրների լուծման համար անհրաժեշտ է հատուկ անկախ մարմինների ստեղծում՝ մասնագիտացված վարչական դատարանների տեսքով:

Ֆրանսիայում վարչական արդարադատությունը լիովին առանձնացված է ընդհանուր դատական համակարգից: Սակայն սա չի նշանակում, որ միայն վարչական դատարանների բացառիկ իրավասությունն է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունը: Եվ քանի որ Ֆրանսիայում գոյություն ունի արդարադատության 2 ճյուղ՝ ընդհանուր իրավասության և վարչական, ապա Ֆրանսիայի վարչական իրավունքի ամենաբարդ հարցերից մեկն էլ դատական ընդդատության հարցն է, որի շուրջ ընդունվել են հարյուրավոր ակտեր: Այս բազմաթիվ օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և դատարանների որոշումների մեջ շատ բարդ է կողմնորոշվելը, և արդյունքում, ինչպես նշում է Գ. Բրեբանը, «անձը ստանում է իր իրավունքների ամենաքիչ պաշտպանությունը»:

Ֆրանսիայի վարչական արդարադատության գուցե ամենհիմնական թերությունը գործի լուծման բավական դանդաղ կարգն է: Միջին հաշվով գործը կարող է քննվել շուրջ 2 տարի, և տարօրինակն այն է, որ այդ ընթացքում վիճարկվող վարչական ակտը մնում է ուժի մեջ:

Ֆրանսիայի վարչական արդարադատության հիմնական բնորոշ գիծը դրա կայունությունն է: Սակայն, դրա հետ մեկտեղ, այն շարունակում է անդադար զարգանալ: Այս կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ Ֆրանսիայի վարչական արդարադատության այժմյան համակարգը կարելի է համարել բարձր կատարելության հասած<sup>16</sup>:

19-րդ դարում վարչական արդարադատությունն արդեն տարածվել էր ամբողջ Եվրոպայով:

Ռուսաստանում նույնպես փորձեր են արվել վարչական դատարանների ստեղծման ուղղությամբ: Առաջին անգամ դա տեղի է ունեցել հեղափոխությունից առաջ, երբ ստեղծվեց Սենատի վարչական կոլեգիան: Պետք է ստեղծվեին նաև վարչական դատարաններ, սակայն իշխանության գլուխ եկած բոլշևիկները դա ձախողեցին:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա պատմական ընդհանուր բնութագիրը ներկայացնենք նախկին ԽՍՀՄ երկրների իրավական համակարգերի ուսումնասիրությամբ՝ հիմնվելով այն բոլոր խոշոր սոցիալական փոփոխությունների վրա, որոնք տեղի ունեցան ԽՍՀՄ փլուզումից հետո. քաղաքական համակարգը, տնտեսությունը, սահմանադրական կարգը, իրավական համակարգը և նույնիսկ հասարակությունը ենթարկվեցին փոփոխությունների:

ԽՍՀՄ պետությունների վարչաիրավական համակարգերի բնորոշ գիծն այն էր, որ վարչական կառավարումը գտնվում էր կոմունիստական կուսակցության վերահսկողության ներքո: Վերահսկողության համակարգերը ուղղված էին գործադիր իշխանության պահանջների բավարարմանը: Չկար նաև վարչական կառավարման նկատմամբ որևէ տեսակի հսկողության իրականացման բավականաչափ պահանջարկ: Ներկա ժամանակաշրջանում մի շարք ինստիտուտների առկայությունը, որոնք ունեն վարչակազմի նկատմամբ հսկողության և մոնիթորինգի իրավունք, համարվում է պարտադիր հատկանիշ վարչական իրավունքի համակարգի համար: ԽՍՀՄ-ի ժամանակաշրջանում գոյություն չուներ անկախ դատական համակարգ, ինչպես նաև վերահսկողության իրականացման համար որևէ անկախ մարմին կամ հիմնարկ: Բացի այդ, յուրաքանչյուր հարց լուծվում էր հօգուտ վարչակազմի՝ ոտնահարելով քաղաքացու իրավունքներն ու ա-

### **ՈՒՍԱՆՈՂԻ ՎՍԲԻՈՆ**

զատությունները:

Հետևյալում հաստատական ժամանակաշրջանում վարչական իրավունքի կազմավորման համար կարևորվում էր այնպիսի ինստիտուտների ստեղծումը, որոնք անկախ կլինեին գործադիր իշխանությունից ու վարչական կառավարումից և օժտված կլինեին հսկողության ու վերահսկողության գործառնություններով վերջիններիս նկատմամբ: Գործադիր իշխանության մարմինների գործունեության դատական հսկողությունը իրավական պետության հիմնական տարրերից մեկն է: Սա հետապնդում է 2 նպատակ: Մի կողմից պաշտպանում է ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ կառավարման մարմինների կողմից իրենց իշխանությունը չարաշահելուց, մյուս կողմից նպաստում է կառավարման մարմինների գործունեության բարելավմանն ընդհանրապես<sup>16</sup>:

Այս հարցի շուրջ Գ. Դանիելյանը նշում է. «Օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև քաղաքական բախումները մասնավորապես առավել անհրաժեշտ են դարձնում դատական համակարգին այնպիսի լիազորություններով օժտելը, որոնց շնորհիվ վերջինս կարողանում է կայացնել գործադիր իշխանության գործողություններն ուղղորդող դատական ակտեր»<sup>17</sup>:

Դատական հսկողության ձևերից մեկն էլ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում պետական ու մունիցիպալ մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողությունների /անգործության/ բողոքարկումն է դատական կարգով: Յուրաքանչյուր երկրում, կապված նրա առանձնահատկություններից, ձևավորվել են տարբեր մարմիններ՝ այս բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով: Շատ երկրներում այս խնդիրը լուծվում է հենց վարչական արդարադատության միջոցով:

Սակայն դատարանները միակ մարմինները չեն այս բնագավառում: Արևմտյան եվրոպայում, իսկ ավելի ուշ՝ նաև Արևելյանում, արդարադատության զարգացման միտումը հիմքեր է ստեղծում նաև այլ մարմինների ստեղծման համար՝ օժտված վարչակազմի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ: Դրանց մեջ են մտնում օմբուդսմենները կամ պառլամենտական ներկայացուցիչները, որոնք կարող են ունենալ տարբեր լիազորություններ<sup>18</sup>: Օմբուդսմենի ինստիտուտ ձևավորվել է այն բոլոր երկրներում, որտեղ գործադիր իշխանության նկատմամբ դատական վերահսկողության ընթացակարգերով ընդունվել և կիրառման մեջ է դրվել վարչական արդարադատության ինստիտուտը: Օմբուդսմենի ինստիտուտը անհրաժեշտ և գործնականում հնարավոր է դառնում միայն այնպիսի իրավական համակարգում, որտեղ գործադիր իշխանության նկատմամբ ներգործություն է իրականացվում նաև դատական կառուցակարգերի միջոցով<sup>19</sup>: Այս հարցի շուրջ Ն. Սալիշևան նշում է, որ վարչական արդարադատության գաղափարի հետ անքակտելիորեն կապված է նաև քաղաքացու իրավունքների պաշտպանության մի յուրահատուկ ինստիտուտ՝ օմբուդսմենը<sup>20</sup>:

Տվյալ բնագավառում մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության համար անհրաժեշտ է վերոհիշյալ երկու ինստիտուտների ճիշտ համադրում: Դժբախտաբար մեր երկրում վերը նշված դատապարտվել է անհաջողության: Բերենք օրինակ պրակտիկայից: 2008թ. սեպտեմբերի 18-ին վարչական դատարանը քննության է առել ՀՀ քաղաքացու հայցադիմումն ընդդեմ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի: Քաղաքացին իր հայցադիմումում պնդում է, թե ՄԻՊ-ը չի կատարել իր պարտականություններից բխող գործողություններ, այն է՝ չի պաշտպանել մարդու իրավունքները, քանի որ 2 անգամ դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին տարբեր բնույթի հարցերով և ոչ մի ա-

ջակցություն չի ստացել<sup>21</sup>: Սակայն պատասխանող կողմը պնդում է, որ տվյալ հայցադիմումը ենթակա չէ վարչական դատարանում քննության, և դա հիմնավորում է:

Նմանատիպ օրինակ է եղել նաև Ռուսաստանի Դաշնությունում 2004թ.-ին: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներից մեկի դիմումը՝ ուղղված Մարդու իրավունքների լիազորին, մերժվել էր քննարկման ընդունվել, և նա ՌԴ Սահմանադրական դատարան էր դիմել՝ «Մարդու իրավունքների լիազորի մասին» ՌԴ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը հակասահմանադրական ճանաչելու խնդրանքով, որի համաձայն՝ ՌԴ օմբուդսմենին ուղղված բողոքի քննումը մերժելը բողոքարկման ենթակա չէ: Նա հիմնավորում էր, որ տվյալ դրույթը խախտում է անձի՝ դատական պաշտպանության իրավունքը: Բայց ՌԴ Սահմանադրական դատարանը չէր բավարարել դիմումը՝ հիմնավորելով, որ Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների մեջ չի մտնում իրավունքի վերաբերյալ վեճերի լուծումը:

Դատական բարեփոխումների ընթացքում նախորդ տարի փոխվեց ԶԳ դատական համակարգը, որի արդյունքում ստեղծվեցին մասնագիտացված վարչական դատարաններ: ԶԳ-ում վարչական դատարանները գործում են 2008 թ. հունվարի 1-ից: Կարծում ենք՝ սա կարևոր քայլ է վարչական արդարադատության իրականացման և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Դեռևս 1905թ. Ֆ. Գուդնաուն գրել է, որ վարչական մարմինների նկատմամբ դատական հսկողության նպատակը առանձին անձանց իրավունքների պաշտպանությունն է<sup>22</sup>: Դատարանի այս լիազորությունն ուղղակիորեն բխում է ԱՄՆ Սահմանադրության 3-րդ հոդվածից, որի 2-րդ մասն ասում է, որ դատական իշխանությունը տարածվում է այն բոլոր վեճերի վրա, որոնցում ԱՄՆ-ը կողմ է հանդիսանում<sup>23</sup>:

Խոսքը դատական համակարգի ևս մեկ փոփոխության մասին է: **Կարծում ենք՝ ինչ**

**փոփոխության էլ ենթարկվի ԶԳ դատական համակարգը, մասնագիտացված վարչական դատարանների առկայությունը պարտադիր է**, քանի որ դատարանների մասնագիտացումը որևէ բնագավառում թույլ է տալիս դրանց ավելի խորը ներթափանցել քննարկվող գործի էության մեջ, ընդունել որակյալ որոշումներ: Եվ պատահական չէ, որ բազմաթիվ իրավաբաններ կարծում են, որ վարչական դատարանների հսկողությունը ավելի մանրակրկիտ է, օպերատիվ և հետևողական, քան ընդհանուր իրավասության դատարանների<sup>24</sup>: Բացի այդ, վարչական դատարանների առկայությունը լուծում է նաև դատարանների ծանրաբեռնվածության խնդիրը և հնարավորություն տալիս իրականացնելու մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն պետական մարմինների և պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններից (անգործությունից):

Վարչական արդարադատության արդյունավետության համար կարևոր է գործի մանրակրկիտ և խորությամբ ուսումնասիրումը դատարանի կողմից: Կարծում ենք՝ ԶԳ վարչական դատավարության օրենսգիրքը վերոշարադրյալի համար 6-րդ հոդվածի 3-րդ կետով երաշխիք է նախատեսում, որի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական միստի<sup>25</sup>:

Ֆրանսիայում պրակտիկան ցույց է տվել, որ դատարան հիմնականում դիմում են միջին խավի ներկայացուցիչները, իսկ հատկապես ստորին խավը խուսափում է դատարան դիմելուց: Այդ պատճառով մի-

## **ՈՒՍԱՆՈՂԻ ՎՄՔԻՈՆ**

ջոցներ ձեռնարկվեցին արդարադատությանն ավելի մատչելի դարձնելու համար: Մասնավորապես, սահմանվեց, որ վարչական դատավարության առավել անապահով մասնակիցներին դատարանը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն ազատել դատական ծախսերից, եթե նրանք կարողանան ապացուցել, որ չունեն բավականաչափ միջոցներ<sup>26</sup>: **Ճիշտ կլիներ այս պրակտիկան կիրառել նաև ՀՀ-ում:**

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում վարչական արդարադատության մատչելիությանը խոչընդոտում է ևս մի կարևոր հանգամանք, այն է՝ իրավագիտակցության ցածր մակարդակը մեր հասարակությունում: Ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ վարչական օրենսգրքով սահմանված հանգամանքների առկայության դեպքում վարչական դատարան դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ<sup>27</sup>: Իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վարչական կամ դատական կարգով (հոդվ. 69, 70)<sup>28</sup>: Կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիների և առավել ևս օտարերկրացիների մեծամասնությունն անտեղյակ է իրենց իրավունքների պաշտպանության այս եղանակի մասին: Այդ պատճառով **մենք կարևորում ենք, որ ՀՀ Սահմանադրության մեջ**

**պետք է ուղղակիորեն ամրագրվի վարչական արդարադատության և վարչական դատարանի առկայությունը**, ինչպես դա արվել է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 118 հոդվածում, որի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնությունում արդարադատությունը իրականացվում է միայն դատարանի կողմից, իսկ դատական իշխանությունը իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության միջոցով<sup>29</sup>:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի առաջին կիսամյակի վիճակագրությունը ցույց է տալիս, որ վարչական դատարանը ստացել է 5476 հայց, որոնցից վարույթ է ընդունվել 4385-ը, որոնցից բավարարվել է 406-ը:

Վարչական արդարադատության անհրաժեշտությունը տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում. դատարանների գերծանրաբեռնվածությունը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ոտնահարման բազում դեպքեր գործադիր իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից, օրենսդրի կողմից մասնագիտացված դատարանների ստեղծման հնարավորության նախատեսումը և այլն:

Այժմ զարգացած գրեթե բոլոր երկրներում գործում են վարչական դատարաններ, և եթե մինչև 20-րդ դարի սկիզբը դեռևս քննարկումներ էին ընթանում վարչական արդարադատության ինստիտուտի ստեղծման շուրջ, ապա այժմ այն կասկածի տեղիք անգամ չի տալիս: Այն ոչ միայն ամրագրված է օրենսդրությամբ, այլև դրա անհրաժեշտությունն ապացուցված է պրակտիկայով:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 1995թ. (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով):

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Գ. Դանիելյան, Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները, «ԱՌՏ», Երևան, 2004թ., էջ 252:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգրք, 2007թ.:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ դատական օրենսգրք, 2007թ.:

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս Գ. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 32:

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 1995թ. (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով):



- 
- <sup>8</sup> Տե՛ս Н. Г. Салищева, Н. Ю. Хаменева, Административная юстиция и административное судопроизводство в Российской Федерации, Москва, 2001թ., <http://forum.yurclub.ru/index.php?download=976>:
- <sup>9</sup> Տե՛ս Н. Ю. Хаменева, Защита прав граждан в сфере исполнительной власти, Москва, 1997թ., էջ 132:
- <sup>10</sup> Տե՛ս Ю. Н. Стариков, Курс общего административного права. В 3-х т., т. II. М., 2002թ., էջ 494:
- <sup>11</sup> Տե՛ս Գ. Ղանիբեյլյան, Գշվ. աշխ., էջ 31:
- <sup>12</sup> Н. Салищева, Гражданин и административная юрисдикция в СССР, 1970թ., <http://lawlibrary.ru/izdanie/6848.html>:
- <sup>13</sup> Տե՛ս Административное право зарубежных стран, под ред. А.Н. Козырин, изд. СПАРК, М., 1996թ., էջ 97:
- <sup>14</sup> Տե՛ս նույն տեղը:
- <sup>15</sup> Տե՛ս Н. Г. Салищева, Н. Ю. Хаменева, Գշվ. աշխ.:
- <sup>16</sup> Տե՛ս Н. Г. Салищева, Н. Ю. Хаменева, Административная юстиция и административное судопроизводство в Российской Федерации, Москва, 2001թ., <http://forum.yurclub.ru/index.php?download=976>:
- <sup>17</sup> Տե՛ս Գ. Ղանիբեյլյան, Գշվ. աշխ., էջ 40:
- <sup>18</sup> Տե՛ս Административная юстиция в новых европейских демократиях, под ред. Денис Дж. Галлиган, Ричард Х. Ланган II, Констэнс С. Никандру, изд. ОСИ/КОЛПИ, Будапешт, 1999թ., էջ 18-20:
- <sup>19</sup> Տե՛ս Գ. Ղանիբեյլյան, Գշվ. աշխ., էջ 247-248:
- <sup>20</sup> Տե՛ս Н. Салищева, Гражданин и административная юрисдикция в СССР, 1970թ., <http://lawlibrary.ru/izdanie/6848.html>:
- <sup>21</sup> Տե՛ս [www.lragir.am](http://www.lragir.am), 19.09.08թ.:
- <sup>22</sup> Տե՛ս F.G. Goodnow, The Principles the Administrative Law of USA, N.Y., 1905 թ., էջ 370:
- <sup>23</sup> Մանրամասն տե՛ս Конституции зарубежных государств, 4-е издание, переработанное и дополненное, Волтерс Клувер, М., 2003թ., էջ 387-388:
- <sup>24</sup> Տե՛ս Административное право зарубежных стран, под ред. А.Н. Козырин, изд. СПАРК, М., 1996թ., էջ 97:
- <sup>25</sup> Տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 2007թ.:
- <sup>26</sup> Տե՛ս Административное право зарубежных стран, под ред. А.Н. Козырин, изд. СПАРК, М., 1996թ., էջ 103-104:
- <sup>27</sup> Տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 2007թ.:
- <sup>28</sup> Մանրամասն տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, 2004թ.:
- <sup>29</sup> Տե՛ս Конституция Российской Федерации, 1993թ.:
-

**ԳՐԱԽՈՍԱԿԱՆ****ՆՈՐ ԳԻՐՔ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

(Գ.Հ. Ղարախանյան, «Ընտանեկան իրավունք բոլորի համար»,

«Անտատես» Հրատարակչություն, Եր., 2008թ., 270 էջ)

**Տաքևիկ ԳԱՎԹՅԱՆ***ԵՊՀ քաղաքացիական իրավունքի  
սանթրոնի սասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Ղարախանյանի հեղինակած **«Ընտանեկան իրավունք բոլորի համար»** գիրքը համալրում է գիտնականի՝ ընտանեկան իրավունքի տարբեր հարցերի նվիրված արժեքավոր աշխատությունների ցանկը, գրքեր, որոնք մեծ ընդունելություն են գտել ոչ միայն հանրապետության ուսանողության ու պրակտիկ աշխատողների, այլև ընթերցողների լայն շրջանակներում: Հիշարժան են գիտնականի՝ «Հայաստանի ընտանեկան իրավունքի զարգացման պատմությունը 20-րդ դարում» (2004թ.), «Որդեգրում, խնամակալություն, հոգաբարձություն» (1989թ.), «Հայաստանի ընտանեկան իրավունք» (2008թ.), «Հայաստանի Հանրապետության նոր ընտանեկան օրենսգիրքը» (2005թ.), «Ալիմենտային պարտավորություններ» (1974թ.) և այլ աշխատությունները:

Հանրապետությունում լինելով ընտանեկան իրավունքի հարցերով զբաղվող առաջատար իրավագետը՝ Գ.Ղարախանյանը իր բազմամյա գիտամանկավարժական գործունեության ընթացքում մեծ ներդրում ունի Հայաստանի ընտանեկան իրավունքի գիտության և ընտանեկան օրենսդրության զարգացման ու կատարելագործման գործում: Ուսումնասիրելով ընտանեկան իրավունքի տարբեր հարցերի վերաբերյալ հայ և օտարերկրյա հայտնի իրավագետների աշխատությունները՝ գիտնականը առաջարկել է նոր մոտեցումներ ու գաղափար-

ներ, որոնք համալրել են ընտանեկան իրավունքի տեսության ներուժը և արժանի են ուշադրության: Մեծ է հեղինակի դերը նաև ազգային օրենսդրության ստեղծման և կատարելագործման գործում:

Գրախոսվող գիրքը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Գ.Ղարախանյանի աշխատությունների շարքում, քանի որ այն նախատեսված է ընթերցող լայն զանգվածների համար, և, ինչպես հեղինակն է նշել, **«Երաշխավորվում է բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են իմանալ ՀՀ ընտանեկան իրավունքի այբուբենը»:**

Գրախոսվող գիրքը շահեկան է նաև նրանով, որ հեղինակն օգտագործել է ՀՀ դատական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների պրակտիկայից, գեղարվեստական գրականությանից, ինչպես նաև պարբերական մամուլից վերցված օրինակներ: Գիրքը բաղկացած է տասնչորս գլուխներից, որոնցում ներառված են ընտանեկան իրավունքի բոլոր ինստիտուտները:

**Առաջին գլխում** հեղինակն անդրադարձել է ամուսնությանը և ընտանիքին՝ որպես հասարակական երևույթների, որպես հասարակության պատմական զարգացման արդյունքի, որոնք առաջացել են մարդկային հասարակության զարգացման արշալույսին և համապատասխան փոփոխություններ են կրել հասարակական-տնտեսական կացութաձևերի փոփոխման հետ միասին:

Հեղինակը տրամաբանական հաջորդականությամբ շարադրում է ամուսնության և ընտանիքի ձևավորման պատմությունը: Նկարագրվում է ընտանեկան և ամուսնական կապերը ցեղային միավորումներում,

ապա տոհմատիրական կարգերի ժամանակ: Ներկայացնում է, թե ինչպես է մարդկային հասարակությունը միջսեռային չկարգավորված հարաբերություններից հետզհետե անցում կատարել խմբամուսնություն, զուգամուսնություն, ապա մենամուսնություն: Իսկ ընտանիքը՝ որպես հասարակության հիմնական բջիջ, ի հայտ է եկել տոհմատիրական կարգերի քայքայման հետևանքով:

Անդրադառնալով ընտանիքի և ամուսնության այս կամ այն հարցերի վերաբերյալ ժամանակի խոշոր մտածողներ Մակ Լեննանի, Ի.Յա. Բախտֆենի, Լ.Գ.Մորգանի, Կ.Մարքսի, Ֆ.Էնգելսի, Վ.Ի. Լենինի և այլոց մտքերին՝ հեղինակը եզրահանգում է, որ **ընտանիքը կազմում է ցանկացած հասարակարգի բաղկացուցիչ բջիջը և կարևոր տեղ է գրավում հասարական հարաբերությունների համակարգում: Դրա համար էլ իրավական նորմերով կարգավորվում է ընտանիքի անդամների անձնական և գույքային փոխհարաբերությունների ամբողջությունը, այլ կերպ ասած՝ ընտանեկան հարաբերությունները:**

**Երկրորդ գլխում** հեղինակը բավականին մատչելի ներկայացնում է ընտանեկան իրավունք հասկացությունը, ընտանեկան իրավունքի կարգավորման առարկան, մեթոդը, խնդիրները, սկզբունքները և համակարգը:

Ընտանեկան իրավունքը համարելով ՀՀ միասնական իրավական համակարգի ինքնուրույն ճյուղ՝ Գ.Ղարախանյանը համալրում է այն իրավագետների շարքերը, որոնք ընդունում են ընտանեկան իրավունքի ճյուղային ինքնուրույնությունը: Այս իրավագետները ընտանեկան իրավունքի առանձնացումը քաղաքացիական իրավունքից արդարացիորեն հիմնավորում են նրանում իրավունքի ճյուղին հատուկ հիմնական չափանիշների (կարգավորման առարկա, մեթոդ, գործառույթ, սկզբունքներ), համապատասխանաբար նաև ընտանեկան հարաբերությունների յուրահատուկ հատկանիշների առկայությամբ (հատուկ

սուբյեկտային կազմ, մասնակիցների անհատականացում, հարաբերությունների ծագման առանձնահատուկ հիմքեր, կայուն ու երկարատև բնույթ, բարոյականության հետ սերտ կապ, անօտարելի, անփոխանցելի, անհատուցելի բնույթ և այլն):

Թվարկելով ընտանեկան իրավունքի ճյուղային սկզբունքները՝ հեղինակը դարձյալ ընդգծում է դրանց յուրօրինակությունը, այսինքն՝ իրավունքի այլ ճյուղերում դրանց բացակայությունը: Խոսքը վերաբերում է ամուսնության մեջ մտնելու ազատության և կամավորության, մենամուսնության (մոնոգամիայի), պետության վերահսկողությամբ ամուսնալուծության ազատության, ընտանիքի, մայրության, հայրության և մանկության իրավական պաշտպանության, ծնողական իրավունքների պաշտպանության, ընտանիքի անդամների՝ մեկը մյուսի հանդեպ հոգատարության, բարոյական և նյութական օգնության տրամադրման, ներընտանեկան հարցերը փոխադարձ համաձայնությամբ լուծելու, ընտանիքի գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքներին:

Ընտանեկան իրավունքի հիմնական խնդիրների շարքում հեղինակն առանձնացնում է ընտանիքի ամրապնդումն ու պահպանումը: Այդ նպատակի իրականացման տեսանկյունով էլ որոշվում են ընտանեկան իրավունքի խնդիրները, որոնք գործնականում ընտանեկան օրենսդրությանն են առնչվում:

Պրոֆեսոր Գ.Ղարախանյանի հեղինակած գրքի թերևս ամենաարժեքավոր հատվածներից պետք է համարել **Երրորդ գլուխը**, որը նվիրված է Հյաստանի ընտանեկան իրավունքի զարգացմանը: Այս կամ այն երևույթի պատմական ակունքների ուսումնասիրմամբ է, որ կարող ենք եզրահանգումներ կատարել դրա զարգացման օրինաչափությունների ու հեռանկարների մասին: Ընտանեկան հարաբերություններում շատ ու շատ հին ավանդույթների ու սովորույթների, ինչպես նաև տարբեր դարաշր-

### **ԳՐԱԽՈՍԱԿԱՆ**

ջաններում ընտանեկան հարաբերությունների կարգավորման աղբյուրների և իրավական հուշարձանների ուսումնասիրությամբ է, որ կարող ենք բացատրել մեր օրերում ընտանիքում և անուսնաընտանեկան հարաբերություններում տարածված այս կամ այն դրական կամ բացասական երևույթները: Դրանց վերլուծության շնորհիվ կարող ենք նպաստել գործող օրենսդրության կատարելագործմանը:

Գովելի է, որ հեղինակը տարբեր հայ մտածողների աշխատությունների ուսումնասիրության հիման վրա գիտական բարձր մակարդակով տալիս է ընտանեկան հարաբերությունների պատմական զարգացման համառոտ ակնարկ: Բնութագրվում են ընտանեկան հարաբերությունները ավատատիրական Չայաստանում, հայ նահապետական ընտանիքը, ներկայացվում հին Չայաստանում գործող սովորույթային-իրավական և աշխարհիկ նորմերը, որոնք սահմանում էին անուսնության օրինականացման պայմանները, ծիսական կարգերը, ձևերը, անուսնության դադարման եղանակները, որոնց զգալի մասը պահպանվել է նույնիսկ վաղ ավատական Չայաստանում: Ապա ներկայացվում է անուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորվածությունը հայ կանոնական իրավունքով: Անդրադարձ է կատարվում նաև հայ ազգային դատաստանագրքերին (Դավիթ վարդապետ, Մխիթար Գոշ, Սմբատ Գունդստաբլ), որոնցում առանձին դրույթներ են նախատեսված նաև ընտանեկան հարաբերությունների մասին:

Նույն գլխում հեղինակը ժամանակագրական կարգով ներկայացնում է Արևելայն Չայաստանում ընտանեկան հարաբերությունների կարգավորվածության հարցերը:

Գրքի առավելություններից է այն հանգամանքը, որ գիտնականն առավել մանրամասնությամբ է ներկայացնում հորհրդային Չայաստանի ընտանեկան իրավունք-

քը: Ընդ որում՝ նախ մանրամասն նկարագրվում է ընտանեկան հարաբերությունները կարգավորելու նպատակով հորհրդային Ռուսաստանի 1918թ. «Քաղաքացիական կացության ակտերի, անուսնական, ընտանեկան և խնամակալական իրավունքի օրենսգիրքը», 1927թ. «Չայկական ԽՍՀ անուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգիրքը», 1969թ. «Չայկական ՍՍՀ անուսնության և ընտանիքի օրենսգիրքը»: Միաժամանակ ներկայացվում են այդ ժամանակաշրջանում ընդունված մի շարք կարևոր իրավական ակտեր, որոնք էականորեն փոխել կամ լրացրել են գործող օրենսգրքերի դրույթները:

Հեղինակն առավել մեծ ուշադրություն է դարձնում ընտանիք ֆեոդալիզմին, կարծիք հայտնում, որ ընտանիքն ուսումնասիրվում է գիտության տարբեր ճյուղերի կողմից, որն էլ դժվարացնում է «ընտանիք» հասկացությանը մեկ ընդհանուր բնորոշում տալը, որ ընդունելի լինի տարբեր գիտությունների, այդ թվում՝ իրավագիտության համար: Ավելին, իրավագիտության տարբեր բնագավառներում ընտանիք հասկացությունն ընկալվում է տարբեր առումներով: Այդ հանգամանքը բացատրվում է հասարակական կյանքում ընտանիքի ունեցած տարբեր դերերով: Այդ է պատճառը, որ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը նույնպես իրավաբանական իմաստով չի տալիս ընտանիք հասկացության բնորոշումը, սակայն նրա նորմերը հնարավորություն են ընձեռում ոչ միայն մեկնաբանելու ընտանիք հասկացությունը, այլև որոշելու այն անձանց շրջանակը, ովքեր ընդգրկվում են ընտանիքի կազմի մեջ:

Հեղինակը նաև բացատրում է, թե որոնք են ընտանիքի առաջացման հիմքերը, և բավարար մանրամասնությամբ ներկայացնում է, թե ինչ են ազգակցությունը և բարեկամությունը (խնամիությունը), ներկայացնում դրանց իրավաբանական նշանակությունը:

Առավել հետաքրքիր է կարդացվում գրքի **հիմնգերոդ** գլուխը, որը նվիրված է ա-

մուսնություն հասկացության սահմանմանը, ամուսնության կնքման պայմանների և ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների վերլուծությանը:

Բացի այն, որ ներկայացված նյութը գրված է պարզ և հասկանալի գիտական լեզվով, օգտագործված է ընդարձակ մասնագիտական գրականություն, զովելի են նաև հեղինակի մեջբերումները գեղարվեստական գրականությունից, մասնավորապես ամուսնության վերաբերյալ Շոպենհաուերի, Օ. Բալզակի, Ա.Ս. Մակարենկոյի, Շեքսպիրի, Ա.Պ. Չեխովի և այլոց ասույթները:

Հեղինակն անդրադարձել է նաև ամուսնության անվավերությանը, դրա նշանակությանը և հետևանքներին: Այս գլուխը բովանդակում է մի շարք օրինակներ դատական պրակտիկայից, ինչն ավելի է հարստացնում գրախոսվող աշխատանքը:

Առանձին գլուխներով ներկայացվում են ամուսինների ինչպես անձնական, այնպես էլ գույքային իրավունքներն ու պարտականությունները: Հեղինակը նախ ներկայացնում է ամուսինների անձնական իրավունքների առանձնահատկությունները, ապա թվարկում նրանց անձնական իրավունքների տեսակները: Հատուկ լուսաբանվում է ամուսնական ազգանուն ընտրելու իրավունքը:

Ներկայացնելով ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները՝ պրոֆեսոր Գ.Ղարախանյանն առանձնացնում է ամուսիններից յուրաքանչյուրի անձնական և համատեղ գույքի կապակցությամբ առաջացող հարաբերությունները, մանրամասնում է դրանց բովանդակությունը, ամուսինների համատեղ գույքը բաժանելու կապակցությամբ առաջացող հարաբերությունները, ինչպես նաև ամուսինների պատասխանատվությունը՝ իրենց համատեղ և անձնական պարտավորություններով:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքն առաջին անգամ թույլատրում է ամուսիններին կնքել ամուսնական պայմանագիր իրենց

գույքային հարաբերություններն ինքնուրույն կարգավորելու նպատակով: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել ամուսնական պայմանագրին, պարզաբանել դրա հետ առնչվող բոլոր հարցերը: Այդ առթիվ հեղինակի շարադրանքը համեմված է ոչ միայն արտասահմանյան որոշ երկրների օրենսդրությունների վերլուծությամբ և մեջբերումներով:

**Ութերորդ** գլխում Գ.Ղարախանյանը մատչելի ներկայացնում է ամուսնության դադարում հասկացությունը, դրա եղանակները և իրավական հետևանքները: Մանրամասն բացատրվում է ամուսինների կենդանության օրոք ամուսնության դադարման ապահարգանի եղանակները ինչպես ՔԿԱԳ մարմիններում, այնպես էլ դատական կարգով: Այս առթիվ շարադրանքը նույնպես աչքի է ընկնում օտարերկրյա օրենսդրությունների հետ համեմատական վերլուծական դատողություններով, ՀՀ դատական պրակտիկայից և մամուլից բերված օրինակներով, ինչն անկասկած բարձրացնում է աշխատանքի արժանիքները:

Առանձնահատուկ է **իններորդ** գլուխը, որտեղ հեղինակն անդրադառնում է երեխայի սերման հաստատման հարցերին, հայրության և մայրության իրավական ինստիտուտներին, հայրությունը կամավոր ընդունելու և հայրությունը դատական կարգով որոշելու հարցերին, ինչպես նաև հայրությունը և մայրությունը դատական կարգով վիճարկելու հիմքերին ու կարգին: Ներկայացվում է ՀՀ օրենսդրության մոտեցումները այդ հարցերի վերաբերյալ, նրանում տեղ գտած նորամուծությունները նախորդ օրենսդրությունների համեմատ, ուշադրություն է դարձվում օրենսդրության մեջ առկա որոշ թերությունների և առաջարկվում վերացնել դրանք:

Գրախոսվող գրքի **տասներորդ** գլխում հեղինակը ներկայացնում է անչափահաս երեխաների իրավունքները: Որպես նորամուծություն դրական է համարվում, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքում առաջին ան-

### **ԳՐԱԽՈՍԱԿԱՆ**

գամ նոր գլուխ է նվիրվել անչափահաս երեխաների իրավունքներին, ինչը վկայում է երեխային՝ որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ դիտարկելու ՀՀ օրենսդրության մտեցման մասին: Մանրամասն վերլուծվում է անչափահաս երեխաների ընտանեկան օրենսգրքով ամրագրված անձնական իրավունքները՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, երեխայի պաշտպանության, անվան, ազգանվան և հայրանվան իրավունքը, ծնողների և այլ ազգականների հետ շփվելու, կարծիք արտահայտելու երեխայի իրավունքները: Առանձին պարագրաֆով նշվում է նաև անչափահաս երեխաների գույքային իրավունքների մասին:

**Տասնմեկերորդ** գլուխը նվիրված է ծնողների ու զավակների անձնական իրավունքներին ու պարտականություններին: Պակաս կարևոր չէ իմանալ, թե ՀՀ օրենսդրությամբ ինչպես է կարգավորվում ծնող-զավակ փոխհարաբերությունները: Առավել ևս, որ այսօր միջազգային հանրության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից է երեխայի իրավունքների պաշտպանությունը: Իսկ այդ հարցում առաջնային և կարևորագույն դերը վերապահված է հենց ծնողներին: Ծնողական պարտականությունների պատշաճ կատարումից է կախված երեխայի բարեկեցիկ ապագա ունենալը: Հեղինակը բավական տեսական գրականության, ՀՀ-ի, այլ երկրների օրենսդրության ու դատական պրակտիկայի ուսումնասիրության ու համալիր վերլուծության հիման վրա պարզ և հասկանալի գիտական լեզվով ներկայացրել է ծնողների ու զավակների միջև անձնական փոխհարաբերությունների ընդհանուր բնութագիրը, երեխայի անուն, ազգանուն և հայրանուն տալու և երեխայի քաղաքացիության հետ կապված հարցերը:

Գրախոսվող աշխատության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում երեխային

դաստիարակելու ծնողների իրավունքներին ու պարտականություններին վերաբերող պարագրաֆը, որտեղ հեղինակը բացահայտում է ծնողների՝ երեխայի դաստիարակության իրավունքը և պարտականությունը: Անդրադարձ է կատարվել նաև երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վրա հասնող իրավական հետևանքներին, մասնավորապես ծնողական իրավունքներից զրկելուն, հիմքերին, կարգին և պայմաններին, ծնողական իրավունքների սահմանափակմանը և դրա հետևանքներին:

Խիստ արդիական են ալիմենտային պարտավորություններին վերաբերող հարցերը: Դրանց նվիրված գլուխում նախ բնութագրվում են ալիմենտային պարտավորությունները և դրանց առանձնահատկությունները, ապա առանձին պարագրաֆներով ներկայացվում են ծնողների և զավակների, անուսիների, նախկին անուսիների և ընտանիքի մյուս անդամների ալիմենտային պարտավորությունները, ալիմենտ վճարելու և բռնագանձելու կարգն ու պայմանները:

Ներկայումս, թերևս, ամենակարևոր հիմնախնդիրներից է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրը: Այս առումով չափազանց կարևոր է գրախոսվող գրքի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության ձևերը» վերնագիրը կրող **տասներեքերորդ** գլուխը, որում առանձին պարագրաֆներով վերլուծվում են որդեգրման հարաբերությունները, խնամակալության (հոգաբարձության) հարաբերությունները, ինչպես նաև երեխային խնամատար ընտանիքում տեղավորելու կապակցությամբ առաջացող հարաբերությունները: Այդ առումով հիշատակության արժանի են պետության ձեռնարկած միջոցառումները ինչպես սոցիալական ոլորտում, այնպես էլ իրավական դաշտ ստեղծելու գործում: Վերջինի մասին վկայում են Հայաստանի Հանրա-

պետության կողմից մի շարք միջազգային կոնվենցիաների վավերացումը, մասնավորապես **«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989թ. Կոնվենցիան, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցման մասին» Հաագայի 1980թ., «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի 1993թ. Կոնվենցիաները** և այլն, որոնց կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք պարտավորություններ: Բացի այդ, ընդունվել են նաև մի շարք ներպետական ակտեր:

Իր առանձնահատկությամբ աչքի է ընկնում գրախոսվող գրքի նաև **տասնչորսերորդ** գլուխը, որը նվիրված է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չու-

նեցող անձանց մասնակցությամբ ընտանեկան հարաբերությունների նկատմամբ ՀՀ ընտանեկան օրենսդրության կիրառմանը: Պետք է նշել, որ այս ոլորտում Հայաստանի Հանրապետությունը դարձյալ վավերացրել է միջազգային պայմանագրեր և ստանձնել որոշ պարտավորություններ:

Այսպիսով, պրոֆեսոր Գեղամ Հակոբի Ղարախանյանի հեղինակած գրախոսվող գիրքը իր կառուցվածքով, ծավալով, բովանդակությամբ, ինքնատիպ մեկնաբանություններով ու դատողություններով, անշուշտ, հարստացնում է հայ իրավագիտության արժեքավոր աշխատությունների շարքը: